

Բ Ա Գ Ի Ն

Թ. ՏԱՐԻ 1970 ԱՊՐԻԼ
digitised by A.R.A.R.@

ԹԻԻ 4

باکین
 مجلة شهرية ، أدبية وفنية علمية
 مدير المسؤول
 السيد ارتين كارتنيك فزانجيان

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE
 Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN

բւգին
 ԱՄՍԱԳԻՐ
 ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
 ԵՆ ԱՐՈՒԾՅԵՒ

Վարիչ խմբագիր
 Կ. ՍԱՍՈՒՆԻ
 Խմբագիր
 Ք. ՄԵՂՅԱՆ

Խմբագրորո՞թեալ
 ԱՆԴԱՄՆԵՐ
 Յ. ԳԵՂԱՐԳ
 Յ. ՈՍԿՈՒՆԻ
 Բ. ՓԱՓԱԶԵԱՆ
 Ն. ՊԱՐԲՆԻՅԱՆ
 Ժ. ԱԹՔԱՐՅԱՆ
 Հոսանքի աւելացնել
 † ՆԻ. ՊՅԵԱՅԵԱՆ

ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

- Ա. ՀԱՅԿԱԶ
- Յ. ԳԵՂԱՐԳ
- Բ. ԿՈՍՆԵԱՆ
- Ն. ԶԱՐԻՈՒՏԵԱՆ
- ԱՐՇԻ
- Ս. ՍԱՆԻՆԵԱՆ
- Թ. ԳԱՌՕՆԵ
- Տ. ՈՍԿՈՒՆԻ
- Բ. ԵՂԻԱՅԵԱՆ
- Լ. ՄԿՐՏԶԵԱՆ
- Ն. ՊԵՇԻԿՈՒԱԼԵԱՆ

Խմբագրութեան Խաղէ

G. SASSOUNI
 Rue Sélim Boustani,
 Beyrouth-Liban

Հեռագրային թիւ 296898

Բազմը

ԱՆՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Թ. ՅԱՐԻ. ԲԻՒ 4

ԱՊՐԻԼ, 1970

ՊԷՇՐՈՒԹ


ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ

Ե Ր Բ Ձ Մ Ե Ռ Գ Ա Յ

Մեր տունին արեւմուտք նայող պատին ստիկ, մօտ մէկ մեթր լայնութեամբ ու վեց մեթր ալ երկարութեամբ հողամաս մը ունիմ: Օրուան մեծ մասը, քովի բարձր շէնքին պատճառաւ, թանձր շուք կը տիրէ հոն, ու աճէն մարդ դիտէ, թէ կարգ մը բոյսեր լաւ՝ կամ բնաւ չեն աճիր շուքի մէջ: Այդ է պատճառը, որ հոն, այդ նեղ հողաշերտին վրայ, երկրորդական արժեքով ու շատ հոգածութիւն չպահանջող բոյսեր եմ անկած:

— Նթէ ապրին՝ լա՛ւ, եթէ մեռնին՝ այդ ալ իրենց դիտնալիք բանն է, — բնած եմ ես ինձի:

Տարի մը, վաղ գարնան, — յամենայն դէպս Ձատիկէն ետքն էր — երբ ծառերու պտուկները պայթելու վրայ էին, օւ թռչունները մեծ եռանդով բոյն կը նորոգէին, երբ արեւէն տաքցած հողը շոգի կ'արձակէր, գլուխս ու կուրծքս քայ, գուրս ելայ՝ հոս ու հոն քիչ մը աշխատելու հողին վրայ: Աճէն բան կ'անէր ու կը խլրտար: Աճէն կողմ ծիլ՝ ու հոս ու հոն ալ՝ ծաղիկ: Արեւմուտք նայող հողաշերտիս վրայ ալ՝ երկու-երեք մատնաչափ հասակով բաներ մը:



— Աս ի՞նչ է, — Հարցուցի ինքզինքիս, ու, վար ծուկով, անոնցմէ մէկ Հատը մատներովս շօշափեցի:

— Հը՛մ... Անպատճառ մոլեխոտ է, որ ես չեմ ճանչնար, ու վիզէն բռնելով՝ քաշեցի փխրացած Հողէն դուրս:

Դեղնադոյն, երկար ու ճիւղաւորուած արմատին փակած՝ Հողէն դուրս եկաւ կռնած, մեծկակ մնացորդը այն Հունտին, որմէ ծնած ու ծլած էր այդ անծանօթ բոյսը:

Հաւ մը քննեցի: Զարմանալի է, կաղինի կը նմանի, ըսի ինքզինքիս: Փայտի ներս, Հողոս մատներով բացի բուսական Համայնագիտարանը ու կարգացի կաղին բառին առջեւ գրուած նկարագրականը:

Ձէի սխարած ենթագորութեանս մէջ: Այդ բոյսը կաղին էր: Ամէն բան կը Համապատասխանէր գրքի նկարագրականին: Մատղաշ տերեւներուն գոյնը, ձեւը, եզերքներուն սղոցը, ափի ջիղէ՛րը...

— Բայց ուրկէ՞ որ, — կրկին Հարցուցի ինքզինքիս, — Հում կաղինը ուրկէ՞, ինչպէ՞ս ինկաւ այս Հողին մէջ...

Մէլու Համար անպատճառ Հում ըլլալու էր: Ձեռք կրնար ենթադրել, թէ կերած պահերնու մեր կամ ուրիշի մը ձեռքէն Հաս մը երկուք թափեցան... Մենք միշտ խորովածը կ'ուտենք... Եթէ նոյնիսկ Հում զննեք զանոնք, տիկինը, փուռը գրած՝ լաւ մը կը խորովէ, մինչեւ որ գոյններին փոխուի քիչ մը, շափկինին Հաննն ու դառնան բուրումնաւէտ:

Այս միտքերուն մէջ էի, երբ նայուածքս ինկաւ ցանկապատին վրայ, սղոցը կանակն առած ու ետեւի ոտքերուն վրայ նստած սկիւռին, որ իր սեւ, ուլունքանման աչքերով, ինծի կը նայէր:

— Շուտի՛կ, դո՛ւն անկեցիք այս ծառը... Բայց ուրկէ՞ ճարեցիք Հունսը... Ճիշդ է, դիմացի ծառուղիի ամբողջ երկայնքին կաղնիներ կան, բայց աս բուսածը կաղին է, կաղնի չէ՛...

Մտայ տուն ու Հարցը դրի ինձմէ աւելի խելացիի Համբաւ ունեցող կնոջըս առջեւ:

— Կուշտի մեր Հողին վրայ, պատին տակ, կաղնիի ծառեր կան բուսած: Ես չեմ տնկած զանոնք: Խելքս չհասաւ, թէ Հունսը ինչպէ՞ս է Հոն ինկած:

— Սկիւռներն են տնկած:

— Ես ալ այդպէս ենթադրեցի, բայց անոնք կաղինը ուրկէ՞ դասն:

— Ատ ալ խորհելու բա՞ն է, դրացիներդ տուած են:

— Դրացիներս եթէ կաղին գանեն՝ իրենք կ'ուտեն, — ըսի:

— Ամէնքը՝ բացի Աջաթնիերէն: Անոնք տուն մտայ են ու մայրական սէրերին, մայրական բնազդին կը գոհացնեն անասուն պահելով ու անասուն սիրելով... Ի՞նչ պէտք ունին չորս կատու, երկու շուն, թութակ մը, ու տաշտ մը ձկնիկ պահելու... կարծես այս բոլորը բաւարար չըլլային, դեռ փողոցի կատուններն ալ կը կերակրեն:

— Հոս փողոցները անտէր կատու կա՞յ որ, — Հարցուցի:

— Ես անտէր կատու կայ չըսի:

— Հապա ի՞նչ ըսիր:

— Ըսի, թէ փողոցի կատուններն ալ կը կերակրեն:

— Աղէկ, կարճ կապենք, ես սխալ եմ Հասկցեր:

— Օր մը, Վիտր — մեծը — ըսաւ, թէ չորս տեսակ ԵՐՔ — ընկոյզեղէն — կը պահեն: ՆՐՔ մըն ալ՝ իրենք (ԵՐՔ տնդիւրէն բառը, տեղին Համեմատ կը նշանակէ ընկոյզ կամ յիմար): Ըսաւ որ չորս տեսակ կը պահեն

որ բերանփոխ ըլլայ, չձանձրանան... Աստուած իմ, այսքան ալ յիմարու-
թի՛ւն... Դուն կեանքիդ մէջ նման ապուշութիւն տեսած էիր:

— Չէ՛, չէի տեսած, չէի լսած, բայց ահա տեսայ ու լսեցի, լուսա-
բանուեցայ: Վիտլը ըսա՛ւ, թէ ինչ տեսակ ցըթնը են բերանփոխի համար ի-
րենց ընտրածը:

— Ընկոյղ, կաղին, նուշ, պիստակ:

— Ահա՛, գաղտնիքը լուծուեցաւ, — ըսի:

— Նորէն ինձի աղօթէ, եւ, ասկէ ետք, երբ խելքի, խորհուրդի պէտք
ունենաս, քովս եկուր: Այդքան պզտիկ բան մը մինակդ չկրցար լուծել: Ու
դեռ ելեր խելքիս չես հաւնիր, պզտիկ է-մզտիկ է կ'ըսես:

— Իրաւունք ունիս, — ըսի, — ասկէ ետք, երբ խելքի պէտք ունե-
նամ՝ քովդ կու գամ, ու խելքիդ համար պզտիկ է-մզտիկ է ըսելուս համար
այ՛ ներողութիւն կը խնդրեմ. միայն թէ... —

— Միայն թէ, ի՞նչ:

— Միայն թէ, կը վախնամ, որ եթէ ունեցած քիչդ ալ ինձի տաս, քե-
զի բան չի մնար...

— Այ հետս մի խօսիր, — ըսաւ նեղուած:

Սահմանն անցեր էի: Նեղուեցաւ:

— Ե՛, կատակ ըրի, դուն կատակ չե՞ս հասկնար...

Հաշտուեցաւ:

— Եթէ՛ գիտնալէդ որեւէ օգուտ կայ, դիտցիր նաեւ, թէ անոնք եր-
կընքի աղանձիներն ալ կը կերակրեն, անոնց համար ալ կորեկ կը գտնեն,
— ըսաւ:

— Իսկապէ՛ս... Հետաքրքրական է դիտնալ, թէ այդ բոլորը մէ՞կ
քրոջ դործն է, թէ ոչ՝ երկուքին ալ հաւանութեամբ է, որ տեղի կ'ունենան
այդ անասնասիրական զոհողութիւնները:

— Այդ մասին բան չեմ գիտեր... Եթէ՛ շատ ես հետաքրքրուած, դնա՛
հարցուր իրենց:

Ձայնին մէջ նեղուածի շեշտ մը կար, խելքս չհասաւ, թէ այս բոլորին
մէջ ի՞նչ կար նեղուելու...

Բայց դիմացինս կին էր, չէ՞...

Սքաթները երկու քոյրեր են: Որք: Մայրերնին քանի մը տարի առաջ
մեռաւ: Հայրերնին մենք չենք տեսած: Մեռած է շատ կանուխէն, մեծագու-
մար ապահովագրութիւն մը ձգելով ընտանիքին, որով ապրած են ու կ'ապ-
րին դեռ: Մեծ քրոջ անունը Վիտլէթ է, բայց բոլորը Վիտլ կը կան: Են իրեն:
Տափակ դէմքով, վրան ուղեով կոխուածի պէս տափակ դէմքով, միամիտ
աղջիկ մըն է: Փոքր քրոջ անունը Հելէն է: Սիրուն է, լեզուանի, կրակոտ:
Հեռաձայնի ընկերութեան մօտ, ինչ-որ վերահսկիչի անձնակազմի քարտու-
գարն է:

Երկու քոյրերն ալ հաւատարապէս բարեպաշտ են: Ամէն կիրակի, ձիւն,
ձմեռ, անձրեւ կամ մրրիկ, կ'երթան Սբ. Յարութիւն եկեղեցին պատարագին
ներկայ ըլլալու եւ խոստովանելու: Իրենց կ'ընկերանան, լաւ օղին, իրենց
կատուններն ու շունքը՝ անորակելի լրջութեամբ, պոչերնին կախած՝ կամ՝
կոնակներն առած: Երբ եկեղեցի հասնին, բակին մէջ համբերութեամբ կը
սպասեն, մինչեւ որ աղջիկները աղօթեն, խոստովանին, մաքրուին իրենց
բոլոր իրական ու երեւակայական մեղքերէն: Երբ վերջին անգամ խաչակըն-
քելով դուրս գան եկեղեցիէն, անոնք նորէն, նոյն կարգով, գուարթադէմ, կը
վերադառնան տուն, ուր կը կերակուին:

Եթէ պատահի որ ճամբան տեղ մը քանի մը բուռնի համար կանգ առնեն, ըսենք մեր տան առջեւ՝ Հետո քանի մը բառ փոխանակելու համար, շուտեք բերան մը հրկուք կը հաջնն այս անտեղի յայտարարան համար իբրեւ բողոք, ու կատուները կու գան աղեղուած կոնակներն Հեղինի նայլըններուն քրտել: Այն ատեն, այս վերջինը ներողութիւն կը խնդրէ ինձմէ, ու ձեռքով դանտնք ցոյց տալով կ'ըսէ:

— Անօթի են: Տուն երթալ կ'ուզեն: Կերակրուելու ժամանակներն է: Մնաք բարով:

Օր մը, երբ նորէն անոնց հետ խօսքի բռնուելէ ետք ժպտի մը հետքը դէմքին ներս տուն մտայ, տիկինը, որ ներսէն տեսած էր անոնց հետ խօսիլըս, ըսաւ.

- Բոլոր անթիքաներն ալ մեր դէմը կ'ելլեն:
- Անպնաս ու բարեպաշտ մարդեր են, ի՞նչ կ'ուզես իրենցմէ:
- Բան մը չեմ ուզեր, բան մը ուզած չունիմ:
- Մաքիդ մէջ բան մը կայ, բայց կը սքոռարանամ գուշակել:
- Էրիկ մարդ չէ՞ք...

~

Տարիներ, շատ տարիներ առաջ պատահած բաներ են այս պատմածներս: Անկէ ի վեր շատ փոփոխութիւններ տեղի ունեցան մեր ու մեր դրացիներու կեանքին մէջ: Վիտլիթը արկածահար եղաւ գիշեր մը: Ուշ ատեն, երբ Քրիստոսի խաչելութիւնը ներկայացնող շարժապատկեր մը տեսնելէ ետք տուն կը վերադառնար, ծառուղին կարած պահուն, մարդ չի գիտեր ինչպէս եղաւ, մէկը կտաքով զարկաւ գինք, ու ատանց ստուգելու, թէ խեղճ աղջկը ի՞նչ վիճակի մէջ է, փախաւ: Դէպքէն ետք, մէկը գտաւ զայն փողոցին մէջ արիւնշուայ՝ ու լուր տուաւ սասիկանութեան: Հիւանդատար կառքին վարիչը հաստատեց, թէ խեղճ աղջկան ծանր եղած էր վայրկեանական:

— Արդար էր, առանց տառապանքի, առանց մարգու վրայ բեր ըլլալու՝ մեռաւ, — ըսին ոմանք:

— Ըրած բարիքներն ու կատարած աղօթքներն ալ չօգնեցին, — եղբակացուցին ուրիշներ:

Անոր թաղումէն ետք, Հեղինի բախտը բացուեցաւ. ամուսնացաւ օրանաւերու վարորդ աղուոր երիտասարդի մը հետ, ու տունը ծախելով՝ միասին մեկնեցան մարդ չգիտցաւ ուր:

Շուններն ու կատուները տունին կենդանիներու պաշտպան ընկերութեան, որ անոնց համար լաւ, յարմար տուններ դանեն, ու, հակառակ պարագային, անասնմանք մահով մահացնեն զանոնք:

Եթէ Վիտլը ողջ ըլլար, կը ձգէ՞ր որ նման դէպք պատահէր...

~

Բաւական տարի անցաւ, մինչեւ որ մեր տան արեւմտեան կողմը գրանցուող պատին տակ աճող կաղինի թփիկները մեծցան ու ծառ գարձան: Օր մըն ալ տեսայ որ ծաղկեր են ու պտղաբերուեցան:

Աչնան գէ՛մ, երբ խորհեցայ որ անոնք լաւ մը հասունցան, ժողովեցի, ու պարկը ձեռքս խոհանոց մանելով, ըսի կնոջս.

— Բաւական կայ: Աւելի շատ կ'ըլլար, եթէ առ անիծուած սկիւտները

չգողանային կէտը... Այսինքն թէ, եթէ սպասէի, քանի մը օրէն, բոլորք կը տանէին:

— Շատ մի տեսներ, Նկատի ունեցիր որ տեսնոյ էին ծառերը անկողնները:

— Բայց այսքան տարի է գտնուող ինձուզը ես էի:

— Ասա տարբերութիւն չ'ընենք:

— Ի՞նչ կ'ըսես, իսկով երախտագիտութիւն յայտնող նամա՛կ մը գրուած իրենց...

— Աէ, նամակի պէտք չկայ, բայց ընդունէ, որ տեսնոյ կը պարտօսում էին քանի:

— Աղէկ, ո՞ւր գնեմ գտնուող:

— Լուս մը հասած, չորցա՛ն էն:

— Հասնիլը հասած էն, բայց չեն չորցած:

— Տար, տրեւ լուս, որ չորան, այլապէս կը բարբոսին:

— Գուրջ փոխմ, որ գտն մնացածն՝ ըն ալ տանին...

— Ընկու քան մը չունին: Գիրք մը առ, աթոռ մը առ՝ ու գնա փոստիկ քով նստէ:

Գիրք մը առի ու գացի տրեւում տակ, աչքս մէկը կ'ընթաց, միւսը՝ կաղնիներուն վրայ:

Քանի մը անգամ, լուս ու մունջ, սաքարնուն մասին վրայ կոխելով գողեր կկան, բայց վտոտեցի գտնուող: Սկիւնները տանկաներու ցնկակից էն: Չեմ սիրեր գտնուող: Եթէ միջոց գտնեմ ու գտնուող մաքրագործեմ, ալ կնախ լեզուէն չեմ ազատիր: Կարծեմ լուսագոյն մեւր գտնուող ծուլողը մկէ ու տեսաւ տանելով Հոն թող տան է:

∴

Չմեռն անուար եղաւ այդ տարի: Ո՛չ միայն յանախ ու տատա ձին տեղաց, այլև բեւեռային ցուրան ու մրրիկը պահառ չեղան: Քաղաքացիներու թեան պաշտօնականները հապի յաջողեցան ութ օրէն քանալ հազարգանցու թեան վիսաւոր գիծերը: Յերկէլը բացուած ճամբան՝ գիշերը կը գոցուէր, ու գիշերը բացուածը, լուսնայէ առաջ, խափանուած կ'ըլլար:

Չիւնի ամէն մէկ հատիկ, որ առանձինն այնքան գիւրաբեկ ու նրբորէն անեղանգործուած ըլլալ կը թուի, գիշուելով ու բազմապատկուելով, պատուհաս դարձաւ: Առաջին քանի մը օրերը այնքան ալ գծուար չեղաւ դուռ ու տանիք մաքրելը. բայց վերջէն, քերուած ձիւնը գնկու կամ նեղու լու տեղ չգտանք, ու մնացինք շուտքան:

Օր մը օղը տաքցաւ ու ամէն քան սկսաւ հալիլ, կաթիլթիլ: Ուրախացանք: Բայց կէսօրէ ետք, Գանտառայէն ճամբայ կլամ պաղ օդի հոսանք մը հասաւ ու ամէն քան ստուցուց, քար դարձուց: Գործ տեսնել անհնար եղաւ: Քաղաքը լման մը անդամալուծուեցաւ: Գարդնները փակեցին՝ ու նամակատան ցրուիլը, որ ըստ դարաւոր աւանդութեան չ'ողմ, կրակ կամ մրրիկ՝ դալու էր, չեկաւ երեք օր: Հաց ու կաթ չկար՝ հազուադէպորէն քաց խոնութեան մէջ: Ուրախ եղանք որ կաթնկեր երեխայ չունէինք: Մեր միակ մխիթարութիւնն ու ժամանցը անթիլի ու հոռատեսիլի տափակ յայտագրերն էին: Գիշերները, տիրոջ մեծածաւալ լուսութեան մէջ, քամին մեր պատին տակ սպառնալիքներ կը կարդար. տունը կը զողոր հիմերէն, ապակեփեղկներուն վրայ եղիմալ կը թանձրանար ամէն բոլի, ու տունը բաւարար չափով տաքնելը կը զառնար անհետար:

Երբեմն, գիշերները, երկինքը կը պարզուէր, որովհետեւ քամին ամպերը հեռու տեղեր տարած կ'ըլլար: Այն ատեն վեր նայող մը կը տեսնէր, որ մութ կապոյտ խորքի մը վրայ բոլոր աստղերը ներկայ են իրենց տեղը, ու աւելի քան՝ փայլուն: Եթէ ուզէիր նոր աստղի մը համար տեղ մը գտնել անոնց մէջ, տեղ չկա՛ր...

Ու ձիւնի լոյսով ողորուած մարմար քաղաքին մէջ կարելի էր առանց ճրագի գիրք կարդալ:

— Գիտունները կ'ըսեն, թէ երկիրը տաքնալու վրայ է, — ըսի օր մը կնոջս, — ա՛ս է տաքցածը: Կարծեմ սառուցեալ դօտին մեր զոններուն հասնելու վրայ է. վաղը միւս օր կը պատէ մեզ, կը թաղուինք խորունկ սառույցին տակ, ու քանի մը հարիւր կամ հազար տարի ետք, եթէ դիպուածով հալի սկսիմք, մեզ կը գտնեն, ինչպէս մենք կը գտնենք նախապատմական օրերու մամուլները:

— Գէշ կ'ըլլայ, մեզ կը տանին թանգարան, — ըսաւ ան ծիծաղը զէմքին, — յետոյ, գիւտ մը ջրածի պէս, աւելցուց.

— Այսօր երեւակայութիւնը թեւ առած կը սաւառնի: Նստէ բան մը դրէ: Վաղը միւս օր, երբ օդերը տաքնան, պարտէզ կ'իյնաս ու ալ չես ուզեր դրէի, թուղթի վրայ նայիլ:

— Իրա՛ւ այդ օրը պիտի գայ, իրա՛ւ գարուն պիտի գայ... Դիւրի՛ն է այս պայմաններուն տակ նստած աշխատիլը. քանի օր է բանտարկուած եմ ու գլուխս խելք չկայ:

— Առաջ շա՛տ կար...
— Ձա՛յնդ...

Յիշեցի որ, տարիներ առաջ, Քիւրտիստանի լեռներուն մէջ այ նոյն բանը պատահեցաւ: Գարնան դէմ կատղեցաւ ձմեռը՝ ու մնացինք բանտարկուած: Բայց կեանքը բոլորովին տարբեր էր հոն: Հոն ուրախ կ'ըլլայինք բանտարկուելով կարճ ժամանակ մը եւս, որովհետեւ բանտարկուելի՛ հանդիլի ընել էր: Գոմերու դաղջ, ծոյլ ու հանելի մթնոլորտին մէջ գտնուիլը ինքնին երջանակութիւն էր, երբ դուրսը քամին կ'ոռնար ու ձիւնը մինչեւ խրճիթներու տանիքներուն կը հասնէր: Այն ատեն դայիերը լեռնէն վար իջնելով՝ գիւղ կու գային անցորդ մը կամ դիպուածով դուրսը մնացած շուն մը պատտաւուն համար: Այն ատեն Մասօն, դրան ճեղքէն դուրսը լեռնայող ձիւնին նայելով՝ կ'ըսէր, թէ «գարնան ցանը դիւրին՝ ու աշնան առատ պիտի ըլլան»: Յետոյ լիարուտն կը կերակրէր կենդանիները, կը մաքրէր դո՛ւր եւ օճախին ճարճատող կրակին դէմ նստած՝ կ'ունկընդորէինք լօպան Հիւսէյնի դաւալին՝ կամ ուրիշ ծայնեղ տղա մը լաւագնիւրով: Այն օրերուն, եթէ այնքան տղէտ ու անփորձ չըլլայի, այսօր ինչե՛ր բերած կ'ըլլայի հետս... Մե՛ղք:

Մրբիկի դադարումէն ետքն ալ, աղուէսի ու առհասարակ կաքաւի որսի երթալ կար: Բաներ՝ որոնք հանելի նորութիւն էին ինձի համար: Այս բոլորէն ետքն էր, որ կու դար գարունը: Կու գային տաք հովերը, կու գային հալող ձիւնէն հարստացած լեռներէն կարկաչելով հոսող գուլալ ջուրերը, տաքուկ անձրեւները, գալտերու ծաղիկները, երկինքէն առանց անպարանջի անցնող սպիտակ ամպեր՝ ու համայնատարած կանաչ գորգերուն վրայ՝ ծաղիկնե՛ր, ծաղիկնե՛ր, ծաղիկնե՛ր:

Կը կարծեմ, թէ ձեռարուեստները — քանդակագործութիւն, նկարչութիւն, ու նման բաներ — սկսան, երբ նախամարդը ընտանեցուց կարգ մը կենդանիներ ու՛ հովիւ մը նշանակեց անոնց վրայ: Այն ատեն հովիւը իր ձանձրոյթը փարատելու համար սկսաւ նաշխել իր ցուղը ու վերջն ալ՝ իր

բնական զարայրին պատերը: Գրականութիւնն ալ սկսած է անպայմանօրէն բանաստեղծութեամբ: Քիւրտերը զիր շունին, գրուած գրականութիւն ալ շունին, բայց բանաստեղծութիւն անպայման որ ունին: Հոն շատ մը երգեր եմ լսած ու դժբախտարար մտոցած: Մէկ հատ մը սակայն, դեռ կը յամենայ յիշողութեանս մէջ: Կը թարգմանեմ զայն, գիտնալով հանդերձ, որ շատ բան կը կորսնցնէ իր յանգէն ու հետեւարար իր երաժշտական կառոյցէն:

Բարձր լերան կատարին	Առաջ՝ եարիս սիրելի
Ձիւնի խոշոր շերտ մ'էի.	Սրտահատորն իս էի,
Փանի տաք հովը փչեց	Հիմա հեռու եզերքէն
Արցունք, արցունք հալեցայ	Կարօտագին դիտող մ'եմ:

Առաջին տունին գեղեցկութիւնը ըմբռնելու համար՝ մարդ տեսած ըլլալու է, թէ բարձր լերան կատարին ձիւնը ի՞նչ ձեւ կը սկսի հալիլ, ու յաջորդ շրջան առողերը ապրելու, ըմբռնելու համար ալ, պէտք է սիրուած, մերժուած ու մորմոքուած ըլլալ:

Այդ օրերուն, երբ շուրջս միայն լեռ էր ու անսահման տարածութեամբ դաշտեր, երազած եմ ծովի մասին: Ծովը ազատութիւնը կը խորհրդանշէր ինձի համար: Ինչո՞ւ, — չեմ գիտեր: Ծով չէի տեսած, բայց զայն կ'երազէի: Երբ արտերը ծլեցան ու արտերու սրճադոյն գուղձերուն մէջէն ծլող ցորենի շերտերը վեր՝ արեւուն նետուեցան, երբ անոնց հասակը թիղ մը բարձրացաւ, օր մըն ալ նշմարեցի, որ հովը ալիք կը դնէր անոնց մէջ ու ես խորհեցայ ծովու մասին: Քանի մը ամիս ետք, երբ բոքր արեւն ու ջերմ անձրեւները ծծելով հասկերու հոսակը բարձրացաւ ու գոյն փոխեց, անոնք նորէն ալիքաւորուեցան ու ես նորէն խորհեցայ ծովու մասին. ծովու անծայրածիր հորիզոնին ու ազատութեան մասին:

Այս բոլորէն կարելի է եզրակացնել, թէ հոն, իմ շատ մը բախտակեցներուն նման անտէր ու թշուառ չէի: Եստ հաճելի օրեր եմ անցուցած ու զխէս շատ բան է անցած:

Անգամ մը, երբ Գարաճավերան էի, Մարտ ամսուն մէջ կեղծ գարուն մը ունեցանք: Տանտիրուհիս, Ձէյնէպը, խտրուեցաւ: Կարծեց, թէ գարունը եկած է: Առնելիք մը գանձելու համար Տիվրիկ դնաց: Երթալէ առաջ դիտ կանչեց քովը ու պատուիրեց, որ գիշերները իրենց տունը պատկիմ ու աչքս պահեմ իր ջահիլ հարսին՝ Ալմասի դրայ:

Ալմասի ամուսին Իպօն Իբրահիմը գիտուոր էր: Կ'աշխատէր Ազգիլի քաղաքի մէջ ու յաճախ երկար ժամանակով կը բացակայէր տունէն:

— Ձահիլ է ու գողալ, — ըսաւ Ձէյնէպ աչքերուս մէջ նայելով, — ետեւէն ինկող շատ կայ: Երբ վերադառնամ, կը վարձատրեմ քեզ: Վաղը չէ միւս օր կու գամ:

— Հոգ մի ընեք, ես եղբոր պէս կը հսկեմ վրան: Իր երթալէն ետք, խորհելով ինձ վիճակուած բախտաւորութեան վերայ, թէեւ դեռ մտքին մէջ որոշ չէր, թէ ի՞նչ էր այդ բախտաւորութիւնը, գողացի յուզումէս:

Մէկ բան որոշ էր սակայն: Ալմաս իրապէս զողալ էր: Գողայներուն ալ գողալը:

Ըսի արդէն, թէ ինքզինքս բախտաւոր կը զգայի ու յուզումէս կը գողացի: Ետեւայ ու հաշիւ պահանջեցի ինքզինքէս.

— Ի՞նչ կ'ըլլաս, Արամ... Ի՞նչ ես իրար անցեր...

Տունը, ուր պիտի պատկէի գիշերը Այմասի հետ, մտանէն զատ ուրիշ ստորաբաժանում չուներ: Հողէ յատակով, կալի մը շափ մեծ ու քառակուսի, բարձր առաստաղով սրահ մըն էր: Անոր հետաւոր մէկ անկիւնը գտնուող օճախը միշտ կը մխար: Լոյսը կ'ընդունէր տանիքի կեդրոնը գտնուած լայն բացուածքէ մը, ու տան հետաւոր անկիւնները, միշտ, կա՛մ խաւարի եւ կա՛մ կրտսմութի մէջ էին:

Նոյն օրը, կեսօրը մնաք բարով ըսել ու մեկնելէ ետք, բուկին մէջ Հանգիպեցայ Այմասին: Երբ մը չըթուներին, նրբահիւս մազերը հովին տուած, բազում կնքուն բազմաթիւ ապարանջանները զնգղնդացնելով, քովէս անցաւ:

— Կեցի՛ր, ո՛ւր կը վազես, — ըսի, — գիտե՛ս թէ մինչեւ կեսօրը Տիմիրկէն վերադարձը գիշերները քովը պիտի պատկիմ:

Անուշ-անուշ խնդաց:

— Քո՞վս, ծո՞ցս:

— Ինչե՛ր կ'ըսես... Ես ատանկ բան չըսի՛, — կարճրեցայ ես, — ձեր տան մէջ բսել կ'ուզեմ:

— Օ՛...:

— Կեսօրը չըսա՛ւ քեզի:

— Ըսա՛ւ, գիտե՛մ:

Բաժնուեցանք:

Բակին մէկ անկիւնը, արեւուն տակ երկար մնացած ու գունատած կոնդ մը կար, նստեցայ վրան ու ճակատս տաքուկ արեւուն տուած՝ մտածեցի: Այմաս ի՞նչ կ'ուզէր հասկցնել ինձի հարցնելով, թէ զգիշերը իր ծո՞ցը պիտի պատկիմ: Զէյնէպ չէ՞ր բաժնի իրեն, թէ ուր պիտի պատկիմ... Հաւանաբար, տարեց կինը, չգիտցնելու համար, թէ զիս հսկող կը նշանակէ իր հարսին գիշերներուն վրայ, զետեւէն շատեր եղողը իր ջանքի հարսին վրայ, ըստ, թէ շորպէս զի մինակ չըլլայ ու չվախնայ, կարգադրած է որ ես իրենց տունը պատկիմ:

Ինչո՞ւ համար սիրտս արագ կը բարբխէ, երբ այդ մասին կը մտածեմ... Ամէն անգամ որ Այմաս քովէս անցնի անապարանքով, — ան միշտ կ'անապարէ — կա՛մ բան մը կը զնգղնդայ իր վրայ, կա՛մ կրտսմութիւն մը կը թրթռայ: Իր աչքերը մեծ չեն, բայց շափազանց փայլուն ու արտայայտիչ են: Իր բերանը բարեճեւ է, լաւ գծուած: Իր չըթուները կարմիր են ու բարակ-կղակը՝ փոքր, սիրուն, ծոցը, օ՛, իր ծո՞ցը...

Ամիսներ ատալ, օր մը, տեսայ որ կուլար: Մեղքեցայ: Տխրութիւնը չէր վայելիւր իրեն: Ինձի թուեցաւ, թէ մէկը, զայն լացնելով, սրբապծութիւն էր գործած:

— Ինչո՞ւ կուլաս, — հարցուցի քովը երթալով:

— Բէնի տէկտի՛ւ, (ղիս ծեծե՛ց) ըսաւ:

— Ո՞վ:

— Կեսօրըս որդին:

Իպոյէն, իր ամուսինէն, բաժին չէր ուզեր ունենալ, ան իրեն չպատկանող բան մըն էր, կեսօրը որդին: Մէկ խօսքով, կ'ուրանար, կը մերժէր զայն:

— Ի՞նչ ըրի՛ր, ի՞նչ յանցանք գործեցիր, — հարցուցի:

— Բան մը չըրի՛րի՛ր, չե՛մ սիրեր զինքը: Կը նախընտրեմ մինչեւ առաւօտ կունակովս քար կրել, քան պատկիլ իր ծոցը:

Ան ատեն, իր այս դառն բողբոջ-խոստովանութիւնը լսելով՝ չզարմացայ, չմեղադրեցի զինքը: Իպոն, իր ամուսինը, որ մէկ երկու ամիսը ան-

զամ մը կարճ արձակուրդներով տուն կու գար, անհամակրեկի ախպար մըն էր: Բարտիի մը շափ երկար էր, տղեղ, մոխրագոյն կաշիով՝ ու թանձր, կախ ստորին շրթունքով մը, որ միշտ խոնաւ ըլլալ կը թուէր: Ձէք խօսեր, շէք ժողեր: Մարդոց աչքերուն մէջ նայելու կը վտինս՛ր կարծեօ, ու այդ իսկ պատճառով՝ զլուխը միշտ կախ էր: Այժման ըսե՛ս, մեր Սուրբ Ստեփանոս եկեղեցւոյ պատին վրայ զծուած աւետարեբ հրեշտակին ժանկունակ դէմքով՝ սիրունիկ մը: Տարիքն ալ՝ տասնեւփեցին ու տասնեւութին մէջ բան մը: Ինչո՞ւ զինքը տուեր էին այդ մարդուն, կամ, եթէ տուեր էին, ինք ինչո՞ւ առեր էր զայն՝ խելքս չհասաւ... Գեղին մէջ ուրիշ աւելի շնորհքով երիտասարդ չկա՞ր... Թող անոնցմէ մէկուն կամ միւսին հետ փոխէ՛ր... Ինք առաջինը սիրտի չըլլար այդ բանը ընող, ոչ ալ՝ վերջինը: Քիւրտիտասնի մէջ ընդունուած, օրհնքի կարգ անցած սովորութիւն է սիրած կամ հաւնածին հետ դիշեր մը փախիլ անհետանալը: Ու, ես կը կարծեմ, թէ դէշ սովորութիւնն մըն ալ չէ: Հայ ազգիկները փոխանակ տունը նստելով ձմեռած սիրածի տային շոր գետնին, հողին վրայ՝ արտամորմօք երգելով լալու, ազէկ կ'ընէին, եթէ անոնց պէս փախչէին իրենց սիրածին հետ...:

Ինչ որ է, Ձէյնէպի Տիվրիկ մեկնելէն քանի մը ժամ հաջ, յանկարծ օդը փոխուեցաւ, երկնքին վրայ սեւ ամպեր զիզուեցան, արեւիքէն ուժեղ քամի բարձրացաւ ու լեռնակատարներէն սկսող ձիւնամրրիկ մը շուտով իր ձիւնէ գորշ վարագոյրը ձորի ճամբով՝ գիւղ իջեցուց:

Բազին մէջ հանդիպեցայ Ալմասին, ու ճամբան գտնուող իր կեսրով մասին մտահոգութիւն յայտնեցի:

— Հող մի՛ ընե՛ր, անոր բա՛ն չըլլար, — ըսաւ զուարթ շեշտով մը, ու շորքայով մտաւ տուն:

Լաւ չեմ յիշեր, անցած օր է, բայց կարծեմ, թէ ի սրահ փափաքեցայ որ շուտ մթնէ ու փոթորիկը տեւէ երկար, շա՛տ երկար:

Փոթորիկը տեւէ երկար՝ որ Ձէյնէպ մնայ Տիվրիկի մէջ՝ բանտարկուած...:

Ու իբրաւ ալ, տեսց լման շորս օր:

Ային, անոնց սպասաւորը, նիհար ու նոյնպէս երկայնահասակ մանչ մը, կու գար առուօտ կանուխ. կը մաքրէր գոմը, կը կերակրէր ու կը ջրէր անասունները: կը պատրաստէր օրուան վառելիքայտը ու տանիքներու ձիւնն ալ քերակէ հաջ, կը ջանար համոզել Ալմասը, որ իր հետ պատկի:

— Ղոզդի՛կ, կորսուէ՛, շո՛ւն, — կ'ըսէր ծիծաղուն Ալմաս անոր թեւերուն մէջէն դուրս գալ ջանալով:

Օր մը, Ալի, տուն երթալէ տաջ՝ նայեցաւ վրաս ու ըսաւ, որ զես շատ բախտաւոր կեանքով մըն եմ:

Հարցական երեսը նայեցայ, բայց ան ալ բան մը չըսաւ, ու զլուխը կախած գնաց:

Կարճ օրը շուտով տեցաւ: Մրրիկը կ'ունար դուրսը ու, ոչ միայն չէր մեղմանար, այլեւ, իջնող մութին հետ կը սպառնար շունչ վատակիլ: Լեռներուն վրայ ձիւն շկար: Հոմը բոլորը հաւաքեց ու բերաւ լեցուց ձորին մէջ գտնուող մեր գեղը:

— Գրողը քեզ տանի, ի՞նչ է, մեզ ձորին մէջ թաղե՛լ կ'ուզես, — ըսաւ մութիւթար Բրահիմը, խօսքը երկնքին կամ ձիւնամրրիկին ուղղելով, երբ իրեն հանդիպեցայ փողոցին մէջ ու հետը քանի մը բառ փոխանակեցի:

Ձէյնէպի տան իբրեւ լուսամուտ ծառայող բացուած քին վրայ այնքան ձիւն զիզուեցաւ, որ տունը բոլորովին մթնեց:

Իրեկունը, երբ հերս մտայ, Ալմաս ճիշդ անոր տակ կայնած, սիրուն գլուխը ետ նետած, կը նայէր վեր: Օճախի թրթռացող բոցին լոյսով ա՛յնքան սիրուն ու սպիտակ էր այդ վիզը, որ համբուրելու եկաւ:

— Ամէն բան ծածկուած է, եթէ մէկը ուզէ դիտնալ, թէ ներսը ի՞նչ կ'ընենք, չի կրնար տեսնել, — ըսաւ:

Ճիշդ քովիկը կեցայ ու իրեն պէս, վիզս ետ ծռելով, նայեցայ վեր: Յետոյ նայեցանք իրարու աչքին մէջ ու գտցինք օճախին առջեւ, լուս նստելու:

Օճախին մէջ, ցերեկը Ալիին պատրաստած կաղնիի ճիւղերը հանդարտ բոցով մը կը վառէին: Այդ բոցը երբեմն կապոյտ էր, երբեմն նարնջագոյն, երբեմն ոսկեգոյն: Բոցերու գոյնին հետ կը փոխուէր նաեւ Ալմասի դէմքին ու վրի մորթին գոյնը: Ան՝ օճախի աջ կողմն էր նստած, ես՝ ձախը: Երկու համբերու կամ ամբողջական օտարներու պէս, որոնք բան մը չունին իրարու լուսնի, լուս էինք: Երբ վար նայէր, իր թարթիչներուն շուքը կ'իյնար այստեղուն վրայ:

Յանկարծ, մեղմ, շատ անուշ ձայնով մը երգել սկսաւ.

Տերսիմ, Տերսիմի մէջ է,
Վարդը սափորիմ մէջ է,
Աստուած պահէ Տերսիմը,
Սիրածս Տերսիմի մէջ է:

Եթէ բարեբախտ դիպուածով մը ըսել ուզէ, թէ զիր սիրածը օճախին առջեւ՝ իր քովն է, ի՞նչ բառեր կրնայ գործածել, որ յանգը միւս տողերուն յարմարի, մտածեցի, ու սկսայ մտքով այդ բառերը որոնել:

Չյաջողեցայ:

— Տխմար, եթէ նոյնիսկ այդպէս ըսելու ըլլայ, ի՞նչ պիտի ընեմ... Յետոյ քեզ ինչո՞ւ պիտի սիրէ... Սիրելու քերտ ազա՞յ չկայ...

Յանկարծ հազալ սկսաւ: Չարմանքով իրեն նայեցայ: Գիտէի, թէ պաղ չունէր:

— Պաղ եմ առեր: Կուրծքս պէտք է տաքցնեմ որ հազս անցնի, — ըսաւ աչքերու մէջ նայելով, ու սկսաւ հանդարտօրէն արձակել նրբօրէն անեղնադործուած ու մինչեւ իր վիզը հասնող էնթարիին ու շապիկին վերին երեք սատափէ կոճակները: Յետոյ, նոյն խաղաղ անտարբերութեամբ, աղանիի մը սպիտակ թւերուն նման ետ ծալլեց կտուր ու զոյգ ակները կրակին գէմ տաքցուցած, դուրսելու ձեռով մը դանդաղօրէն քալեցուց դուրս պտտեցող ծիծերուն վրայ ու աչքերու մէջ նայելով, ըսաւ.

— Մի՛ նայիր:

Բայց իր այդ ազդարարութիւնը ուշացած էր: Ես արդէն տեսնէի իր կուրծքին վրայ քալող ակներուն ետեւ լոյսի ու ստուերի մէջ կորած կորուսթիւնները ու անոնցմէ մէկուն ալ թուխ, պղտիկ չըլանակի մը մէջէն դուրս նայող պտուկը:

— Մի՛ նայիր:

— Չեմ նայիր, կ'ուզե՞մ որ գոցեմ աչքերս, կամ երթամ դո՞ւրս:

— Չէ՛, կեցիր հոս, բայց մի՛ նայիր:

— Չեմ նայիր:

Իր ակները կը քալէին հոս ու հոն, այդ խորհրդաւոր կորուսթիւններուն

վրայ, ու երբ օճախի կրակին դէմ տաքցուցած արեքը անոնց վրայ կը քա-
լեցնէր, հեշտանքի ու գոհունակութեան մալուքներ կ'արձակէր:

— Քեզի բան մը պիտի հարցնեմ, — ըսաւ:

— Հարցուր, — ըսի, ինձի շղատկանող պզտիկ ձայնով մը:

— Ինչո՞ւ համար, երբ կուրծքս պաղ է, ծիծերուս պտուկները դուրս
կ'ելլեն ու երբ տաքեան կ'ընկղմին, կը կորսուին:

— Ես ի՞նչ գիտնամ... Ես բժիշկ չեմ...

— Բժիշկ չես, բայց Փլայ ես, Փլաները ամէն բան կը գիտնան:

— Թերեւս: Բայց ես չեմ գիտեր:

Իր սիրուն, ժանկունակ դէմքը յուսախարութիւն արտայայտեց: Ես
դողալ սկսայ: Քիչ կը մնար ակուններս իրար զարնուէին:

— Քեզի ի՞նչ եղաւ, — հարցուց, աչքերը խոշոր-խոշոր բանալով:

— Ձեմ գիտեր: Կը մտիմ:

— Աւելի մօտեցիր կրակին:

Ներքին դողիս կրակն ի՞նչ ընէր:

— Օգուտ չ'ընէր, — ըսի:

— Ան ատեն զնա՛ պառկէ:

— Դո՞ւն:

— Ես ալ: Կրուիր վաղուայ համար պահեմ մոխիրին տակ, ես ալ կու
դամ:

«Ո՛ւր պիտի դայ», հարցուցի ինքզինքիս:

Եռտով տունը մնաց կատարեալ, ամբողջական խաւարի մէջ: Ձէի գի-
տեր, որ տխրի՛մ թէ ուրախանամ այդ բանին համար: Դատողութիւնս բը-
թացած էր: Լսեցի իր մեղմ ոտնաձայնը ու քիչ մնաց սիրտս թռէր իր վան-
դակէն դուրս:

Աստուած իմ, Աստուած իմ, Աստուած ի՛մ...

Ոտնաձայները մարեցան: Հատան:

Ձեկաւ քովս:

Թէ՛ ուրախացայ, եւ թէ՛ սրտաբեկուեցայ:

Թեւերս ծալլեցի յլիտա տակ, ու պառկեցայ կոնակիս վրայ: Առաս-
տողի կեդրոնի բացաւածքը, հակառակ ձիւնի թանձր խաւով մը ծածկուած
ըլլալուն, ազօտ կերպով մը իր քառակուսի շրջապիտակը ցոյց կու տար — թե-
րեւս ալ ինձի այդպէս կը թուէր — քիւերուն տակ սղքացող մբրիկի ոռնո-
ցէն դատ ուրիշ ձայն բռնել անկարելի էր: Լարեցի ականջներս՝ տեսնելու
համար, թէ պիտի կրնամ իր շնչառութեան աղմուկը ուղեղիս: Անկարելի
կղաւ: «Շատ հեռու է ինձէն», խորհեցայ: Յետոյ ջանացի դուշակել, թէ
ի՞նչ դիրքով է պառկած իր անկողինն մէջ: Երեւակայեցի ինքզինքս իր ծո-
ցը, տաքուկ վերմակին տակ, ու սիրտս, որ քիչ մը հանդարտած ըլլալ կը
թուէր, նորէն սկսաւ արշաւել: Յիմա՛ր ես, յանդիմանեցի ինքզինքս, խելք
չունի՞ս, ի՞նչ խոստացար Ձէյնէպին. «Հոգ մի ըներ, եղբոր պէս կը հսկեմ
վրան»: Եղբոր պէս հսկողի մտածումնե՞ր են մտածումներդ... Այժմասի
կուրծքը, օճախի լոյսով վարդապո՞յն էր թէ նորնջագոյն... Ինչո՞ւ չեմ կըր-
նար յիշել... «Ձահիլ է, շատեր իր ետեւէն են», ըսաւ Ձէյնէպ Տիվրիկ եր-
թալէ առաջ. որո՞ւ մտքէն կ'անցնէր, թէ Տիվրիկը կեանքիս մէջ այսքան
կարեւոր դեր կատարելու է օր մը: Ի՞նչ կարեւոր դեր, ի՞նչ պատահեցաւ
որ... Եթէ մբրիկը արգելք եղած չըլլար, հիմա Ձէյնէպ վերադարձած էր:
Լա՞ւ կ'ըլլար. դէ՞ջ կ'ըլլար... Յիմա՛ր աղջիկ, ես ի՞նչ գիտնամ, թէ ծիծե-
րուր պտուկները տաք եղած ատեն ինչու կը կորսուին... Կամ պաղ եղած ա-

տան դո՛ւրս կու գան. ես բժի՛շկ եմ, նման բաներու մասնադէ՛տ... Դեռ անոնցմէ մէկ հասին իսկ շեմ դպած, թէեւ ցանկացած եմ, քանի մը անգամ, անոնցմէ մէկուն կամ միւսին վրայ ձեռքս փակադիծի մը պէս փակել... Գտա՛ր նման բաներ հարցնելիք մարդո՞ւ, գտա՛ր... Եթէ ելլեմ ու քովը երթամ, ի՛նչ կ'ընէ: Կը վռնտէ՞ զիս: Պոռալով տունէն դո՛ւրս կը վազէ, թէ ոչ՝... Հապա եթէ նեղանայ ու լեռը դանուող իր հօր կամ տագրոջ՝ Եղգեթին գանդախի՛... Անոնք օր մը լեռ եղած պահուս կու գան քովս ու... Նոյն-իսկ պէտք չունի՛ն լեռը զիս բռնելու, կու գան գիշեր մը կ'առնեն տունէն, ու կը տանին ուզած տեղերնին, ու կ'ընեն ուղածնին... Հաշիւ պահանջողն ո՞վ է... Այս բոլոր բաները վախկոտ մը ըլլալուս համար չէ՞ որ կը հնարեմ... Ելլեմ, ոտքիս մասններուն ծայրին վրայ կոխելով, մուկի պէս լուռ, երթամ քովը, վերցնեմ վերմակին ծայրը ու... Երանի կարենամ դուռակել կող պարագային իր բռնելիք ընթացքը... Ամէն բան ասկէ է կախուած... Եկուր անգամ մը պաղարեամք նստինք ու հաշիւ ընենք: Դիտենք, թէ էրեկը, Իպօն, չի սիրեր: Սիրուելիք ալ բան չէ՛: Ես, թէ՛ աւելի երիտասարդ եմ, եւ թէ՛ սիրուն: Քիչ մնաց զաղուորք պիտի ըսէի... Աղուորութիւնը կը ներուն կը վայելէ, ինչպիսին Ալմասն է: Ըսաւ ինծի, թէ միպօն չի սիրեր՝ ու կը նախընտրէ անոր հօս եղած գիշերները կունակով քար կրել, քան պռակել անոր ծոցը: Այս բանը ինչո՞ւ ըսաւ ինծի... Կտրծես հրաւէրի հոտ կու գայ անկէ... Ըսել կ'ուզէր, որ եթէ ուզեմ... Օճախի կրակին զէմ տաքցուցած սիւրերը երբ կը քալեցնէր կուրծքին վրայ, հեշտանքի պղտիկ հառաչանքներ կ'արձակէր... Օր մը թերեւս նստի նման օճախի մը կրակին դէմ ու զրկի երեխային բերանը զնէ ձեռքի երկու մատներուն մէջէն պոթկացող թուխ պտուկը, ու կաթ տայ իր երեխային: Այն ատեն իր կուրծքերը ա՛յլ ասելի մեծցած պիտի ըլլան, ու անոնց վրայ ալ, ինչպէս հայ նշանաւոր գրողէտ մը գրած է անպամ մը, զկաթի մէջ ինկած մանկակի ցօղունի դոյն կապոյտ երակները պիտի տարածեն իրենց ցանցը... Ութ-տասը տարի առաջ, երբ դեռ պելիերուս տեղը սեւցած չէր, կիներ զիս մարդու անը շէն զներ ու իրենց երեխաներուն կաթ կու տային իմ զէմս... Ան ատենները՝ գորովալի կը զանէի պատկերը, բայց հիմա երբ զանոնք կ'երեւակայեմ, մտքէս ուրիշ հաճելի բաներ կ'անցնին:

Յերեկը, երբ միւսը շատցաւ ու տանիքի բացուածքը լաւ մը ծածկեց, զլուսիւր ետ նետած, նայեցաւ վեր — այն ատեն իր օպիտակ կոկորդը համբուրելու եկաւ — ու ըսաւ, թէ զվերէն նայողները ալ չեն կրնար տեսնել, թէ ներսը մենք ի՞նչ կ'ընենք... Վճանի որ մեզ վերէն տեսնող, լրտեսող չկայ, մենք հոս մեր ուզած ապուրը կրնանք առանց վախի ուտելը, ըսել չէ՞ր այդ հաստատումը... Ելլեմ քովը երթամ. եթէ... Եթէ ի՛նչ... Եթէ լընդունի, ու երբ կեսուրը վերադառնայ, պատմէ անոր, թէ ինչպէ՞ս ես, կէս գիշերին... կէս գիշեր եղա՞ւ արդէն... Ինչպէ՞ս ես, կէս գիշերին... կէս գիշերին... կէս գիշերին...

Այն ատեն ես ինչպէ՞ս պիտի նայիմ այդ բարի կնոջ երեսին... Այն ատեն ես պէտք է զլուսս առած՝ երթամ կորսուիմ՝ եթէ անիկա արդէն մընացած է ուսերուս վրայ...

Աւելի ապահով միջոց մը չկա՛յ արդեօք... Մեղք որ փորձառութիւն չունի՛մ... Ինչպէ՞ս կրնամ ունենալ, երբ դեռ հապիւ տասնհետեօթ տարեկան եմ, ու երբ երկու տարի առաջ աքորուելու համար ճամբայ հանուեցանք, կը կարծէի, թէ երեխաները կը բերուին բերդին տակէն՝ կամ նման բան մը...

Արդէն հասերը երկրորդ անգամ է ինչ՝ կանչել սկսան: Առաւօտը ժողովուրդն է: Ու ես դեռ հոս պատկած, անկարելի բաներու մասին մտածելով ու ցանկալով, անքուն կը տառապիմ: Անկարելի՞... Ի՞նչ անկարելի կայ այս բարբոսին մէջ... կը տառապի՞մ... Ի՞նչ յիմարութիւն... Աղուտը բաներու մասին կը մտածեմ ու կ'երազեմ, այդ տառապանք է... Հոպո՞ւ եթէ երազներս իրականանան...:

Օ՛, Ալմա՛ս, Ալմա՛ս, ի՞նչ ըրիր հոգիիս...

— Ալմա՛ս, — ըսի, նոյնիսկ հոպու ինծի լսելի ձայնով մը:

—

— Ալմա՛ս:

— Ի՞նչ կայ, ի՞նչ կ'ուզես:

— Դեռ արթնուն ես, ինչո՞ւ չես քնանար:

— Ձեմ դիտեր:

— Ձե՞ս մտեր, — հարցուցի, հաւատացած՝ որ ճակատադիրս, ներկաս, սպաղաս, անոր տախտակ պատասխանէն է կախուած:

— Ձէ՛:

— Ես կը մոխ՛մ:

— Ելլեմ վրադ սինիմ (կապերտ) մը ձգե՛մ:

Երկար ժամանակ չկրցայ պատասխանել: Ըլմարիտ յուսախարութիւն մը պայթեցաւ հոգիիս մէջ: Բոլոր արեւտա երազներս փլա՛ն...:

— Ձէ՛, հարկ չկայ... — ըսի պզտիկ, շատ պզտիկ ձայնով մը ու դուրսէն, չեմ դիտեր ինչու, կոխելի վերձակիս տակ: Ինչո՞ւ չըսաւ, թէ ձեթէ կը մտիս եկուր քովս, ու ես կը տաքցնեմ քեզ, ծոցս տա՛ք է, կը տաքցընե՛մ՞ քեզ... Ի՞նչ լաւ պիտի ըլլա՞ր, եթէ ըսէր... Բայց չըսա՛ւ...:

— Միւսի՛մ:

— Ի՞նչ կայ, — ըսի եռանդով:

— Ելլեմ վրադ բան մը ձգե՛մ, շմոխ՛ս...

— Ձէ՛, չէ՛, պէտք չկայ...:

Ինչո՞ւ չըսի, թէ քովդ դամ տաքցուր դիս քիչ մը... Բայց երբ մարդ ապուշ է, երբ խելքերնին բանի հասնողները կ'ըսեն, թէ ձեռքուած նախ մէկուն խելքը կ'առնէ՞՞ ու վերջը հոգին, իրաւունք ունին: Ընդհանրապէս չըսուիմ: Ի՞նչ կ'ըսեմ, նորէն սկսայ ապուշ-ապուշ դուրս տալ: Հոգիի առնուելէն ետք ալ խելք կ'առնուի՞... Ինչո՞ւ չըսի, թէ քովդ դամ տաքցուր դիս քիչ մը... Ինչո՞ւ չըսի, թէ քովդ դամ տաքցուր դիս քիչ մը... Ինչո՞ւ չըսի, թէ քովդ դամ...:

Տխմար մըն եմ: Պատեհութիւնները օդազործել չեմ դիտեր... Ըսենք, թէ ես տակնուվրայ եմ եղած՝ ու չեմ կրնար քնանալ, ա՞ն ինչու չի կրնար քնանալ... է՞, ինչո՞ւ չի կրնար քնանալ... Եթէ միտքը խաղաղ է ու սիրտը իր վանդակին մէջ հանդիստ, ինչո՞ւ չի կրնար քնանալ...:

«Եթէ քովդ դամ ու դիս տաքցուր»-ին դէմ առարկէր, կամ անպատշաճ դասեր, միւս կրնայի ըսել, թէ քոյր ու եղբոր միջեւ նման բաներ ներկի են... Ու այդ ահաւոր կեղծիք մը պիտի ըլլար... Ի՞նչ քոյր, ի՞նչ եղբայր... Ձիւքը թեւերու մէջ առնելու, իր պզտիկ կարմիր բերանը համբուրելու, ու Ալիին պէս դիմքը կուրծքիս սեղմելու կարտան ու անզուսպ տենչը ունիմ: Ալիին, երբ աւարտէ առանին իր գործերը, մեկնելէ առաջ, առանց դիս մարդու տեղ դնելու, կ'առնէ Ալմասը իր թեւերուն մէջ, կը սխմուէ իր միտքը, մինչ ինք, խնդալէն մարելով, «ամօթ է», «ձգէ դիս», կ'ըսէ ու կ'աշխատի դուրս գալ Ալիի սմուր թեւերուն բանտէն:

Երբ Ձէյնէպ վերադառնայ Տիփրիկէն, այս բաները պատմելու եմ իրեն... Յիմար ըլլալու եմ այդքան թոյլերան ըլլալու համար: Ձէյնէպ թըշուառ պիտի ըլլայ իր հարսին թոյլատու վերաբերմունքին մասին մտածելով: Յետոյ ես պիտի ըլլամ թշուառ՝ մէկէ աւելի անձերու թշուառութեան պատճառ եղած ըլլալու դիտակցութիւնով: Թերեւս ալ Ալին վունտեն տունէն՝ ու անոն կապէ ինծի դէմ. բան մը՝ որուն համար մեղադրելի ալ պիտի չըլլայ...

••

Երկու օր անցաւ: Երկինքը դեռ մեր դեղին դլխուն շոքած՝ զայն խեղդել կը սպառնար: Այժմս թռչունի պէս դուարթ կը ճուռողէր ու հոս ու հոն կը վազէր: Քալիլ չէր գիտեր կարծես: Երբորդ օրը, կէսօրուան դէմ, բազին մէջ հանդիպեցաւ ինծի ու ձեռքէս բռնելով հետը տարաւ ներս: Երբ դուռը դոցեց մեր հտեւէն, կարծեցի, թէ պիտի նետուի թեւերու մէջ: Ի՞նչ լաւ եղաւ որ այդ ուղղութեամբ առաջին շարժումը չըրի ես... Ձիս օճախին քով նստեցուց ու մտան մտաւ. բոլորի բորբոսած ընտիր պանիր ու ցորենի լաւաչ բերաւ, ու առջեւ դնելով, ըսաւ.

— Կե՛ր:

Այդ գիշեր նորէն երկար անքուն մնացի անկողնիս մէջ. ի՞նչ էր շարժառիթը դիս կերակրելուն, կը խորհէի, կը մեղքնա՞յ վրաս, կաշառե՞լ կ'ուզէ դիս, իր սէրը արտայայտելու միամիտ ձե՞ւ մըն է եղածը... Ո՞րն է, ո՞րն է, ո՞ր մէկն է...

Առաւօտուն փոթորիկը դադրեցաւ: Արեւ ելաւ՝ ու տաք հովեր փչեցին: Ամէն բան հալիլ, արտասուել սկսաւ: Գարունը ճամբան էր: Մարդիկ ուրախացան ու զոմերու դուռները բանալով, կենդանիները ջրել տարին:

Ձէյնէպ վերադարձաւ:

Ճամբու ցուրտին ու հովերէն իր դէմքի մորթը թխացած էր: Ձիս մէկ կողմ քաշեց ու հարցական, նայեցաւ անքերուս մէջ:

— Ձէյնէպ բաճի, աճէն բան լաւ անցաւ. անտեղի բան մը չպատահեցաւ:

Յաջորդ օրը իւզալի գաթա մը շինեց ինծի համար ու դրաւ տոջեւս սր ուտեմ:

— Քու կէս տարիքդ ունեցող քիւրտ լաիտի մը չէի կրնար վստահիլ, — ըսաւ, — բայց դուն Ֆլայ ես, քեզի վստահեցայ:

Համեղ գաթային պատառը բերնիս մէջ շատցաւ ու մերժեց վար երթալ...

Երբ քանի մը ամիս ետք հայերը վերստին հաւաքելով աքսորելու հրամանը կրկնուեցաւ, բակին մէջ դիս բռնեց, եւ ստուգելէ ետք, թէ մեզ լսող չկայ, ըսաւ.

— Հոգ մի ընեք, երբ փիս թուրքերը զան քեզ տանելու, ես քեզ տղուս Իզդէթին քով լեռ կը տանիմ... Այժմսի հայրն ալ հոն է:

Գորովով զրկեցի զինքը ու համբուրեցի իր թուշը:

••

Շատ տարիներ առաջ, տեղ մը կարդացիք եմ, որ յուշերը աւելի զօրաւոր են, քան արեւը, լոյսը, ելեկտրականութիւնը ու կարգ մը նման բաներ: Արեւուն դէմ կրնաս փակել ասնոք դուռներն ու պատուհանները, վար քա-

լէլ վարադոյրնհրդ՝ ու ահա ձգեցիր դինքը դուրս: Ելեկտրականութիւնը՝ նոյնպէս, կոնակի մը հպելով կրնաս հոսանքը կարել ու վերջացնել: Տաքին ու սպաղին հետ ալ պայթարելու եւ անոնց յաղթելու միջոցներ չեն պակսիր, բայց յո՛ււր... Եկաւ ահա ու բոնօրէն ստարու դիտ կէս դար ետ... Ահա նըստեր եմ սենեակիս մէջ, կը յիշեմ, կը յիշեմ սիրով ու կարօտով. կը մտածեմ, կը յուզուիմ ու կը դրեմ: Գրեցի երկար, շատ երկար տարիներ առաջ պատահած դէպքերու եւ ապրումներու մասին... Նիւ Եորք եմ: Ու ձմեռ է: Դուրսը ցուրտ ու մազկրուս՝ ձիւն:

Կը մտածեմ, թէ ինչո՞ւ այսքան համով են յուշերը: Անվերադարձ քացած ըլլալնի՞ն է անոնց դրաշուժեան պատճառը... Նոյնիսկ իրենց մէջ դառնութիւն պահող դէպքերը, երբ հիննան, կը քաղցրանան կարծես:

Երկար մտածեցի այդ մասին ու եղբակացուցի, որ անոնց, մատղաշ տարիներուս կենսագրականին մաս կազմելն է պատճառը այդ երևոյթին:

Մարկային ուղեղը ով որ յղացաւ ու շինեց, վարպետ մէկն ըլլալու էր... Որքա՞ն բաներ կրնանք արձանագրել անոր վրայ՝ տոանց մասնաւոր ճիղի... Ամէնէն հրաշալին ա՛յն է, որ մեր ուզած պահուն, երբեմն ալ առանց մեր ուղեղուն, արձանագրութեանց գլխեր դառնալ կը սկսի, ու եթէ կրնաս՝ ազատէ ձեռքէն:

— Մ'աղա, ի՞նչ խորունկ մտածումներու մէջ ես, — ըսաւ տիկինը օր մը, երբ ճաշէն ետք, նստեր էինք հիւրանոցը:

— Կը մտածեմ մեղքերուս մասին, — ըսի բան մը ըսած ըլլալու համար:

— Շա՞տ են մեղքերդ:

— Դժուար է պատասխանել: Իրապէս մեղաւորի մը հետ համեմատած՝ իմինս քիչ է, իսկ անմեղի մը հետ բաղդատած՝ ես կորուսած մեղապարս մըն եմ:

— Մեղքերուդ մեծամասնութիւնը ինծի հետ ամուսնանալից առաջ դործած ես, թէ ետքը:

— Ես կը կարծէի, թէ Հաւատաքնութեան դարը շատոնց է անցած.

— ըսի խօսքը կարճ կապել ջանալով:

Ժամերով անթելին վրայ երաժշտական աղուոր յայտագրի մը մտիկ ըրինք: Վերջաւորութեան հարցուց, թէ սուրճ կ'ուզե՞մ:

— Ձէ, չեմ ուզեր. վերջը չեմ կրնար քննալ:

— Երթամ մտանէն բերեմ ամառը մեր պարտէզէն Հաւաքած կաղիններէ՞դ մաս մը. կտորէ՛, մաքրէ՛, խորովենք եւ ուտենք:

— Լաւ միտք է, բէ՛ր:

Երբ կաղիները մաքրեցի ու խորովելու համար փուռ դրի, խորհեցայ սկիւռններուն ու երկու քոյրերուն մասին:

Մեղք որ Վիտլան աղիտալի վախճան մը ունեցաւ, խորհեցայ, ու վըստահ եմ չիփ-չիտակ դնաց արքայութիւն: Հեղինը ի՞նչ եղաւ արդեօք... Կ'ապրի՞, մեռա՞ւ, երջանի՞ է, հոս՝ Ամերիկա՞է, թէ ոչ՝ ամուսնուն հետ զնաց ուրիշ երկիր... Անպիտանը տող մը բան չգրեց. բարեւ մը չգրեց բացիկով մը: Արդեօք Վիտլան իր եղած տեղէն կը տեսնէ՞ աշխարհի բռները... Կը տեսնէ՞, տեղեա՞կ է, թէ իր այնքան շատ սիրած տնտեսիկները (խօսքը սկիւռններուն մասին է անշուշտ) այնքան շատցան, որ վնասարար դարձան ու մեր գրացի Մը. Մայրըը զանոնց կը թունաւորէ գաղտնօրէն... Կը

թէ Վիտլը այս բաները տեսնէ իր գտնուած տեղէն, գիտեմ, իր պըղտիկ ու բարի ու տրամ սիրտը սիրտ կտորի... Անհաւատալի կը թուի, թէ

ան ու Հելլենը միեւնոյն մօրմէն էին ծնած... Բայց բնութիւնը կը սիրէ եր-
բեմն նման խաղեր խաղալ: Անգամ մը նորէն, ձմեռ օր մը, շատ տարիներ
առաջ, յետմիջօրէի մը, երբ գործէս առն կը վերադառնայի, պըսերու կա-
յանը Հելլենին հանդիպեցայ: Յուրտ էր, մէկը այն յանկարծահաս ցուրտէն,
որ Գանատայէն փշոջ հովերը կը բերեն իրենց հետ: Հելլեն շատ բարակ չէր-
ջուղեհաս մը հազած էր եւ ուրիշներու հետ շարք մտած, պըսի դալուն կը
սպասէր ու կը դողդոջար: Քովը գացի:

— Ենթ ազիկ, կը դողաս, ինչո՞ւ լաւ չես հագուած, — ըսի դո-
րովով:

— Ինչ գիտեա՞մ, առտուն տաք էր ու գիտես, ես միշտ լաւատես
եմ...

— Այդպէ՞ս է... Զէի՛ր գիտեր... Քաջսի մրն ալ չկայ որ առնեմ տա-
նիմ քեզ առն ու պըսի շոպասենք: Արձակեցի վերաբեկուիս կոճակները ու
փէշերը բանալով, ըսի-

— Եկո՛ւր, կանաչդ տուր ինձի ու ծածկուէ որ տաքնաս, կասկապոյտ
ես եղեր, սաքլիճա՞ն կ'ըլլաս:

— Սաքլիճանն ի՞նչ է, — հարցուց:

— Սաքլիճանը թոքերու բորբոքում է:

Նայեցաւ աչքերուս մէջը, նայեցաւ հրաւերի մը պէս բացուած վերաբ-
կուիս, ու վարանեցաւ.

— Տեսնողներն ի՞նչ կ'ըսեն:

— Բան մը չեն ըսեր: Հօրդ կամ մեծ եղբորդ տեղն եմ: Կարգին մէջ
սպասողներէն քանի՞ հոգի կը ճանչնայ մեզ. պիտի խորհին, թէ հայրդ կամ
մեծ եղբայրդ եմ:

Եկաւ, փխտիկի մը պէս, որ տաքուկ տեղ մը գտնելով կը տեղաւորուի,
փակու ինձի. վերաբեկուիս փէշերը իրար բերի, ու զրկեցի մէջը:

— Օ՛հ... Ենորհակալ եմ:

— Բան մը չէ, հիմա կը տաքնաս քիչ մը:

— Մարմինդ ի՞նչ տաք է...

— Միբոս աւելի տաք է:

— Մը. Հէյկը՞դ...

— Ի՞նչ, սխալ բա՞ն մը ըսի:

— Զէ՛:

— Կարծեմ աս պըսը շատ պիտի ուշանայ, — ըսի տնոր գալիք ուղ-
ղութեան կողմը նայելով, — ա՛հա եւ կ'անձրեւէ ու անձրեւը դետին գպնա-
լուն պէս սառի կը փոխուի:

— Իրա՛ւ այդպէս է, ինչո՞ւ:

— Որովհետեւ հողը օդէն աւելի պաղ է:

— Այդպէս բա՞ն ալ կ'ըլլայ:

— Հասպա՛, փաստը մէջտեղն է:

— Պըսը կ'ըր կու գայ թող գայ, — ըսաւ քիչ մը եւս ինձի սեղմուե-
լով, — ալ հոգս չէ՛. տաքցայ: Քիչ առաջ կը կարծէի, թէ պիտի մեռնիմ...

— Մարդիկ դիւրին-դիւրին չեն մեռնիր, բայց Աստուած չընէ որ
մեռնիս:

— Մեռնիր չես ուզեր, որովհետեւ զիս քիչ մը կը սիրե՞ս, — հար-
ցուց գլուխը մէկ կողմ հակեցով:

— Զէ՛, ի՞նչ սիրելի, մեռնիր չեմ ուզեր, որովհետեւ վրադ դրուելիք
ծաղիկ համար դրամ պէտք է ծախսեմ:

— Օ՛, ըսել է որոշած էս որ երբ մեռնիմ...

Ձթողուցի որ աւարտէ:

— Որոշած եմ, որ եթէ ինձմէ առաջ մեռնիս, ծաղիկ զբլկեմ վրայդ զրուելու՝ որ երբեմն քարձրացնես գլուխդ ու հասուրտաս:

— Օ՛, Մը. Հէյլէ՛ղ...

Ու խնդաց սրտապին:

Շատ չանցած, պըսը եկաւ: Վճարեցի երկուքիս համար ու մտանք ներս: Ներսը տաք էր, բայց շարունակեցի վերարկուիս աջ թեւը իր բարակուկ մարմինն շուրջ պահել: Երբորդ կանգառին ելանք դուրս, ու քալեցինք սէպի իրենց տունը, որ մերինն հազիւ քսան քայլ անդին էր:

Դրան առջեւ, ներս մտնելէ առաջ, ձեռքի փոքրիկ պայուսակէն հանեց քանակին, իր ազուոր թեւերով պրկեց գլուխս ու համբուրեց թուշս:

— Շնորհակալութիւն: Ըրած աղէկութիւնդ, մինչեւ կեանքիս վերջ, բնա՛ւ, բնա՛ւ պիտի չմոռնամ:

— Ես ալ, — ըսի: Ու այս համբուրած տեղդ չկա՞յ մը, բնա՛ւ, բնա՛ւ պիտի չլուամ...

— Օ՛, Մը. Հէյլէ՛ղ...

— Բարե՛ պիշեր:

— Բարե՛ պիշեր ու կրկին շնորհակալութիւն:


~

Երբեմն, կ'անխօսեմ նախահայր Ազմը, որ դրախտի աստուածադիր օրէնքներուն անհնազանդ գոնուելով, ինքն ալ վոնտուեցաւ, մեզ ալ պատճառ եղաւ, որ վոնտուինք, կարօ՛ւ մնանք դրախտին: Երբեմն ալ՝ կ'օրհնեմ գինջը ու երախտապարտ կը զգամ, որ օր մը, Տիրոջ գիմեղով, խաղընկեր մը ուղեց:

Ու Աստուած, Ազմի կողէն ոսկոր մը հանելով, ստեղծեց Եւան:

Եթէ Եւաները չըլլային, երբ մահու դար, յիշելու այսքան աղուոր բաներ ուրկէ՞ պիտի ունենայինք, դուք ըսէք, ուրկէ՞ պիտի ունենայինք...

Ա. Հ.



3. ԳԵՂԱՐԴ

«Սիրոյ եւ Մեղիի Համանուագ» ՇԱՐՔԷՆ

Օ Ք Ո Ւ Ա Ն Ե Ք Պ Ձ Ը

Սըրտիս կզմկնարով հիւսեցի երդիկ,
Քրտինճով արգար շինեցի շաղախ,
Հաւատօնս տուփով՝ պատեր սըլացիկ,
Վասըն ծաղկումին իեանքի մը խաղաղ:
Սէրբս սկեբոց, գերթ ջահ մը պայծառ
Վտոեցի, որ տայ լոյս ու հառազայթ,
Կախեցի պատէն մեր ուխտն անվըքար
Ու վերջին կայան՝ լեռը Արարատ:
Ու անոնց համար որ օր մը ծընան
Կիրճէս խանդարորբ այս երդիկին տակ՝
Միեցի կապոյտ խունկը սրբագան
Իբրեւ դարերու ոգի ու կըտակ.
Շառափոյններուս համար իմ վազուան
Իբրեւ հայրական պատուէր ու աւանդ՝
Ցոյց տուի Հայկի արիւնտ համբան,
Նաեւ՝ սրբատառ գրքեր հընաւանդ:
Ինչ որ ունէի տուի՝ ես անոնց —
Սիրտըս սիրաբոց, երդիկն իմ խաղաղ,
Որ անոնք քայնն պայծառ ու անխոց
Դեպի Մարդկութեան գալիքն սկեչաղ:
Բայց... դըրան դիմաց լարած քնդանօթ
Մարդիկը կ'երգեն երգերը մահուան...
Ոչինչ թէ գառնա՛մ խոնարհ եող ու խոտ,
— Տընակս կ'ողջունէ՞՞ արեւը վաղուան:

3/970

Գ Ա Ր Օ Ց

Անձրեւը կու գա՛յ... կու գա՛ւ ես կրկին-
 Առանձնութիւնըդ, գիտեմ, այդ պստում
 Քաղցր է, երբ փեղկին ու պատուհանին
 Սիրոյ անձրեւին շրթքներն հեկեկում
 Կը փըշրին անդո՛ւլ, յուշելով սրտիդ
 Օրեր երգանիկ ու բազմաբեզում...
 Դի՛ր թէյը կրակին, ամուշ գոյորջին
 Թող դառնայ ոգին կապոյտ սենեակիդ,
 Ինչպէս անցեալին...

Կ'անձրեւէ անկերջ.

Ա՛հ, գամ ես կրկին... բանակ էջ առ էջ
 Հին գիրքը կապոյտ, — արցունք ու կարօտ
 Կարդա՛նք միտին մեր սէրն արեւոտ.
 Օրը թագ դառնայ երազ սակեքել,
 Երազն այդ բանայ ծաղիկ ու տերեւ:
 Անձրեւ կայ կրկին, անձրե՛ւ օրհնածայն.
 — Յո՛ւշ է երջանիկ տունիդ հին նամբան:

Ս Ե Ր Մ Ո Ր Ը Ո Գ Ե Ս

Ձիմակամ ջինջ յախճապակի
 Սէրն իմ՝ յուսի՛ն,
 Ջարկի հոգւոյս սալարկին քար,
 Ու պսպրզաց քարն այդ՝ պայծառ:
 Կարօտներու անձրեւն ուսին
 Հոգւոյս նամբան որ կը վազէ
 Ձրգիտեմ ո՛ւր... Ա՞փն աւազէ
 Թէ դէպի լեռ ճիւղակատար:
 Բայց չիմակամ յախճապակի
 Փրշուր-փըշուր լսյսը լուսնի
 Ափերուն մէջ՝ հոգւոյս նամբան
 Գիշերուան հետ կ'երբայ խելառ
 Դէպի երազ, այգ մ'անվախճան:

12/969

Յ. Գ.

ԲԻԻԶԱՆԴ ԿՈՒԱՆԵԱՆ

ԴԵՌ ԴԱՐԵՐ, ԴԱՐԵՐ ԱՆՍԱՀՄԱՆ...

Երգ ասուսանքի:

Ձերբազատուիլ կապաններէն աւանդութեան, ընկերային պայմանադրականութեան: Ժամանակին: Որովհետեւ ամէնէն հզօր բռնակալը՝ ժամանակն է: Գարեք, հազարամեակներ բազադրեալ: Զուկ մ'ինչպէս ուռկամի մէջ:

Պէտք է ձերբազատուիլ կապաններէն աւանդութեան: Պէտք է տիրաւայ անհին: Հասնիլ ազատութեան: Քանզի այս հինցած նշանաբանները, այս քարացած էակները, որոնք կարսնցուցած են թռչելու ընդունակութիւնը: Պարպուած, հինցած եւ ամուլ: Կեզծ հանճարներ եւ ներքին առաջնորդներ: Բանալ փակ փնդկերը, վերադառնալ արեւին: Թարմ օդի մէջ սրբագործուիլ: Նոր բառեր փնտռել, նոր եղանակներ՝ սրտերուն հասնելու: Գինովնալու ցեղին պատկանելիութեամբ: Խանդավառուելու հայկականութեամբ: Անոր համար, որ կեանքի հրաշքը մեզի տրուած է հայ ակումբէ միայն: Հպարտ ըլլալ ամուլ, երգել գայն սանիքներէն, երասպարակներէն փաղափնիրու, եւ առանձնութեան մէջ ազբիւրի մտան խայտալ ու գինովնալ անոր երգով...

Մենք կը սպասենք ժառանգութիւնը մեր հայրերուն: Անասկ որդի մ'ինչպէս, ունայնութեան եւ մուլութեան մամբաներուն մէջ կը վատնենք ոսկին մեր նախնիքներուն: Միևնչդեռ պէտք էր աշխատենք զբարամագլուխը, նոր տարբերով հարստացնելիմք գանձատունը ցեղին: Գտնելիմք լեզուն մեր որդիներուն եւ հասնելիմք անոնց սրտերուն: Փոխանցելիմք ցեղին ժառանգութիւնը ապառով ձեռքերու: Եւ մեզանչեցիմք, կառչեցանք մեր դիրքերուն, գինովցանք մեր իսկ ձայներով: Գործեցիմք մեծագոյնը ռիթմերուն... Մեր ձայնը, մեր ճիւղ, մեր երկը չունեցանք: Կրկնեցիմք մեր նախորդները: Միևնչդեռ, ցեղին արգանդին մէջ դեռ քաղուած էր անծանօթ, չկրկնուած բառը, հրաշագործ խորհուրդը, գինին անմահութեան: Պատգամը՝ որ պիտի խանդավառէր նոր սերունդները, փոխանցէր ցեղին հոգին: Բանը՝ որ պիտի բնորոշէր մեզ ուրիշներէն, ներշնչէր քերթողներ առնական, կոթողներ կանգներ մեծ նստրաներուն վրայ ժամանակին, երկարէր մեր կեանքը դեռ դարեր, դարեր անսահման...

Լուս Անճեկըս 1970

ԿԸ ՎԱԽՆԱՄ ՈՐ ՕՐ ՄԸ...

Նստաւ բազկաթօսին մէջ, աչքերը փակեց: Ծեր կը գգար: Տարիներ առաջ էր, նաւուն վրայ կը սուրար Արեւմուտք: Կ'երթար Նոր Աշխարհը նուաճելու: Ընդլայնելու ինքզինքը: Աւետելու մարդոց իր նոր երգը: Երկար, Երկար ժամանակ առաջ: Ճերմակը մագերան, խորշովներ դեմքին:

Ծեր կը գգայ, պայտարէն յագնած: Վա՞ղը: Փորձառութիւնը կը տրճուին մերթապանակեմ ետէ: Կրկնութիւնը՝ երկրորդ տպագրութիւնն է կեանքին: Անակնկալը, յոյսը, անժամօքին սպասումը — ոչինչ: Տեղ մը խանդավառութիւնը կորաւ: Այս է որքերգութիւնը: Կրկնութիւնը օրերուն, որ նայնմ են: Ձանձորքը՝ որ կ'անկացնէ: Ես ու առաջ սենեակի բանտին մէջ: Գազան կաշկանդուած: Ազատութիւն կորսուած: Կը փախէ ետ, առաջ, բալրակի: Ձի կրնար նստիլ, խաղաղիլ, գմայլիլ: Լուր մը, ցնցում մը, պայթիւն մը: Կը փախէ անդադար: Ժամացոյցը կը կրկնէ ժամանակը: Միօրինակ, տափակ: Կ'ըմպէ, կ'ըմպէ: Ձի կրնար գինովնալ, որովհետեւ գինովութիւնն ալ խանդավառութիւնն է: Ուղեղը կը թմրի, գգայաբանքները կը գրգռուին: Պահ մը: Ապա՝ դառնութիւնը: Մոխիրը, գորշը, պարսպը:

Տարիներ առաջ էր, կը թռչէր աւելի, քան կը փախէր: Մարքը ճառագայթներ ունէր, սիրտը՝ կրակ: Սուրճը բերու, շինական անիւնի վրայ: Դպար կռակին, երաժշտութիւնը ցայտեց: Նստաւ իր ոտներուն մօտ, գրկեց սրանքները, գլուխը դրաւ ծանկերուն: Ձեր կրցած գտնել գոյնը աչքերուն: Խարտեայ ալիքը մագերան: Ձեռքերը սահեցան անոց մէջ. բայր մը, սարսուռներ, ջերմութիւնը: Քիչ առաջ գրկուած էին փոթորկին մէջ: Անամոհիմ, մտերիմ: Խնթութիւնները: Սահմաններու հալիլը եւ միութիւնը: Ցայտք մը տիեզերքին մէջ: Ճառագայթ՝ որ կը մեծնայ: Սուր ճիչ մը եւ խորունկ լար մը: Լիութիւնը: Տիեզերքը գրկած ըլլալու եպարտութիւնը: Գինովութիւնը յաղթանակին:

Սուրճի լեզին լեզուին: Ձիգերու պրկումը կը փակուի: Խարտեայ ալիքը ծանկին, յունակամ սրինգը: Ատփակէի ճիթեմիները, կարմիր հազը: Սեւ նոթիներու ընդմէջէն, փրած մարմարի սպիտակութիւն: Նստած է Պարթենոնի սանդուխներուն: Աշխարհը ոտներուն: Անցեալի եւ ապագայի առընչութիւնը: Իր և տիեզերքին առընչութիւնը: Սուրճինի բարձունքէն գահավէժ Յոնիականի մէջ: Անդունդին թռվչանքը: Սեւին երանգները: Ակրտալիտի ստարտը, հին Աթէնքի ծուռ փողոցներուն մէջ ազդիկ մը մանուշակներ ծախեց իրեն: Գիշեր էր. կը յիշէ ազդկան պայծառ մտքը եւ մանուշակին բայրը: Սիրած է ազդիկը: Ձէ դպած, չէ հանդիպած երկրորդ անգամ: Սիրած է, որովհետեւ պիտի չհամոզուէր իրեն, երբեք, ոչ մէկ պարագայի: Անդարձ, անկարելի: Ոչ այս աշխարհի վրայ, ոչ ալ միւսին:

Ինչա՞ն հագիս կը խոռվեն մտորումներ, կեանքի սահմաններուն: Չայներ կու գան անժամօք կայքերէ: Տխրութիւն, տխրութիւն: Եւ բամբակներ արեւելեան եւ մթին խորութիւններ կը կանչեն գիս:

Ողջոյն կեանք, վերջին սէր:
Կը գգամ, կը վախճամ, որ օր մը պիտի ձտիպուիմ հրաժեշտ անցել...

ՆՈՒՊԱՐ ԶԱՐԻՈՒՏԵԱՆ

ՄԱՀՈՒԱՆ ԿԱՄՈՒՐՋԸ

(Վ Է Պ)

Գ Ի Ր Ք Ե Ր Ր Ո Ր Դ
ՈՒՆԱՅՆՈՒԹԵԱՆ ԱՓԵՐԸ

Գլուխ Գ.

Կը բարձրանամ լեռներն ի վեր,
կ'իջնեմ ձորերուն յատակը:

Բնութիւնը կը ստառապի ներկայութենէս: Էրզրում հեռու ըլլալու չէ: Կը դուշակեմ գիւղեր, որոնք դազրած են դոյութիւն ունենալէ, պարտէզներ, որոնք վերածուած են մութ գերեզմանատուներու:

Եւ մահը կը ծիծաղի քայլերուս հետեւելով: Հիմա բռնած եմ անծանօթ ճամբաներ, արահետներ, ուր միայն խաշարածներ քայած են: Ամայութիւնը ապահովութիւն է:

Էրզրումէն թերեւս տանող ճամբուն վրայ կը բարձրանան փոշիի ամպեր: Նորէն կարաւաններ, կրկին կիներ ու երեխաներ յանձնուած մահուան մականին: Դահլիճները տակաւին չեն կշտացած ըսպաննելէ: Արդեօք չեն մտածեր, որ օր մը, իրենց զոհերը պիտի չըջապատեն զիրենք ու հաշիւ պահանջեն, պիտի ըս-

պանան աւ բողոքեն, եւ «հատուցում» պիտի գտան:

Արահետը կը մազլցի բլուրի մը կողն ի վեր: Դիմացս կը տարածուի էրզրումի դաշտը, լեռնաշղթաներ կը տեսնուին հեռուները:

Իրիկուան ժամանումով՝ խաղաղութիւն ու լռութիւն կը տիրէ ամէն կողմ: Կը քայեմ հիմա պարտէզներու ցանկապատերու երկայնքին: Երկու կողմերս՝ ծառեր կը բարձրանան շարլարուած ողնայարներու պէս: Նաւարա մը կ'ողբայ դառնալով: Զուրի կաթիլները, որ կ'իջնան անիւին կապուած դոյլերէն, մոռցրնել կու սան ներկան եւ կը յիշեցնեն Համալի կայարանը:

Կը յառաջանամ դէպի քաղաքին կեդրոնը: Արուարձաններու ամայութիւնը և լքուածութիւնը կամաց-կամաց տեղի կու տան դամբանային լռութեան մը: Պատ մը կիսափուլ, սեւցած գերաններ, որոնց վրայ չի ծանրանար տակաւին երդիքներուն հողը, հրդեհուած թաղամասեր

վիաններն են հոս տեղի ունեցած ողբեր-
դուքեան :

Գիշերը տէր դարձած է արդէն քա-
ղաքին :

Հասած եմ հրապարակին մօտերը :
Փողոցները կը նմանին պարպուած ա-
ղիքներու : Թանուքներու դուռները կը
նմանին դամբանաքարերու : Տեղ-տեղ,
սակալն, տկար նշոյլ մը կը ծորի պա-
տուհանի փեղկերուն ճեղքերէն : Դահլիճ-
ներու աղբը կը սարսափի մայթերու վը-
րայ թափառող ուրուականներէն :

Քառուղիի մը առջեւ կը գտնուիմ :
Լուսթիւնը զիս կը չըջագատէ հաստ ա-
պակիի վանդակի մը պէս : Յանկարծ ա-
նիւի ձայներ կու դան՝ փշրելու զիս չըր-
ջագատող ապակիէ պատնէլը : Կը պահ-
ւրտիմ դրան մը ետին : Անիւի ձայները
կը ծօտնանս եւ թանձր խաւարի ընդեր-
քէն կը յայտնուին կարմիր կէտեր, ինչ-
պէս շնագոյլերու աչքերը, անասուններու
խաւարին մէջ : Բնանտասր կառքերու
լայտերներ են :

Գարշահոտութիւն մը կը սփռուի ա-
մէն կողմ : Անիւներու երկաթէ շրջանա-
կը դժոխային ժխոր մը կը ստեղծէ ան-
հաւասար սալաքարերու դարձուելով : Ա-
ռալին սայլը հասած է քառուղիին վրայ,
ինձմէ քանի մը քայլ անդին : Երկու ձիեր
կը քաշեն դայն : Կառապանը կը քայլէ
ձախ ձիուն քովէն : Կառքը լեցուն է
դիակներով, այնքան որ կողմերը կը կո-
րանան անոնց ծանրութեան տակ : Կը
համրիմ կառքերը : Տանեւհիւնդ հատ են :
Վերջինին մէջ բեռցուած են փորելու
վործիքներ :

Կարաւանը կ'անհետանայ արեւելեան
փողոցին ծայրը, հոն՝ ուր կը տարած-
ւին ամայի դաշտեր եւ պերնզմանատու-
ներ :

Ուրիշ սայլ մը կը յայտնուի դիմա-
ցի փողոցէն, եւ կառապանը, իւրաքան-
չիւր քայլափոխին կը պոտայ : Ե՛րիակ-
ներ կա՞ն, դիակներ ունի՞ք :

Ինձի կը թուի, թէ Չապլէ մեռած է
նախորդ օրը եւ անոր մարմինը կը դրա-
նըս անցնող սայլերէն մէկուն մէջ, ճըզ-
մըւած անկեանք միւսերու ծանրութեան

տակ : Այդ մարմինը, որուն գեղեցկու-
թեան վրայ չէի յանդգներ իսկ երազել,
որուն համար պիտի ուղէի վարդերով
ծածկուած մահիճ մը պատրաստել, հի-
մա թերեւս միացած է ուրիշ մարմնի մը,
աւելի մտերմօրէն, քան սիրաբանող զոյ-
զի մը մարմիններ :

Հայկական թաղը լուռ է մեռելաքաղա-
քի մը պէս : Կ'անցնիմ լքուած ու դիմա-
փոխուած եկեղեցիին առջեւէն : Դպրոցը
տեսնելով կը յիշեմ հայրս : Մանկութիւ-
նըս անցուցած եմ հոս, այս պատերուն
մօտ : Մանօթ եմ փողոցի իւրաքանչիւր
սալաքարին, մայթերու իւրաքանչիւր
փոսին : Երբ մանուկ էի, կը ժպտէի ա-
մէնուն, հիմա՝ օտարական մըն եմ այս
քարերուն, անձանօթ մը՝ այս պատե-
րուն համար :

Մեր բակին դուռը ինկած է գետին՝
ջարդ ու փշուր : Պատուհանները ո՛չ ա-
պակի ունին, ոչ փեղկ : Կը փնտռեմ ա-
ռարկայ մը, լաթի կտոր մը, որ մեզի
պատկանած ըլլայ : Նոյնիսկ խոհանոցի
քուրջիկը տարած են :

Կ'երկնիմ սենեակիս տախտակածա-
ծին վրայ : Բնանալ, մոռնա՛լ այս ամէ-
նը : Բայց կարելի՞ է յիշատակները մո-
նել, երբ կը գտնուիս անոնց բոյնին մէջ :
Կարելի՞ է մոռնալ ծնողքս, Տէր Գէորդը,
Թորգոմը, Վահանը : Կարելի՞ է մոռնալ
երգումը եւ դահիճները : Պէտք չէ՞ որ
իժերը հանդարտօրէն մարսեն իրենց
թունաւորած որսերը, պէտք չէ՞ որ ա-
նոնք զնանան իրենց դողցած տուններուն
մէջ : Պիտի չհեռանամ այս քաղաքէն, ա-
ռանց կատարելու երգումս, առանց դի-
մակալելու դուռճանները : Յետոյ, յե-
տոյ... պիտի վերականգնեմ Անին իր
պարիսպներով եւ հաղար ու մէկ եկեղե-
ցիներով...

Վերջապէս այդը կ'իջնէ երկինքէն եւ
կը դիջի ծածկել իր ճերմակութեամբ այս
անիծեալ քաղաքին անօրէնութիւնները :

Կ'ելլեմ փողոց : Ա՛հա՛ Տէր Գէորդին
տունը : Ա՛հա՛ Կապիթաններու բնակարա-
նը : Լուռ է ու ամայի : Պահ մը կ'ուրա-
խանամ, արդեօք անո՞նք ալ ենթարկուե-
ցան իրենց զոհերուն ճակատադրին :

Սպառնացող լուսթիւնը կը ծանրանայ ուսերուս վրայ. թշնամի աչքեր անպայման կը հետեւին քայլերուս, դարանակալ ստիպանքու թիրախն եմ:

Սկսած եմ քալել լայն փողոցի մը մայթին վրայ: Մարդ մը կը յայտնուի ջրվանի անցքէ մը: Կը դռնուի ինձմէ տասը քայլ առաջ: Քայլուածքը շատ բընական չէ, կը դանդաղէ գինովի մը պէս: Կանգ կ'առնեմ, որպէսզի միջոցը, որ մեզ կը բաժնէ, աւելնայ: Կ'ազնեմ փոխել ճամբաս: Մարդը կը յառաջանայ միշտ, թեւերը տարածելով: Յանկարծ կը տատանի, կը դալթի ու գետին չիշնալու համար՝ կը գրկէ փայտէ սիւն մը: Կ'արագացնեմ քայլերս, դինք կանխելու համար, բայց ան՝

— Բարեկա՛մ,— կ'ըսէ,— ձեռք տո՛ւր ինձի: Անհանգիստ կը զգամ: Կարծես անտեսանելի բուռնացք մը իջաւ գանկիս վրայ: Չե՛ս ուզեր, թեւերէս բռնելով, զիս մինչեւ տունս առաջնորդել: Ես Օսման Սուրբայան եմ, բարձրագոյն ատեանին նախագահը:

Չեմ ուզեր մտիկ ընել: Կ'աղաչէ.

— Գիտե՛մ, դուն ալ կարեւոր գործ մը ունենալու ես: Եթէ տունս հետու կը գտնես, զիս հասցո՛ւր մինչեւ Տոքթոր Մուրատեանին բնակարանը, որ կը դրտնուի քիչ մը անդին, զիմացի պողոտային վրայ:

— Բայց Տոքթոր Մուրատեանը աքսորուեցաւ ամխաներ առաջ. ի՞նչպէս կ'ուղէք որ ան բժշկէ ձեզ:

— Տոքթոր Մուրատեանը, վերադարձաւ աքսորէն, որովհետեւ բժշկի պէտք կար:

Անսահման ուրախութիւն մը կ'ողողէ զիս իր շոյող ախփանքուն մէջ: Ուրեմն պիտի կարենամ վերադառնել Չապէլը ողջ եւ առողջ: Թերեւս այս վայրկեանիս, ան իմացած է իմ վերադարձս, եւ ինձի կը սպասէ պատշաճին վրայ, աչքերը յառած Սօսիներու պողոտային վրայ:

Մարդը սակայն կը գրկէ սիւնը եւ երկու թեւերով կը սեղմէ զայն, գետին չփռուելու համար: Կը կառչի այս ան-

կենդանի փայտին, ինչպէս Հեթանոս մը պիտի կառչէր ամենակարող շաստուածի մը անգրիին, որ սակայն չի կրնար խել դինք լսել: Գու՞թ կը մուրայ այս անբազայ սիւնէն, որուն՝ անցնող էշերը կից կու տան միայն, կը պազատի այս անտարբերին, ինք՝ որուն անջնե այնքան անմեղներ ու քաջեր դողացին: Ինք՝ որ չվախցաւ գողնալէ այնքաններու չոր հացը եւ շամչաւ յափշտակելէ այրիներուն եւ որբերուն ժառանգութիւնը: Ինք՝ որ ձեռքի մէկ նշանով հարիւր անմեղ մէկ անդամէն կը դրկէր մահուան:

Բայց այսօր ո՛չ դատաւոր կայ եւ ո՛չ ալ ամբաստանաւ: Այսօր կայ արդարութիւնը եւ վրէժը: Մարդ մըն է միւս բոլոր մարդոց պէս, աւելի տկար եւ աւելի աննշան, որուն արտին մէջ խղճահարութիւնը կը մխէ իր սուր ճիւղանները: Եւ այս սիւնը, որուն վրայ դրած է իր ամբողջ յոյսը, կը մերժէ զինք եւ կ'ըրգայ իր մահը:

Յանկարծ թեւերուն պրկումը կը քակուի եւ ան կ'իյնայ կոնակին վրայ, փողոցին աղբերուն մէջ:

Կը շարունակեմ ճամբաս: Տուները կը դառնան աւելի ցանցառ եւ աւելի բարձր: Հիմա կը քալեմ Սօսիներու պողոտային վրայ:

Չապէ՛լ, Չապէ՛լ...

Կիրակի մըն էր՝ միւս բոլոր Կիրակիներուն պէս: Արեւի վերջին ճառագայթները կ'ողողեն էրգրումի տուները, որոնք դիրար կը փնտռէին, կորսուած ուխարներու պէս:

Եկեղեցիներուն կոշնակները դադրած են հնչելէ եւ անոնց զօղանջը կ'աւելցնէր փառքը մեռնող արեւին: Այդ վայրկեանին է, որ յայտնուեցաւ Չապէլ: Ան կարծես կը քալէր դարերէ ի վեր ինձի հանդիպելու համար, ճիշդ այս վայրը, շրջապատուած խորհրդաւոր կախարդանքով մը:

Եւ տեսայ զինք, եւ ան տեսաւ զիս: Կրնար այլեւս անհետանալ կեանքէս, վերադառնալ անցեալի ունայնացող անփերուն, բայց ինձի համար անկարելի էր մոռնալ իր աչքերուն երեմը: Վայր-

կեանք վերածուած էր յաւիտենականութեան: Մեր սիրոյ սկիզբը կը կորսուէր պարերու խորհուրդին մէջ: Ան դարձած էր իմ հացս, կեանքիս սնունդը, ծանր ու հասակաւոր ցորենի հասկի մը պէս:

••

Մտաբուռ ճիւղերուն ծայրը տակաւին կախուած կը մնան քանի մը չորցած տերեւներ: Անոնք մելամաղձոտ են ու հիւանդ:

Կը հրեմ պարտէզին երկաթէ դուռը եւ կը դանդաղ սիրոյս պարտէզին մէջ: Ամէն կողմ ծառեր կան, վարդի թուփեր շարուած են ցանկապատի երկայնքին: Բայց ծառերը ո՛չ տերեւ ունին եւ ո՛չ պտուղ եւ վարդենիները կը նմանին փրշուփերու:

Երկայարկանի քարէ շէնքը կը սպասէ ինծի, լուռ սփինքսի մը պէս: Կը բարձրանամ քարէ աստիճաններէն ու կանգ կ'առնեմ պատշգամբի վրայ: Յուզումի ազդեցութեան տակ՝ սիրտս կը արոփէ, շանթահարուած թռչունի մը պէս: Կը բանամ դուռը ու կը քայլեմ նեղ նրբանցքէ մը, որ զիս կը սանի մինչեւ դաշտեր: Երկու լայն պատուհաններէն կը տեսնեմ մահամերձ պարտէզը:

Ոչ ոք կու դայ զիս դիմաւորելու: Կը հրեմ սենեակի մը դուռը: Լայն մահահակալի մը մէջ կը պտուկի մարմին մը: Ընթացի գլուխ մը կայ բարձին վրայ: Կը ճանչնամ բժիշկ Մուրատեանը: Այս անշարժ մարմինը կը նմանի ճերմակ ժայռի մը՝ լքուած ունայնութեան դաշտին մէջ: Երիտասարդութեան բարձր ուրախ յիշատակները կը ջախջախուին այս մարդկային զանգուածին դէմ, որ անկեանք կը թուի: Քայլերուս տակ տախտակամածը կը ճչայ: Մերուներն կը բայց աչքերը ու կը նայի ինծի դարձաջամ:

— Իս Միքայէլ Պարթեւեանն եմ, — կը շնջամ:

Աչքերը մեծ-մեծ կը բանայ ու կը փորձէ նստիլ: Ըսածներուս չի հաւատար:

տար: Գանի մը բառով կը պատմեմ զը-ժոխային ոգիսակնան:

— Ինչո՞ւ վերադարձար հոս, այսպէս մեամերկ: Եթէ զեզ ճանչնան, կըրկին կը դրկեն Մահուան կամուրջին ջամբարը...

— Աւրիչ հայեր տակաւին կ'ապրե՞ն արդեօք այս քաղաքին մէջ:

— Այո՛, անո՞նք միայն, որ փոխած են իրենց կրօնքը եւ անունը: Անոնք ստացան պատիւ եւ հարստութիւն: Բարեբախտաբար, զիչ է անոնց թիւը: Ես կեանքս կը պարտիմ դիտութեանս: Ամբողջ իրզրումի նահանգին մէջ կարելի չէ տառը հատ վկայեալ բժիշկ գտնել...

— Ի՞նչ եղան անոնք, որ չուղեցին փոխել իրենց անունը եւ կրօնքը:

— Այր մարդերէն մաս մը ճակատ զրկուեցան եւ հոն սպաննուեցան՝ իրենց թուրք ընկերներու արձակած զնդակներով: Միւսները ձերբակալուեցան ու բանտարկուեցան, յետոյ խումբ-խումբ կախաղան հանուեցան, կամ տարուեցան ամայի տեղեր՝ ջարդուելու համար: Եւրբերը, կիները եւ մանուկները աքսորուեցան, մեռնելու համար ճամբաներու վրայ, հետու քաղաքներէն: Երիտասարդուհիներ բռնաբարուեցան, ծախուեցան... Վերադարձի ճամբուղ վրայ, անպայման հանդիպեցար կարաւաններու, եւ տեսար եղելութիւնը...

— Բայց Չապէ՞լը, ո՞ւր է Չապէլը: Բժիշկը երկարօրէն կը նայէ աչքերուս մէջ եւ չի պատասխաներ:

Չապէլին համար քայնցի դժօրիքի ճամբան ու եկայ հոս: Աւերիմ նաեւ ուրիշ նպատակ մը... բայց կ'ուզեմ տեսնել Չապէլը:

— Չապէլիս դեղեցկութիւնը եղաւ իր դժբախտութեան պատճառը: Մեր գըրացի թուրք սպաններէն մէկը, որ կը ճանչնար մեզ, որ մը եկաւ Չապէլիս ձեռքը խնդրելու: Արդէն ունէր կին ու զաւակներ, Իրեն հասկցուցի, որ Չապէլ արդէն նշանուած էր երիտասարդ երկրաչափի մը հետ: — Վնչը նշանածը չեմ կարծիր, որ վերադառնայ այս քաղաքը, — պատասխանեց, — մինչեւ հիմա մե-

ուած ըլլալու է անսպասելի մէկ անկիւնը: Իմ խնդրանքս մերժելով, դուք ձեզ կը վստահեցէք, տոբթոր: Մարդը շատ ազգեցիկ մէկն էր: Մեզի երկու օր պայմանաժամ տուաւ: — Երկու օրէն կու գամ, եւ այն ատեն ուղես կամ ոչ, Ձապէլը տունս կը տանիմ, — ըսաւ: Այն ատեն միտքս ինկաւ Արշակը, Սիմոն Կաղիբեանին տղան:

— Սիմոն դաւաճանին տղան: Ինչպէ՞ս յանձնեցիր Ձապէլը այդպիսի մէկու մը:

— Գիտէի ամէն բան: Գիտէի նաեւ, որ տնոնք փոխած են իրենց կրօնքը եւ անունը: Բայց ինձի համար միշտ կը մընային հայ. միւսուն կար իրենց ճակատին վրայ. եւ միւսունը հրեք չի սրբուիր:

— Ուրեմն աչջիկը կնութեան տուիր Արշակ Կաղիբեանին, այն շնազայլին, որ հարտացած է մահուան դրկելով իր անմեղ ու անպաշտպան հայրենակիցները եւ նոյնիսկ իր հարազատ եղբայրը, Վահանը:

— Թուրքի մը եւ զէշ հայու մը միջև, ընտրեցի զէշ հայը: Եթէ դուն ըլլայիր իմ տեղս, ի՞նչպէս կը լուծէիր այդ թնճուկը:

— Բայց ի՞նչպէս համոզեցիր Ձապէլը, ի՞նչպէս ընդունեց այս ստրկային վաճառքը:

— Ձապէլ ունէր երբորդ լուծում մը, անմասպան ըլլալ: Իրեն հասկացուցի, որ իր մահը ոչ ոքի օգտակար կըրնար ըլլալ: Համոզեցի, թէ պէտք էր ապրէր քեզի համար, շարունակելու համար դորձք, լուծելու համար վրէժդ: Եւ աւ, — պատասխանեց աղջիկս, — պիտի ընեմ այս զոհողութիւնն ալ, բայց պայմանաւ որ ես գտնեմ վերջին լուծում մը...»

— Կաղիբեաններու տան առջեւէն անցայ: Դուռները եւ պատուհաններու

(Շարունակելի)

փեղկերը զոց էին: Արդեօք թուրքերը սկսած են զանոնք ալ հալածել:

— Ամենեւին: Միշտ կը վայելեն իշխանութիւններուն վստահութիւնը եւ պաշտպանութիւնը: Ծիշդ է, որ անոնք անթիւ թշնամիներ շահած են թուրք երեւելիներուն մէջէն, որովհետեւ Սիմոն Կաղիբեան զանոնք մատնած է իբրեւ մոլեռանդ համակիր սուլթանական վարչաձեւին: Այս թուրքերն ալ յաճախ քարկոծել տուած են Կաղիբեաններու բնակարանը եւ սպառնացած են անոնց կեանքին: Կառավարութիւնը Սիմոնին եւ Արշակին յատկացուցած է ուրիշ բնակարան մը, քաղաքէն հեռու, ուելի ճիշդը դղեակ մը, որ կը պատկանէր աքորուած հայ մեծահարուստի մը:

— Եւ այդ դղեակը կը դռնուի՞...

— Էրդրումէն բաւական հեռու, Կարս տանող ճամբուն վրայ: Արէզի կայարանին ծօտերը: Հոն հաստատուեցան ասկէ ամիս մը առաջ:

— Բանի մը պէտք ունի՞ք, Տոբթոր...

— Ձապէլին լու լուրերը կը սպասեմ: Գալով քեզի, պէտք ունիս շատ բաներու: Նախ պատշաճ հագուստի մը, որովհետեւ հագուած ես մուրացկանի մը պէս: Բաց գիմացի պահարանը, հոն պիտի դնեմ քեզի պէտք եղածները: Գորոցին մէջ կը գտնեմ ատրճանակ մը, փամփուշտները վարի փայտէ տուփին մէջն են: Իսկ բնակութեան համար կայ միշտ պատրաստ սենեակ մը:

Կը գտնեմ պատշաճ հագուստ մը եւ կը հագնիմ, որովհետեւ մերկ եմ. առորճանակը եւ փամփուշտները կը զետեղեմ գրպաններուս մէջ եւ հրատեղա կ'առնեմ քժիշկ Մուրադեանէն: Կրկին կը քալեմ կմախացած սօսիներու ճիւղերուն տակէն եւ կ'իջնեմ կամաց-կամաց զատիվար մը, որ կը տանի յատակը անդունդին, ուր կը նիրհէ սիրոյս դիակը:

Է...

Ն. Զ.

Վերլուծումի Օր...

Այս գիշեր կրկին,
 Հագուս մէջ տապալակ՝
 Կամուրջը կուրած գետի պէս անասնո՛ւ,
 Յորձանք է տալիս մէկ դառնակակիծ,
 Նորոգ հասաչանք...
 Ու ես երկխոսած՝
 Այդ արգարախօս մրմուռների տակ,
 Վշտիս դարբնացում այս գիշեր կրկին,
 Տոբում եմ անդուլ՝
 Է՛լ խիզախօրէն,
 Մեր սրբանանար կանչը բողոքի, —
 Որ բողոք յետնորդ մեր սերունդներին՝
 Արեւոքոծ պատգամ,
 Կա՛մք ու ջի՛նջ ոգի, —
 Մի՛շտ անընկճելի...
 Ու այսօր տես՝
 Թարմացած կրկին,
 Մտքիս պաստառից
 Ներքեւ եմ բերել
 «ՅՈՒՇԱՄԱՆՆԵՐ» մեր հերոսաշար,
 Յարգանքի պահով երկխոսածօրէն՝
 Երկրպագում եմ
 Ժպտաղէմ անցած մեր հերոսներին, —
 Որ դարձան աղօ՛թք,
 Արդար շարակա՛ն՝
 Ձիւնջ լուսաղէմին...

Ու խորախորհուրդ
 Այս գիշերում լուռ,
 Ոտնահարուած ի՛զձ, սկի՛ն, արդար խո՛ւնկ,
 Գանգե՛ր ու գանգեր
 Թոււմ է տես՝
 Ոտքի եմ ելել,
 Ձեռքեր կարկատել երկնքի գահին,
 Ասածոյ խղճից ներքեւ բերելու
 Անողոք պարտուած մի արդարութի՛ւն...
 Հաւաքուել եմ մեծ,
 Հաւաքուել՝ պատիկ,
 Կանայք ու այրե՛ր,
 Մայրե՛ր ու գաւա՛կ,
 Եւ նա՛ր ամալներ,

Եւ նա՛ր առագաստ...
 Եւ կաթնակարօտ արեւշող աչքե՛ր, —
 Եկել են, կանգնել՝ սրտիս շարձումներում,
 Նզովնով լցուած շա՛նքը շրթներին, —
 Ո՞րով թաթալտուած նետը գարկելու
 Յիշողութեանս կո՛ւռ պարիսպներին...

Գինձօճ էր մի...
 Երբ կարմիր արեան բոյրն էր լերդանում՝
 Ու դառնում՝ գինի...
 Երբ ամայի ու արեւատաշար,
 Քաղցա՛ծ, դալկահա՛ր, խորշակների տակ,
 Կեանքը դարձել էր
 Յինների ցակոտ մի գորտեաւա՛ք...
 Սարսուռն էր իջել
 Ազտի թռչած փլատակներում, —
 Եաթաղմ տեսած ոսկրակոյտերին՝
 Ազո՛թք մրմնում...
 Աչքերիս առջեւ գիշերն է հագել,
 Ահա՛ հնձուտրի մատնոցները հին, —
 Հնձում առուե՛լ...

Եզե՛նն... — դու չարի՛ք... —
 Դու նա՛ր յաւերժի
 Մի որմնաբանգա՛կ, —
 Որ կարծրացել ես արդէն սրտիս տակ...
 Դու արդար ու ջինջ մեր այգաբացին,
 Կոցելու եկար սնապատներում,
 Սովից նա՛ր նեխուած,
 Տօթից հրկիզուած մա՛րդ խորովածին...
 Եզե՛նն...
 Դու նգե՛վք միշտ սրտում հայի՛
 Որ պիտի մնաս աշխարհի գրքում՝
 «Անաղարտ Տարի...»
 Մտիս ախօտում դեռ գուքանում ես
 Անցեալը հիմա, —
 Ինչպէս դառնագին
 Սիրտս կը հեւայ...
 Աչքերս ինչու՞ տարածքի վրայ,
 Դարձել են խըշշամ,
 Մեւտուգ բարդի, —
 Խշշում են վշտով՝
 Անէ՛ծքով յիշում գա՛րձը «տմարդի...»
 Վերջիշումի օր...
 Արցունք կայ, բողբ... —
 Սակայն աշխարհը դարձեալ անողբ...

Թե՛րան

ԱՐՇԻ

ՍՈՒՐԷՆ ՍԱՆԻՆԵԱՆ

ԴԵՊՔԵՐԸ ԶՕՐՋԸԶ ԽՄԻՉՔԱՐԱՆՈՒՄ

Կ Ռ Ի Ի Ը

Միւս օրն, կրեկոյեան, երբ ես աշխատանքից տուն էի վերադառնում, Չարլին ինձ հանդիպեց իմ փողոցի անկիւնում:

— Հը՞, — հարցրի:

— Եղած է, — ասաց նա:

— Գնանք George's, — ասացի:

— Խմիչքապեան ինձ արգելել է այնտեղ մտնել:

— Ինչո՞ւ, — հարցրի:

— Յիշո՞ւմ էք, կրէկ, երբ նա ուզում էր տեսնել, թէ ինչ կայ նոստրի պայուսակում եւ այդ ծերունին ձեռքը նրա դիւին դնելով յետ հրեց նըրան, եւ ծիծաղեցի:

— Այո, յիշում եմ, — ասացի:

— Խմիչքապետը նկատել է իմ ծիծաղը եւ վիրուորուել:

— Մե՞ծ բան, — ասացի, — մանուսնդ որ նա մեղաւոր էր եւ այդ ծերունին կարող էր այդպէս կոպիտ լինել նրա հետ:

— Ո՛չ, — ասաց Չարլին, — ճիշդ է, Խմիչքապետը տղէտ, անքաղաքավար եւ երես առած մէկն է, բայց հենց այդպիսի մէկի վրայ է, որ պիտի չծիծաղել: Ես պիտի չծիծաղէի: Նա իրաւունք ունի ինձ ներս շատնելու:

— Գնանք, — ասացի, — ոչ ոք իրաւունք չունի մի ուրիշին հասարակական վայրից դուրս անելու իր անձնական հաշիւներից ելնելով:

Մենք եկանք GEORGE'S-ը եւ ես երկու դարեկուր պատուիրեցի: Խմիչքապետը դարեկուրը մատուցեց առանց Չարլիի վրայ նայելու:

— Մի՞թէ նա ինձ չտեսաւ, — հարցրեց Չարլին:

— Մոտացէք նրան եւ ինձ ասացէք, թէ ի՞նչ պատմեց Մինկին Սիդ Փուլի մասին, — ասացի:

Չարլին չորս կողմ նայեց եւ խօսեց կամպուկ:

— Մինկին ասաց, որ Սիդ Փուլն իրեն սկսել է այցելել իր ներկայ զգրադատներից առաջին տարին, երբ ինքը մօտ ջրան տարեկան է եղել, իսկ Սիդ Փուլը մօտ հօթանստուն:

Այնուհետեւ Մինկին Չարլին ասել է, թէ իր անհաշիւ թուով այցելունների մէջ եղել են մարդկային բոլոր տեսակի տիպարներ, սկսած սկսնակ ու անփորձ պատանիներից մինչեւ հազիւ քայլել կարողացող դառածաբաններ: Եղել են իրապէս կնոջ մարմնի կարօտ հոգեպէս առողջներ, բայց մեծ մասով եղել են շնացողներ եւ հոգեանոական հիւանդներ:

Բայց, Մինկին ասել է Չարլիին, թէ այդ բոլորի մէջ մի առանձին տեղ էն բռնել թրքական կառավարական մի բարձրաստիճան պաշտօնեայ եւ Սիդ Փուլը...

Թուրք պաշտօնեան, որ եկած է եղել այս երկրից դրամ տանելու իր երկրի աղքատների համար, ապրելիս է եղել արքայազայել մի հիւրանոցում եւ ամէն անգամ Մինկիին այցելելու համար սիրային «ընկերութեան» վճարելիս է եղել հինգ հարիւր դուրր (այդ է եղել այդ «ընկերութեան» նուազագոյն սակը) :

« — Բայց այդ չէ կարելոքը, — Մինկին ասել է Չարլիին, — կարելուք այդ թուրքի հոգին էր եւ նրա «սիրային» վարուելակերպը... » :

Ինչպէս որ Մինկին պատմել է Չարլիին, այդ թուրքը նեղ կրծքով, դեղին մորթով, դեղնա-կարմիր աչքերով, ճիւղ երկար ու մութ ատամներով մէկն է եղել: Եւ ամէն անգամ, երբ նա «այցի» է եկած եղել, Մինկին զգուանք ու սարսափ է զգացած եղել: Զգուանք՝ որովհետեւ այդ թուրքը միշտ էլ փողոցում, հանրութեան աչքի առջեւ «սիրային գործով» զբաղուած մի շան է նմանուել: Սարսափ՝ որովհետեւ Մինկիին միշտ էլ թուացել է, որ նա սովորական ժարդ չէ, այլ ճահիճներում ապրող եւ դորտերով, օձերով ու այլ սողուններով կերակրուող մի հրէշ, որը գիտի անտանելի շեշտով մի քանի անգլերէն բառ փոխանակել:

Բայց, նորից, ըստ Մինկիի Չարլիին պատմածի, այդ չի եղել այդ թուրքի «մարդկային» առանձնապատկութիւնը: Այլ այն, որ նա այս երկրի դրամներով ամէն անգամ մի քանի ժամով զննելով Մինկիի մարմինը, իր համար պատրանք է ստեղծելիս եղել, թէ բանարարում է նրան: Եւ յանձինս բղկուած Մինկիի նա երեւակայել է, թէ բռնաբարում է այս երկրի նախագահի կնոջը, այն է՝ First Lady-ին, եւ կառավարական կադմի բոլոր անդամների կանանց...

Այդ թուրքն իր այդ երեւակայութեան մասին հենց այդպէս էլ ասել է Մինկիին եւ բորենիական ձայներ հանել, իբր թէ ծիծաղել է:

« — Ես կարծում եմ, որ դու ճիւղ ես, — թուրքին ասել է Մինկին:

« — Ո՛ւ, ես թուրք եմ, — ասել է թուրքը, եւ նորից ծիծաղել:

Այնուհետեւ Մինկին Չարլիին ասել է, թէ նա դիտմամբ խօսեց այդ թուրք գիւտնազէտի մասին, որպէսզի նրա հետ համեմատած, աւելի լաւ երեւայ Սիդ Փուլի զէմքը, թէ եւ այդ երկուսը «սիրային» զազրութեան մէջ իրար հաւասար են եղել:

Եթէ թուրքը հիւանդ է եղել բանարարելու մոլուցքով, Մինկին պատմել է Չարլիին, ապա Սիդ Փուլը հիւանդ է եղել սիրուած լինելու տենչով: Նա, Սիդ Փուլը, որն երեքեւկէս անգամ մեծ է եղել Մինկիից, եւ իր դրամի զօրութեամբ նրա հետ գործած է եղել անպատմելի զաղխներ, ուզեցել է, որ Մինկին նրան վստահեցնի, թէ սիրահարուած է նրա վրայ:

« — Ամէն անգամ, երբ ասես, թէ սիրում ես ինձ, ամէն անգամի համար էլ ինձից կը ստանաս խոշոր նուէր», — ասել է Սիդ Փուլը Մինկիին:

Չարլին արդէն պատմել լրացրել էր Սիդ Փուլի մասին իր ստացած տեղեկութիւնները եւ մենք արդէն պատրաստուած էինք դուրս դնելու խմբի զարանից, երբ այնտեղ ներս եկան Դիդին, Մինկին եւ Բէյբի Ֆէյսը: Առջեւից քայլում էր Դիդին, յետոյ Մինկին եւ ապա Բէյբի Ֆէյսը: Դիդին եւ Բէյբի

րի Ֆէյսը լարուած ու ջղային տեսք ունէին, իսկ Մինկին ըստ իր սովորութեանն անտարբեր էր եւ ոչ ոքի չէր տեսնում :

— Մէ քէչ էլ մնանք, — խորհրդաւոր շեշտով ասաց Չարլին, — ձեզ համար կարող է հետաքրքրական լինել...

— Ի՞նչ կայ, — հարցրի :

— Դիզիի եւ Բէյբի Ֆէյսի միջեւ պայքար է պնում Մինկիի ստացած յիսուն հազարի համար, — չնշաց նա :

— Մէ՞թէ չեն կարող կիսել, — հարցրի :

— Հնարաւոր չէ, որովհետեւ այդ դէպքում պէտք է կիսեն նաեւ տարարիտ Մինկին :

Ես նորից դարեջուր պատուիրեցի եւ մենք մնացինք :

Երկարածիչ վաճառատեղանի առջեւ նախ նստեց Դիզին, յետոյ Մինկին եւ սպա Բէյբի Ֆէյսը : Մինկին նստեց թէ չէ, վառեց իր գլանիկը, շրջից ծուխը մէկ անգամ եւ յետոյ գլուխն առաւ ափերի մէջը :

— Երեք կրկնակի ուխակի, — կարգադրեց Դիզին եւ ձեռքը դրեց Մինկիի ծնկանքը :

— Այո՛, պարոն, — ասաց խմբագրատու :

Նա միշտ պարոն էր անուանում Դիզին, որովհետեւ վախենում էր նրանից :

Բէյբի Ֆէյսն աչքի անկիւնով տեսնելով, թէ ինչպէս Դիզիի ձեռքը շոյում է Մինկիի ծունկը, անհանդիստ շարժում արեց տեղում, բայց ձայն չհանեց :

— Կենացդ, մեղրս, — ուխակի գաւաթը բարձրացնելով Մինկիին դիմեց Դիզին :

Մինկին ձայն չհանեց, կարծես Դիզին նրա հետ չէր, որ խօսեց :

Բէյբի Ֆէյսը մէկ անգամից կուլ տուեց իր խմիչքը եւ նորը պատուիրեց :

— Մէկ ամբողջ թէյի բաժակ ուխակի, — իր հերթին պատուիրեց Դիզին, եւ ձեռքը Մինկիի շրջագրեստի տակն անցկացրեց :

— Բոս, — Մինկիի վրայով Դիզիին ասաց Բէյբի Ֆէյսը, — ձեռքը հեռացրու Մինկիի գիտից :

— Բէյբի, սէրս... — իր գէժքը Մինկիի գէժքին մօտ բերեց Դիզին եւ սիրային աչքերով նրան նայեց ուշադիր, իբր թէ չլսեց կամ բանի տեղ չդրեց Բէյբի Ֆէյսի կարգադրութիւնը :

Բէյբի Ֆէյսը նորից մէկ ումպով կուլ տուեց իր խմիչքը, նոր ուխակի պատուիրեց եւ ելաւ տեղից :

— Բո՛ւ...

Դիզին, որ այդ ժամանակ ինչ-որ բան էր չնշում Մինկիի ականջին, իր օգնականին նայեց :

— Ի՞նչ է, Բէյբի Ֆէյս...

— Բոս, հանդիստ թող Մինկիին, — ասաց Բէյբի Ֆէյսը :

— Տեղդ նստի՛ր, Բէյբի Ֆէյս, — Հրամայեց Դիզին եւ շարունակեց սիրարանել Մինկիի հետ եւ նրա շրջագրեստի տակով շոյել նրա գիտաը :

Մինկին լուռ էր ու անտարբեր : Նա կուլ-կուլ խմում էր իր ուխակին, անվերջ ծխում եւ թւում էր, թէ չէր զգում Դիզիի ձեռքն իր գիտի վրայ, եւ ոչ էլ լսում էր Բէյբի Ֆէյսի ու Դիզիի վէճը :

— Բոս, ես քեզ ասում եմ... — ուղեց սպառնալ Բէյբի Ֆէյսը, բայց չկարողացաւ շարունակել, որովհետեւ Դիզին հենց այդ ժամանակ սեղանից

վերջրեց ուխտակիով լեցուն թէյի բաժակը եւ նրա պարունակութեամբ ողողեց իր օգնականի դէմքը :

Թուաց, թէ Բէյրի Ծէյսն սպասում էր Դիզիի այդ արարքին : Նա չգուաց, մի ուրիշ այլ անդրադարձ չունեցաւ, այլ միայն ավերով ու իր թեւնոցներով սրբեց դէմքն ու աչքերը, եւ երկար, շատ երկար թարթեց իր թարթիչներն մեղմելու համար սպիրտից առաջացած աչքերի մրմուռը :

— Հա՛, հա՛, հա՛, — իր արածի վրայ ծիծաղեց Դիզին եւ շոքս կողմը նայեց, որ ուրիշներն էլ իր հետ ծիծաղեն :

Սակայն, նրա հետ կեղծ ու արհեստական ծիծաղեց գինեպանը միայն, որովհետեւ վստահում էր նրանից : Միւսները լուռ մնացին : Ներկաները փորձով գիտէին, որ երբ երկու զանգստերներ կուում են միմեանց հետ, պէտք չէ միջամտել այդ կռուին, նոյնիսկ ծիծաղով անգամ :

Մինչ այդ Բէյրի Ծէյսն իրեն կարգի բերեց, վանառատեղանի վրայից վերջրեց խմիչքի իր բաժակը եւ սկսեց կուժ-կուժ խմել ուխտին, կարծես թէ ոչինչ չէր պատահել : Մէկ էլ նա բաժակը կամացուկ դրեց սեղանին, շրջուեց եւ Մինկիի մէջքի կողմից արագ մի ստախն կատարեց Դիզիի կողմը : Սակայն, նա սխալուեց : Դիզին զապանային բնազդով վեր թռաւ տեղից, եւ մինչ Բէյրի Ծէյսը չփութուեց, թէ ինչ պիտի անի, իր ծնօտին ստացած Դիզիի բռունցքի հարուածից յետ-յետ գնաց, մէջքով կպաւ մի ծանրանիստ սեղանի եւ ընկաւ նրա վրայ :

Դիզին վաղեց, երկու ձեռքով բռնեց նրա ուսերից եւ նրա զանգի յետեւի կողմով սկսեց հարուածել սեղանին այնպէս, որ կարծես Բէյրի Ծէյսի գլուխը թակ լինէր եւ դրանով նա ուզում էր փճացնել խմիչքարանի այդ դոյզը :

— Թրա՛խկ, թրա՛խկ, թրա՛խկ...

Մենք, ամէնքս, կարծում էինք, թէ Բէյրի Ծէյսի հաշիւը փակուած է արդէն, բայց յանկարծ նա բարձրացրեց ստքը եւ հարուածեց Դիզիի փորին :

— Թը՛մփ...

Դիզիի փորի ցան հրեւի աւելի մեծ էր, քան իր հակառակորդի գլուխով կոշտ ու անտաշ մի սեղան ջարդելու ցանկութիւնը, որովհետեւ թոզեց Բէյրի Ծէյսին եւ նրա փոխարէն իր փորը բռնեց ու կծկուեց :

Բէյրի Ծէյսն ուղղուեց տեղում, եւ թէեւ, երեւի, ահռելի ցաւերից նրա գլուխն աջ ու ձախ էր քնկնում, բռնեց գլուխը եւ իր կոշիկի ծայրով հարուածեց Դիզիի ծնօտին : Զարմանալի բան, Դիզին Բէյրի Ծէյսի այդ հարուածից փոխանակ ընկնելու կամ էլ աւելի կծկուելու, առողջացաւ եւ ուղղուեց տեղում : Դիզիի փորի հետ առողջացաւ նաեւ Բէյրի Ծէյսի գլուխը եւ երկու ախոյաններն իրար վրայ խոյացան ու կատաղի կերպով սկսեցին միմեանց հարուածել, ով ինչպէս կարող էր : Նրանք ընկնում էին, կանգանում, ջարդում սեղաններն ու աթոռները : Հետում էին ու տնքում, բայց չարուճակում էին իրար հարուածել :

Ինչպէս երեւում էր, որ Բէյրի Ծէյսը կորցրել էր իր յարգանքն իր պետի նկատմամբ, որովհետեւ օգտուելով իր երկարահասակ լինելու առաւելութիւնից, անխնայ հարուածում էր նրա գլխին, կարծես Դիզիի գլուխը դնուան լինէր, իսկ իր բռունցքները կուան :

Պէտք է տեսլ, որ այդ բարոյական հասկացողութիւններին ղէմ բան էր : Այդ նման էր, որ մի նախկին վարչապետ օգտուելով իր թագաւորի գահնկէցութեան հանդամանքից, հենց հասարակութեան աչքի առջև բռնէր

նրան, եւ սկսէր հարուածել իր ժամանակին թաղակիր նրա գլխին :
 Ստիպան, ինչպէս երեւում էր, Բէյբի Յէյսը սխալ նշանակէտ էր ընդունել իր համար : Քանի որ բուրբ նշաններից երեւում էր, որ եթէ Դիգին թոյլ էր իր փորով, ապա շատ ուժեղ էր իր գլխով : Երեւում էր, որ նա այնքան էլ ցաւ չէր զգում իր գլխում : Բայց Դիգիի ճակատադիրը վճռուէց, երբ Բէյբի Յէյսը փոխէց իր սպաժամարութիւնը եւ բռունցքի մի ուժեղ հարած հասցրեց իր հակառակորդի ձախ կողքին, ինչպէս Դիգին ութսուն անգամ հարուածել էր ձեռքերը բռնուած Ջիգօյոյի կողքերին :

Բէյբի Յէյսի այդ ծանր ու սպանիչ հարուածից, Դիգին, երեւի մեր, ներկաներիս, կարեկցութիւնը հայցելու համար, ուզեց դռաւ, բայց չկարողանալով, միայն լրթունքները շարժեց այնպէս, ինչպէս անում են ծեր ու անասամենբը, երբ խօսում են քնի մէջ : Բայց նրա կողքի ցաւը նրան ստիպում էր մի բան անել երեւի : Որովհետեւ Դիգին այս անգամ մի մեծ շրջան կատարեց, եւ երբ հասաւ նրա ծայրին, այսինքն այն կէտին, որտեղից սկսել էր, մի շրջան էլ առաջինին կից, եւ նրա վերեւում կատարեց : Թուաց, թէ նա մի ուժ թիւ գրեց : Մի մեծ ու գեղեցիկ ուժ : Այդ ուժի զաղաթին էր Դիգին, եւ ղեռ չգիտէր, թէ գինետան աղտոտ յատակին ուրիշ ինչ մի գեղեցիկ թիւ գրէր, երբ մէկ էլ ձեռքերը յենեց վաճառասեղանի կզրին ու թէքուէց նրա վրայ : Թէքուէց ու մուր աչքերով սկսեց զիննպանին նայել, կարծես փորձում էր ճանաչել նրան : Ճանաչեց, թէ ոչ, յայտնի չեղաւ, բայց մէկ էլ այն եղաւ, որ նրա ձեռքերը թուլացան եւ նա իր ծնօտի ծայրով հարուածից սեղանի կզրին :

— Թրախկ... —

Մնօտի այդ հարուածը, երեւի, նրան արթնացրեց, ինչպէս արթնացրեց, երբ Բէյբի Յէյսն առաջին անգամ ոտքով հարուածեց նրա ծնօտին : Դիգին ցնցեց գլուխը : Ձեռքերը շարժեց սեղանը բռնելու եւ վեր բարձրանալու համար, բայց նրա մարմնի ծանրութիւնը նրան յետ քաշեց սեղանից, եւ նա ընկաւ Մինկիի ստեղծի մօտ : Ընկաւ, ու այդպէս էլ մնաց ընկած :

Կռիւր վերջացաւ :

Խմբագրանի բազմութիւնը հտտաչեց : Թերեւս արտասաց, թէ ինչու այդպէս շուտ վերջացաւ իրար հարուածելու այդ զգուշի տեսարանը :

Խմբագրագետը ղուրս եկաւ իր վաճառասեղանի յետեւից եւ մտաւ սրահը : Ես կարծեցի նա գնում է Դիգիին օգնելու : Բայց ոչ : Նա գնաց կուրտրուած ու շրջուած աթոռներն ու սեղանները կարգի բերելու :

Դիգին ինչպէս որ ընկել էր կողքի, այնպէս էլ մնացել էր : Թւում էր, որ նրան չէին հարուածել, այլ շատ խմելուց կորցրել էր զիտակցութիւնն ու ընկել ու պառկել, մինչեւ իր արթնացումը : Ոչ որ նրա վրայ ուշադրութիւն չէր դարձնում : Մինկին, որ ամբողջ կռուի ժամանակ խմում էր ու ծխում, առանց զգալու, թէ ինչ կատարւում էր շուրջը, շարունակում էր նոյնն անել, առանց ուշադրութիւն դարձնելու Դիգիի վրայ :

Անշուշտ կռուից յաղթական էր ղուրս եկել Բէյբի Յէյսը, բայց նրա զէմքից երեւում էր, որ նա այնքան էլ ուրախ չէր իր այդ յաղթութեան համար : Եթէ նա Դիգիին սպանած լինէր մի գաղանի տեղ, ուր ոչ ոք տեսած չլինէր այդ սպանութիւնն անշուշտ նա շատ ուրախ կը լինէր : Բայց նա Դիգիին միայն ծնկի էր բերել : Դիգին «մեծերից» էր եւ կէս պարտուած «մեծերը» մէկու էլ վտանգաւոր են : Բէյբի Յէյսը տարիներ շարունակ վարել էր Դիգիի ընդհանուր գործերը եւ լաւ էր ճանաչում այդ այդպէս կոչուած՝ «մեծերին» :

Եւ այժմ Բէյրթի Ֆէյսը հեռուում կանգնած, ընկած Դիդիին էր դիտում, երբ թողնց իր դիտումներն ու ժօտենալով Մինկիին, ինչ-որ շնորհայ նրա ա-կանջին: Այդ նման էր ճիշդ այն ձեւին, երբ Մինկիի յաճախորդները ժօտե-նում էին նրան, եւ անչսելի ձայնով սէր տալարկում: Թերեւս Մինկին հենց այդպէս էլ ընդունեց Բէյրթի Ֆէյսի շնորհոցը, որովհետեւ, ըստ իր սո-վորութեան, նման դէպքերում, առանց շնորհացողի վրայ նայելու, մէկ ուժ-պով խմեց իր խմիչքը, պայուսակի մէջ հաւաքեց գլանակներէ տուփն ու հրահանը, ուղքի ելաւ եւ աչքերը յառեց գետինն, սպասողական: Բէյրթի Ֆէյ-սը խմեց իր ուխակին եւ առաջ ընկաւ: Մինկին հնազանդօրէն հետեւեց նրան:

Բէյրթի Ֆէյսի եւ Մինկիի գնալուց յետոյ, խմիչքարանի յաճախորդ-ներն ախուժացան: Սկսեցին միմեանց պատմել կռուի տեսարաններից եւ դատապարտել Բէյրթի Ֆէյսին նրան մեղադրելով նենգութեան մէջ:

— Նա պիտի չիսփէր Դիդիի փորին, երբ դիտէր, որ նա թոյլ է իր մարմնի ալը մասից, — ասաց խմիչքապետը եւ նրա յաճախորդներից շա-տերը համաձայն գտնուեցին նրա հետ:

Սակայն ոչ ոք չէր ուզում օգնել դեռնին փռուած Դիդիին:

Երբ այդ մասին հարցրի Չարլիին, նա բացատրեց.

— Դիդին ուղքի կանգնելուց յետոյ, կարող է զրպարտել իրեն օգնողին կամ օգնողներին: Նա կարող է ասել, որ իրեն ուղքի կանգնեցնողը կողոպ-տել է իրեն, իր զրպանեց հանելով հազար դոլար, երկու հազար դոլար: Մէկ խօսքով այնքան, ինչքան ինքը ցանկանայ ասել: Վերջ ի վերջոյ ամէն ինչ դրամի է յանգում: Մարդիկ ապրում են դրամի համար: Գործում են դրամի համար: Եւ, վերջապէս, լաւութիւնը զրպարարանքով են հատուցում դրամի համար...

Ես ծիծաղեցի, եւ Չարլիի հետ թողեցինք եւ հեռացանք խմիչքա-բանից:

ԿՈՂՈՊՈՒՏԸ

Դիդիի եւ Բէյրթի Ֆէյսի կռուից մի քանի օր անց, երբ Չարլիի հետ նո-րից George's խմիչքարանում գարեջուր էինք խմում, մէկ էլ ներս եկաւ Դիդին:

Թէեւ նրա ծնօտի վարի մասը ուռած էր, աչքի տակը կապտած եւ կողքի ցոււից աջ ուսը վեր էր ցցուել, բայց նա աշխատում էր ցոյց տալ, որ ոչինչ չի պատահել, որ ինքը նախկին Դիդի Թերին է:

Ներս մտնելով Դիդին «վեհօրէն» բարեւեց ներկաներին եւ զնաց նըս-տեց վաճառասեղանի առջեւի իր սովորական աթոռակի վրայ:

— Ուխակի, կրկնակի, — կարգադրեց նա:

Խմիչքապետն արագօրէն պատասխանեց.

— Yes, sir.

Դիդին մէկ ուժպով խմեց հեղուկը եւ նորը պատուիրեց: Երբ խմիչ-քապետն երկրորդ զաւաթն էր մատուցում նրան, Դիդին կոպտօրէն բռնեց նրա զաւաթակից.

— Ո՛ւր են գտնուում Բէյրթի Ֆէյսը եւ Մինկին: Ասա՛, զու. դիտես նը-րանց տեղը:

Խմիչքապետը գլուխը շարժեց.

— Ճիշդը ես չգիտեմ: Եթէ գիտնայի, կ'ասէի:

Դիդին նրան յետ հրեց, խմեց ուխակին եւ նորը պատուիրեց: Յետոյ տեսնելով Բիդ-Մաութ Ծիդրիին, հրամայեց.

— Հէյ, Kid, այստեղ արի,
Բիզ-Մաութը վերցրեց ուխտիկի իր դաւաթը եւ եկաւ նստեց Դիզիի կողքին:

- Ի՞նչ կայ, բոս:
- Ո՛ւր են Բէյբի Ֆէյսը եւ Մինկին:
- Մի՞թէ չգիտես, երբ ամէն ժամը դիտի:
- Ո՛ւր են, — անհամբեր դարձաւ Դիզի:
- Ֆլորիդա:
- Ֆլորիդա՞...
- Այո:

— Ինչո՞ւ են գնացել այնտեղ, Բիզի:
— Այդ ի՞նչ հարցում է, բոս, — դարձացաւ Բիզ-Մաութը, — ժարդիկ ինչո՞ւ են Ֆլորիդա գնում: Մեզ մօտ հիմա ցուրտ է, անձրեւ, քամի: Այնտեղ ճոխ արեւ է, կապոյտ ծով, շքեղ հիւրանոցներ: Եթէ յիսուն հազար կայ եւ ցանկութիւն, ինչո՞ւ չպնայ հանդուստանալու... Յիսուն հազար՝ եւ սիրահար զո՛յք... Ո՛հ...:

Բիզ-Մաութն այնպէս խօսեց, որ այդ գրաւիչ պատկերներից Դիզին կարող էր խենթանալ, կարող էր կաթուած ստանալ ու տեղն ու տեղը մեռնել:

Սակայն, Բիզ-Մաութի հոգը չէր, որ Դիզին կարող էր տեղն ու տեղը մեռնել: Ամենեւին էլ հոգը չէր:

Դիզին, որ թւում էր, թէ չէր լսում Բիզ-Մաութին, կարճ հազաց ու խղում ձայնով հարցրեց.

- Ուրեմն Ֆլորիդա են գնացել Հա՞, Բիզի...
- Ֆլորիդա, բոս, Ֆլորիդա... Հիմա պտուկի են տաք աւազի վրայ, ստացակոշտով ուխտիկ են խմում եւ համբուրում... — այնպէս խօսեց Բիզ-Մաութը, որ կարծես այդ բոլորը հետտից-հետու տեսնում էր:

Դիզին նորից հազաց.

- Ատում ես խմում են ու համբուրում, Հա՛, Բիզի...

— Խմում են, բոս: Խմում են եւ համբուրում, — Հաստատեց Բիզ-Մաութը, — եթէ յիսուն հազար դուրս ունեն ձեռքումդ, կարող ես քսանչորս ժամ խմել ու համբուրել... Տէրն իրենք են չէ՞, բոս...

— Տէրն իրենք չեն... Ես նրանց ցոյց կը տամ իմ յիսուն հազարի մտնումը, — խուլ ձայնով սպառնաց Դիզին:

— Դու նրանց այստեղ պիտի սպանած վնէ՛իր, բոս, — ասաց Բիզ-Մաութը, թէ եւ Դիզին սպանութեան մասին խօսք չտրաւ, — անշուշտ Մինկիի յիսուն հազարնոց չէ՛քը կանխիկ դրամի կամ քո անուան փոխելուց յետոյ...

- Ա՛հ, — բարձրացաւ Դիզին եւ օդն արժով Բիզ-Մաութի վրայ հըրկեց, — գու էլ եկել էս ինձ, ի՞մ արհեստն ես սովորեցնում:
- Ո՛չ, բոս, — ծիծաղեց Բիզ-Մաութը:
- Այդպէս աւելի լաւ է, Բիզի:
- Այո՛, բոս:
- Ա՛յ, ա՛յ, ա՛յ, — ինքն իրեն զայրացաւ Դիզին եւ դուրսն օրօրեց,
- ա՛յ, ա՛յ, ա՛յ... Ա՛հ, ա՛հ, ա՛հ...

Բիզ-Մաութը նորից խմիչք պատուիրեց: Նա իր վերնաշապիկի գրգռանից հանեց ծխախոտատուփը, մի գլանակ վերցրեց, թորիչը խփեց բթամատի եղունգին, դրեց բերանն ու վառեց: Յետոյ նա շատ ծխով լեցրեց բե-

բանը եւ լեցուն չբթունքների արանքից, ինչպէս մի մեքենայից, սկսեց իրար յեանելից ծխողակներ բաց թողնել օդի մէջ: Երեք հատ, հինգ հատ, տաս հատ... Միաձայլ այդ կապոյտ ու թրթռուն օդակները շատ զեղեցիկ էին: Նրանք օրօր-չօրօր հեռանում էին Բիզ-Մաութից, մեծանում-մեծանում, փչում ու լուծում... Բայց զայիս էին նորերն ու նորերը, իսկ Բիզ-Մաութը նայում էր նրանց ու ժպտում: Նա George's-ում միշտ այդպէս էր անում, երբ ծխում էր եւ երբ տրամադրութիւնը բարձր էր լինում: Եւ երբ խմիչքորանում կանայք էին լինում, նրանք հիանում էին նրա ծխողակային արուեստով: Նոյնիսկ, Մինկին, որ ատում էր տղամարդկանց եւ երբեք նրանց երեսներին չէր նայում, ծածուկ մի ժպիտով էր նայում Բիզ-Մաութին: Չարլին կարծում էր, թէ Մինկին գողտտօրէն սիրահարուած է Բիզ-Մաութի վրայ, բայց Բիզի հոգը չէր: Նրա մասին ասում էին, որ նա այսպէս կոչուած բարձր դասակարգի (այսինքն շատ դրամ ունեցողներ) չըջնակներում մի քանի սիրուհիներ ունի, որոնք եւ նրան առատօրէն վճարում են նրա կողմից մատուցուած սիրային «ծառայութեան» համար, քանի որ Բիզ-Մաութը շատ զեղեցիկ մի երիտասարդ էր: Թէեւ նրան Բիզ-Մաութ էին կոչում, բայց նրա բերանը մեծ չէր: Ամենեւին ոչ: Միշտ էլ մի ժպիտ կար նրա բերանի անկիւններում, խորհրդաւոր մի ժպիտ, որով կարծես նա ծաղրում էր ամէնքին: Նա միշտ էլ շատ դրամ ունէր, եւ երբեմը-երբեմը իր հաշուին հիւրասիրում էր խմիչքարանում գտնուող յաճախորդներին անխտիր:

Դիզին մտածեց ու գլուխն օրօրեց: Գլուխն օրօրեց, օրօրեց ու դարձաւ Բիզ-Մաութին.

— Բիզի...

Բիզ-Մաութը դրազուած լինելով ծխողակների արձակումով՝ չպատասխանեց:

— Ա՛հ, — բարձրացաւ Դիզին, կէս բարձրացաւ տեղում, եւ ձեռքի մի բարբարոս շարժումով ջնջեց օդում դեռ սաւառնող, թրթռուն ու կապոյտ ծխողակները:

Բիզ-Մաութը մոխրամանում ջարդեց իր գլանակը եւ կեանքի դադունիքը դառած իր ժպիտով բերանի անկիւններում, դարձաւ Դիզին.

— Այո՛, քո...

— Ինձ լտի՛ր, Բիզի:

— Լոտւմ եմ, քո:

— Բիզի ինձ հազար դուրս տուր...

Թուաց թէ Բիզ-Մաութը Դիզիի այդ խնդրանքը կատակ ընդունեց: Շատ սրամիտ մի կատակ, որովհետեւ նա գլուխը յետ ձգեց ծիծաղեց ու ծիծաղեց:

- Ո՞ր տեղից տամ, քո, — ծիծաղը շարունակելով հարցրեց:
- Քո դրամներից, Բիզի, — բացատրեց Դիզին:
- Ինձ դրամ որտեղի՞ց, քո, երբ ես ոչ մի գործ չունեմ:
- Քո «գործն» ամէնից հաճելին է, եւ ամէնից լաւ վարձատրուողը,

Kid... — ասաց Դիզին:

Բիզ-Մաութը կարմրեց եւ նրա բերանի անկիւններից անյայտացաւ նրա սարդոնիկ ժպիտը.

— Ե՛կ իմ գրադոնձքի մասին այստեղ չիտեսնք, քո...

* Դիզին բանի տեղ չդրեց նրա ասածը.

— Լաւ, տուր հինգ հարեւր...

— Ձկայ, բռն :
 — Հարուստները հիմա իրենց կանանց փականքի տա՞կ են պահում...
 — Հարցրեց Դիդին ծաղրաճշով :
 — Ձկայ, բռն :
 — Ա՛հ, — բարձրացաւ Դիդին եւ գինեպանին իր մօտ կանչեց, — Հէ՛յ, Ջօրջի այտեղ արի...
 — Իմ անունը Ջօրջ չէ, իմ անունը Պրանկ է, — Դիդին մօտենալով ասաց խմբիչքապետը :
 — Ինձ համար այդ միեւնոյնն է, — ասաց Դիդին, — տուր ինձ Հինգ Հարիւր դոլար :
 — Ես միայն ծառայող եմ այս խմբիչքարանում եւ չարաթական միայն ութսուն դոլար եմ ստանում, — ասաց խմբիչքապետը :
 — Տուր ինձ Հինգ Հարիւր դոլար, քանի դեռ չեմ սպանել քեզ, — սպառնաց Դիդին ձեռքը ծոցի վրայանը ասակով :
 Ես չեմ կործում, թէ Դիդին ցանկանում էր ծոցի վրայանից ատրճա-
 նակ հանել, բայց գինեպանը վախեցաւ ու թաքնուեց վաճառատեղանի յետե-
 ւը եւ այնտեղից աղաղակեց :
 — Ես իրաւունք չունեմ գանձարկղի դրամը քեզ տալու, բայց դու ինքդ կարող ես վերցնել, դե՛ս՝ վերցրու...
 Դիդին մէկ վայրկեան մտածելուց յետոյ, ծոցի վրայանից հանեց ա-
 տրճանակը, երկու ձեռքով յենուեց վաճառատեղանի երեսին ու ապա ճար-
 պիկ մի շարժումով թռաւ միւս կողմը : Նա բացեց գանձարկղը, դրամները հաւաքեց դրեց վրայանը եւ դնաց դէպի խմբիչքարանի դուռը : Այնտեղ կանգ-
 նեց, ու առանց շրջուելու ասաց բարձր ձայնով :
 — Հէ՛յ, Ջօրջի, երբ Չլորիզայից վերադառնամ, զո դրամները կը վերադարձնեմ :
 Թէեւ ներկաները չհաւատացին նրան, բայց նա էլ ասել ոչինչ չասաց, այլ դուռը բացեց ու գնաց :
 Նրա գնալուց յետոյ խմբիչքարանում աղմուկ բարձրացաւ : Գինեպանը դուրս եկաւ իր թաքստոցից եւ Բիդ-Մատթին հարցրեց :
 — Գնա՞ց...
 — Գնաց, — ծիծաղեց Բիդ-Մատթը :
 Գինեպանը վազեց դէպի գանձարկղը, ստուգեց եւ երկու ձեռքով դը-
 լուխը բռնեց :
 — Տարե՛լ է, ամէն ինչ տարե՛լ է...
 — Ինչքա՞ն, — ծիծաղելով հարցրեց Բիդ-Մատթը :
 — Այսօրուան ամբողջ առեւտուրը : Մօտ երեք հարիւր դոլար...
 — Այդ ոչինչ, — ասաց Բիդ-Մատթը :
 — Ինչպէ՞ս թէ ոչինչ, — քիչ մնաց, որ բայ լինէր խմբիչքապետը, — ես ի՞նչ պատասխան տամ իմ քսոյին :
 — Բացատրիր նրան, նա կ'ը հասկանայ : Այդ ամէն տեղ է պատահում, — ասաց Բիդ-Մատթը, — ասեմ որ լաւ պրծար : Դիդին ճիշդ է, էլ առաջ-
 ւայ պէս կատաղած մէկը չէ, բայց նորից նա կարող էր քեզ սպանել... Նա մարդկային ոչ մի գիծ չունի...
 Խմբիչքապետը թրջական տիպարի այն մարդկանցից էր, որոնք իրեն-
 ցից ուժովներին առջեւ ոչխար են դառնում, բայց զառիճ են կտրում, երբ ենթադրում են, որ մէկ ուրիշն իրենցից թոյլ է : Հենց այդ մտայնութեամբ էլ նա եկաւ եւ կ'զու Չարլիին :

Ողբալով այն դրամները, որ Դիգին տարաւ, խմելքապետը անհանդուրձութիւնից իրեն տեղ չէր գտնում, երբ Չարլին տեսաւ: Նա Չարլին տեսել էր նաեւ մինչեւ կողոպուտը, բայց այժմ Չարլին նրան պէտք էր, նրա նկատմամբ իրեն ուժով ցոյց տալու: Նա զիտէր, որ Չարլին թափառաւոր չի է, որ նա դրամ չունի եւ կուսել չի սիրում: Բայց նա չդիտէր, որ եթէ Չարլին չեղ է երեւում, որովհետեւ զուտ է մարմնական ցաւ պատճառելու մէկին: Խմելքապետն այդ չզիտէր եւ իր բոլոր յաճախորդներին մէջ Չարլիից էր, որ չէր վախենում:

Մինչ խմելքապետը Չարլին նշան բռնած մօտենում էր մեզ, Չարլին կամացուկ ասաց.

— Նա դալիս է ինձ դուրս անելու, եւ այս անգամ, Հակառակ իմ սկզբունքին, եւ պիտի Հարուածեմ նրան:

— Պէտք չկայ, — ասացի, — սպասենք, տեսնենք: Ծանախորդներին պատուէրները կատարելով, խմելքապետը վաճառանդանի մէջ ծայրից, վերջապէս, եկաւ Հասաւ մեզ: Հասաւ թէ չէ, ձեռքը պարզեց, բռնեց Չարլիի օձիքը ու սկսեց թօթուել:

— Ես քեզ ասել եմ, որ այստեղ չմտնես: — Ինչո՞ւ, — Հաղիւ իրեն գոպելով Հարցրեց Չարլին: — Իրովհետեւ եւ այդպէս եմ ցանկանում, — Չարլին շարունակեց չնցել խմելքապետը:

Նրա Հայեացքը ստոր էր, խարդախ, աղտոտ ու թրջական: Այդ թրջքականութիւնն էր, որ իմ մէջ ցատում առաջ բերեց նրան Հարուածելու, թէեւ եւ էլ Չարլիի պէս ստուտ եմ մի ուրիշին մարմնական ցաւ պատճառելու վայլադուրիւնը:

— Յետ քաշի թրջական քո աղտոտ ձեռքը բարեկամիս մաքուր օձիքից, — ասացի եւ բռնելով նրա դասասկից՝ Հեռացրի Չարլիից:

Նա նայեց ինձ եւ Հասկացաւ իմ մտադրութիւնը: — Այո, պարոն, — ասաց նա եւ ուղեց Հեռանալ:

— Սպասի՛ր, — ասացի, բռնելով նրա թեւից, — դու ինչո՞ւ եւս Հարուածում իմ բարեկամին:

— Նա այս խմելքաբանին ոչ մի օգուտ չի բերում, — ասաց նա: — Սուտ է, — արդարացաւ Չարլին, — եւ իմ բոլոր դրամներն այստեղ եմ ծախում...

— Քո դրամն'ըր, — ասաց խմելքապետն արհամարհական եւ Հեռացաւ:

Ինչպէս երեւում էր, խմելքապետը Չարլիի հոգու թոյլ լարերին կը պաւ, որովհետեւ նա կարմրեց այնքան, որ նրա աչքերում արցունքներ երևացին: Ամօթից նա չզիտէր, թէ դէմքն ուր պահէր այնքան, որ ուղեց թողնել ու Հեռանալ: Բայց եւ պահեցի նրան:

Օրը Ուրբաթ լինելով՝ եւ ստացել էի իմ շարաթական աշխատավարձը: Ես դրպանիցս դուրս Հանեցի այն, կէս արեցի, կէսը պահեցի ինձ, իսկ միւս կէսը մեկնեցի Չարլիին:

— Վերցրէ՛ք այդ: — Ինչո՞ւ, — զարմացաւ նա:

— Լսէ՛ք, — ասացի, — այդ մարդն արհամարհում է ձեզ, որովհետեւ դուք դրամ չունէք: Վերցրէ՛ք եւ երկուսիս Համար թանկանոց խմելքներ պատուիրեցէ՛ք:

— Ո՛չ, — հրամարուեց Չարլին:

— Այդ դրամը ձեզ պարտք եմ տալիս, — ասացի, — հիփոսորդեցէ՞ք ինձ:

— Յետոյ ինչպէ՞ս վերադարձնեմ, — հարցրեց նա:

— Գալիստոնէք, կը վերադարձնէք, — ասացի Հենց այնպէս: Առանց ժամանելու:

Նա ցնցուեց եւ ինձ նայեց շնչառակի:

— Դուք ինձ դատապարտում էք, որ ես չեմ աշխատում, — հարցրեց:

— Ո՛չ, — ասացի, — ես ձեզ ո՛չ դատապարտում եմ եւ ոչ էլ ինձ իրաւունք եմ համարում ա՛յդ անելու: Եթէ դուք չէք աշխատում, երեւի մի պատճառ ունէ՞ք այդպէս անելու: Այդ ձեր անձնական գործն է:

Նա սեղանին նայեց մէկ վայրկեան, յետոյ ցնցեց գլուխն ու վերցրեց դրամը: Ապա առանց չբնակելու, իր ուսի վրայով պատուիրեց:

— Hey ! bartender, two double whiskies on the rocks...

Գինեպանը ցոյց տուեց, թէ չլսեց Չարլիի պատուիրը:

— Հէ՛յ, գինեպան, դու լսեցի՞ր, թէ ինչ պատուիրեց իմ բարեկամ Չարլիը, — ասացի ես:

— No, sir !, — ասաց նա:

— Կրկնեցէ՞ք, Չարլի, — ասացի:

— Hey, bartender, two double whiskies on the rocks and make it quick, — կրկնեց Չարլին:

— Yes, sir ! — ասաց գինեպանը եւ կրկնեց, — two double whiskies on the rocks, coming right up !

Ես նայեցի Չարլիին եւ նրա դէմքի վրայ տեսայ այն երջանիկ ցնծութիւնը, որն ունենում են երեխաները, երբ ծնողները նրանց նուիրում են նրանց ամէնից շատ երազած խաղալիքը: Եւ ես հասկացայ, որ ես ճիշդ էի վարուել, Չարլիին տալով իմ շարժական կէսը:

Խնդրում եմ Չարլիին սխալ չհասկանալ:

Չարլին չէր ուրախացել այն բանի համար, որ իր սիրած խմիչքը պիտի խմէր, այլ որ նա ինքնիշխան էր դարձել, որ լրում էին նրան:

— Գինեպան, — կարգադրեցի, — իմ բարեկամ Չարլիին մի ուրիշ ժամուցիւր իմ հաշուին, եւ ամէնից թանկանոցը:

Գինեպանը բերեց սառցակուտով ուխտիկները եւ տակակ մի պնակի վրայ բերեց սիգարն ու նրա ծայրը կտրելու յատուկ մի մկրատ, որպէսզի Չարլին ատամներով չկրծի սիգարի ծայրն եւ բերանը դառնացնի:

— Well !, — ասաց Չարլին եւ հանդիսաւորութեամբ բարձրացրեց գաւաթը:

— Well !, — ասացի ես եւ բարձրացրի գաւաթս:

Եւ, երբ մենք կում-կում խմում էինք մեր խմիչքները եւ զրուցում, իսկ Չարլին կապոյտ ծուխի քուլաներ էր բաց թողնում իր բերանից, նման էինք երկու ինքնագոհ չբիզնեսմէն-ների, որոնք զարծի արանքում խմիչքաբան էին մտել մի քիչ հանգստանալու, մինչ նրանց ձեռնարկատներում զործը շատուում է արադաճող զեւթի սկէս, եւ ժամանակի ամէն մի վայրկեանը դրամ է կտրում նրանց համար:

Ս. Ս.

(Ետք. 4)

ԱՁՆՈՒՄԻՔԻՆ

Ո՛վ ազնուքին,
Ինչո՞ւ փախում ես,
Ինչո՞ւ օրեցօր դու հեռանում ես
Մեր այս աշխարհից:

Կար ժամանակ որ ամեն մարդ սրտանց
Փարւում էր քեզ ու լցնում էիր դու
Շունչը քո յստակ նրա հոգու մէջ,
Եւ արեան նման վարարում էիր
Ամէն մի մարդու երակների մէջ:

Բայց այսօր սաս',
Ասա՛ ինձ ինչո՞ւ
Քո համր քայլերով դու հեռանում ես,
Ամէն մի վայրկեան,
Ամէն մի րոպէ,
Աւելի հեռուից է ձայնդ լսում:

Բայց ազնուքին, մի փախիր այդպէս
Շտապ ու անփայլ մեր այս աշխարհից,
Զէ՛ր որ տակաին կան դեռ շատ-շատեր,
Որ ձգտում են քեզ, որ պաշտում են քեզ,
Գուրգուրում են քեզ իրենց ջերմ հոգում,
Ո՛վ ազնուքին:

Ռ. ԳԱՌՕՆԷ



Ինչպե՞ս Հարիւր

ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ՎԵՐԱԴԱՌՆԱՅ

Մերպարենք որ առուած մը շինած է այս աշխարհը. պիտի յուզէի ես ըլլալ այդ առուածը. որովհետեւ ժոխարհի բռնառատիւնը սիրտս պիտի պատէր:

ՀՅՈՒՆՆԱՍՏՈՒՐԸ



Քանի որդի դարձաւ ծառը, ձկն կողմէն նոր ծարձին տան վարդապետութիւններու արհմտա ստեղծելն ահարկէ եւ միւս կողմէն՝ գոյութեան հարցերը բնարկող փիլիսոփաներու պատճառարեւութիւններէն ստրուած՝ իրէի մեւտուցող կամ իրէի իր կողմերը Աստուծոյ հետ եւ յայտարարեց ինքզինը իր հակառակըն բացարձակ ուրը:

Բուրբոյնի աղէտ մը շնորհաւ այս իրաւոր: Միեակութեան մէջ, ծառը աւելի պատարհանաւ. զգաց ինքզինը իր սնման հանդէպ եւ գործի տուտա իր կարողութիւններուն: Թափանցեալ, Թափանցեց, իտրացու ներքին շտտներու եւ ընտրեան ուժերուն մէջ, գիտութեան լոյսով տիրացու գործեր ու գործեր Աստուծոյ վերադարձում բազմաթիւ գողտից ներու, հասու սնտանիւ թարմութիւններու, գործեց հազար հրաւը, հասու միջուկ լուսին, թայց իր նուանուներէն եւ ոչ մէկը ի վիճակի եղաւ ինքզինը Մայրոյի ստեղծմանով գնդախախտան զգացումը, այն՝ որ ծարձուն սնկառարութիւնը կ'աղչարարէ շարունակ եւ իտրբարուար ուժի մը հետ հազարակցութեան մէջ ժանկու տնդիմադրելի թնայթ մը սնի:

Կենքի ճարտարութեան ստեղծմանը, մեքենայութեան, պլանարման զբաղմունները աւելի կաշկանդեցին, սարկացուցին, ներշնտղեա սմայացուցին պատարհան ու երբանութեան ծարձի ծարձ կողմ: Ներքու սպաւնի մը ըլլալ նաեւ գոյութեան հարցերը բնարկող փիլիսոփաներուն թեւած լոյսը, եւ մէջը այդ պատճառներով թնտրէն կամ կամովին մեկուսացուած Աստուծոյ նորին կը վերադարձան ահուտակի, իրրեւ վերջին յոյս...:

Ներկայ դարու սնկն սիրական գեմերը կը խտին ազարուած Աստուծոյ վերադարձն ծարձն եւ շահեկանութիւնէ զուրկ չէ իմանալ սնտեց նոր սնկութիւններէն թեւած նոր պատճառարեւութիւնները:

ԺԱԳ ՏԻՒՔԷՆ

Ա Ս Տ Ո Ւ Ա Յ

Կ Ը Վ Ե Ր Ա Դ Ա Ռ Ն Ա Յ

ՀԱՅԱՑՈՒՑ

ՏԻԳՐԱՆ ՈՍԿՈՒՆԻ

Աստուած մեռած չէ՝ արդի մարդը հանդիպած է անոր: Ֆրանսացի գրագետ Ժազ Տիւքենն այդ հանդիպումը կ'ուսումնասիրէ գիրքի մը մէջ, որ լռյս տեսաւ Ապրիլի սկիզբը՝ «ԱՍՏՈՒԱՅ ԱՅՍՕՐՈՒԱՆ ՄԱՐԴՈՒՆ ԼԱՍԱՐ» խորագրով: Ստորեւ՝ գիրքին համադրումը, նոյնիման հեղինակին կազմէ:



Մինչ քրիստոնէաներ «Ալեկույառյով կը տօնեն Յարութիւնը, քրիստոնէայ աստուածաբաններու ամբողջ բանակ մը, Նիցիէէն աստիճաններ ետք, շարունակ կը կրկնէ, թէ Աստուած մեռած է: Ասիկա մեր ժամանակներու ամէնէն զարմանալի հակասութիւններէն մէկն է, որ աւելի կը շեշտուի զատկական այս օրերուն:

Աստուած գոյութիւն ունի՞ տակաւին այսօրուան մարդոց համար: Ու եթէ այո՛, ինչպէ՞ս: Քանի մը տարիէ ի վեր, այս հարցումները խեղդուած էին Եկեղեցիներէն ներս արքայ ժողովին մէջ: Բոլորին ուղարկութիւնը գրաւուած էր կղերականներու գոյամիճակի, կուսու-

կրօնութեան, հեղինակութեան և «վար»ի ու «վեր»ի խաւերու միջև ծագած վէճերով: Հիմա, ստեղծ, այդ հարցումները կը վերայայտնուին: Վարդուան վէճը — որ միայն Եկեղեցիին յատուկ չէ — պիտի ըլլայ ո՛չ թէ Եկեղեցիին մասին, այլ Աստուծոյ:

Անշուշտ, Աստուծոյ ժխտումին շարժումը զօրաւոր է ու ժամանակները շատ փոխուած են: Երբ Վոլթեր կը խմբագրէր «Համայնագիտարան»-ին «անաստուածութիւն» գլուխը, անաստուածէն կը պահանջէր, որ ան փաստեր տայ Աստուծոյ չգոյութեան համար: «Ուրացողիմ պարտականութիւնն է իր պատճառները տալ», կ'ըսէր Վոլթեր: Փոխարէ-

նը, երկրարանութեան, հնէարանութեան եւ տիեզերադիտութեան տուեալներուն վրայ հիմնուելով, փրոֆ. Յրանտա Շաթրէ, իր վերջին գիրքին մէջ՝ «Լուկաս է քրիստոս»-ի մէջ կը յայտնէ, թէ Աստուծոյ գոյութեան հաւատարու իրողութիւնը զկարծիք մըն է, բայց զայն նշմարութեան վերածելու համար, անհրաժեշտ են այլ եւ աւելի լուրջ փաստարկութիւններ՝ քան զգացումները կամ հաստատումները»:

Կացութիւնը ուրեմն բոլորովին շարժուած է: Անաստուածը չէ, որ այլեւս պարտաւոր է փաստեր հայթայթելու: Այլ հաւատացողը: Ան որ չի հաւատար, պարտաւոր չէ իր իրաւունքը արդարացրնելու. ընդհակառակն, հաշիւ կը պահանջէ հաւատացողէն:

Ատենօք, երբ մէկը ինքզինք անասուած կը դաւանէր աշխարհի մը մէջ, ուր աստուածապաշտութիւնը (désisme) դրեթէ ընդհանրական էր, այդ մարդը իր անձը կ'անջատէր ընկերութենէն ու վրտանդներու կ'ենթարկուէր: «Անաստուածութիւնը ազնուապետական է», կ'ըսէր Ռուպինիէն, որ մասնաւոր սէր մը շունչէր ազնուականներու հանդէպ:

Արդ, անաստուածութիւնը այսօր հաւաքական է: Մարդկութեան մէկ երրորդը կ'անդիտանայ կամ կը մերժէ ունէ Աստուած, ինչ որ երբեք տեսնուած չէր այն օրէն ի վեր, որ մարդիկ գոյութիւն ունին: Երբեմն, հաւատացողն է, որ ինքզինք փոքրամասնութեան մէջ կը զգայ. անտարբերութեամբ կ'ընդունուի արեւմտեան երկիրներու մէջ, բայց միայն կը հանդուրժուի ու յաճախ կը հայածուի համայնապար երկիրներու մէջ, Զինաստանէն մինչեւ Ռուսիա:

Այս պարզան այնքան ալ ակներախ չէ, եթէ նկատի ունենանք այսօրուան մարդոց ընկերային վարժուէքը: Այսպէս, Յրանտայի մէջ, կեանքի զմեծ հանգրուաններունը՝ համար, ծնունդ, պսակ, թաղում, եկեղեցական արարողութիւններու եւ ծէսերու պահանջը գեռլատ մեծ է: Անաստուածներ յաճախ իրենք դիրենք մեկուսացած կը գրան, ըն-



ՀԱՅՐԻԿԻՐ

կերարաններու լեզուով՝ «չեղած»: «Ես անաստուած եմ, կիմս ալ, կ'ըսէ 40 տարեկան փրոֆեսօր մը: Ես սակայն, որոշեցիմք մեր գաւակները միրտել եւ կըրօնի դասերու գրկել: Որպէսզի տարբեր շըլլամ, ալ դառնան մէլ անդամը փրանական ընկերութեան»:

Հանրային կարծիքի Յրանտական Ինստիտուտին կողմէ 1968-ին կատարուած հարցախոյզ մը սպասուիչ մեծամասնութիւն մը տուած էր Աստուծոյ չափահաս Փրանսացիներու 74 առ հարիւրը անոր գոյութիւնը կը նկատէր ճորտ կամ հաւանական», ու միայն 9 առ հարիւրը ամբողջովին կ'ուրանար զայն: Նոյն տարուան վերջերը, Կալուէր հաստատութեան կողմէ Մ. Նահանգներու մէջ կատարուած հարցախոյզ մը գրեթէ միաձայնութիւն կու տար հաւատացողներուն. 98 առ հարիւր: Գերմանիոյ մէջ, «Տէր Երիկը»-ի կողմէ 1967-ին կատարուած հարցախոյզի մը համաձայն, այս թիւը կ'իջնէ 68 առ հարիւրի: Բայց, գերմաններու 99 առ հարիւրը մկրտուած



ԽՐՎԻ ՊԱՁԻՆ

է, իսկ 94 առ հարիւրը ինքզինք կաթո-
ղիկէ կամ բողոքական կը դաւանի:

Հետեւաբար, այս համեմատութիւն-
ները ոչ միայն տպաւորիչ են, այլ նաեւ
երկիւմի: Աստուծոյ հաւատալը անպայ-
ման որ նոյն նշանակութիւնը չունի մէ-
կուն կամ միւսին համար, ու հաւատա-
լու նոյնքան ձեւեր կան՝ որքան հաւա-
տացեալներ, անաստուած ըլլալու նոյն-
քան ձեւեր՝ որքան անաստուածներ:

Հաւատացողներու հաւատքը յանախ
մասերու կը բաժնուի: Եթէ զերժաննե-
րու 68 առ հարիւրը կը հաւատայ Աստու-
ծոյ, 48 առ հարիւրը միայն կը հաւա-
տայ անդենական կեանքին: Լոնտոնի
մէջ, հարցախոյզ մը սպառահար պատ-
ւելիներու իմացուց, թէ իրենց պատա-
րագներուն ներկայ եղող ծուխերուն
40 առ հարիւրը կը հաւատայ յաւիտե-
նական կեանքին: Փոխարէնը, ասնը-
ւազն շատորդը անոնց, որոնք կը տարա-
կուսին, ունայնապաշտ են կամ անաստ-
ուած, կ'ըսեն, թէ կ'աղօթեն, իսկ անոնց
20 առ հարիւրը կը խորհի, թէ Քրիստոս
եղաւ զաւելի քան մարդ մը:

Ճրանտայի մէջ, կանոնաւորաբար
պատարագի ներկայ եղող կաթողիկէնե-
րուն մէկ քառորդը չի հաւատար, թէ
Քրիստոս Աստուած էր կամ զոնէ՝ զշառ

լու չի դիտեր»... Այն Աստուածը, որ
ամէնէն աւելի քուէ կը ստանայ, նե-
րառեալ անոնցմէ, որոնք կ'ըսեն, թէ
քրիստոնեայ են, զերագոյն իսկն է,
զմեղմէ վեր բան մը», Հեռաւոր անձ եւ
ժամագործ Արարչութեան: Երբքին մէջ,
աստուածապաշտութիւնը աւելի յաջո-
ղութիւն կը գտնէ՝ քան քրիստոնէոս-
թիւնը: Վիպասան էրվէ Պապէն կ'ըսէ.
«Արարող մեծամասնութիւնը չ'ազգր որ
Աստուած մեռած ըլլայ: Ոչ ոյ կը փա-
փախի որ ան շատ կանուխ միջամտէ:
Ուստի, հեռաւոր Աստուած մը աւելի
յարմար է: Յանձնառու չի դարձնեք
մեզ»:

Այս աստուածապաշտութեան վրայ
կը բարդուի բարոյականութիւն մը: Ա-
ւետարանին բարի խօսքը՝ը քրիստոնեա-
ները աստիճանաբար փոխարինեցին բա-
րոյական օրինաւորքով մը, պատուէրնե-
րու ամբողջութեամբ մը: Այս բարոյա-
կանութիւնը երկար ատեն եղաւ անհա-
տական, Հիմնուած սեռային վարիին ու
կարգապահութեան վրայ: Այսօր, ամէ-
նէն յառաջացեալները կը փորձեն հաս-
տատել ուրիշ բարոյականութիւն մը, ս-
զատական կամ ընկերային: Բայց այդ
ալ կը մնայ բարոյականութիւն: Ու Ե-
կեղեցիները, ներքը թէ դուրսը, կը նը-
կատուին բարոյականին պահակ գորաւոր
հաստատութիւններ: Այն աստիճան՝ որ
Եկեղեցիէն Հեռացողները պարտք կը
զգան բարձրաձայն յայտարարելու, թէ
Եկեղեցին լքելով՝ բարոյականութիւնը
լքած չեն ըլլար: «Զեմ կարծեք, որ գէշ
եղայ անոր համար, որ այլնու պատա-
րագի չեմ երթար», կ'ըսէ 25 տարեկան
ժանկամարդ կին մը: Իսկ 65-ամեայ այ-
րի մը միամտօրէն կը յայտարարէ. «Պա-
տարագի չերթալը պատճառ մը չէ որ
քաղաքաւարօրէն չապրիմք»:

Երբ կաթողիկէներուն հարց կու
տանք, թէ իրենց ակնոցով, ի՞նչ է քա-
րի քրիստոնեայ մը», տասի վրայ ինը
ոչ Քրիստոս կը յիշէ եւ ոչ ալ Աստուած:
Տասի վրայ եօթը մինչեւ իսկ Եկեղեցիի
մասին չի խօսիր, բայց բոլորն ալ կ'ան-
դադարանան վարժունքի մը. «Բարի էր-

րիստոնեան ա՛ն է, որ բարիք կ'ընէ՝, «որ զքասիրտ է», «որ իր նմանը կը սիրէ»:

Վերջին հաշուով, այս վերաբերումը կը յանգի քրիստոնէական ինքնութեան տաղանայի մը: Քրիստոնեաներ, որոնք կը հանդիպին այլ մարդոց, որոնք առնչուողն իրենց շա՛ր վեհանձն են ու աշխատք, որ մըն ալ հարց կու տան, թէ ի՞նչ կը նշանակէ այն իրողութիւնը, որ ուրիշներ եւս նոյն բարոյականը ունին: Իրենց առաջին մտածումը կ'ըլլայ ըսել, թէ այս շարժումները քրիստոնեայ են առանց գիտնալու: Բայց յետոյ անգործառնալով նման պարտադէր մկրտութեան մը վարկաբեկիչ եւ զայրացնող ընդթին, կը սկսին հարց տալ. «Եթէ ուրիշներ մոյճը կ'ընեն, նոյն բարոյականը ունին, ի՞նչ կը նշանակէ ուրեմն քրիստոնեայ ըլլալ: Ի՞նչ աւելի բան կը ընել»:



ԱՐԹՒԻՐ ՔԷՍՍԹԼԵՐ

Քրիստոնէութիւնը, պատուէրներու ամբողջութեան մը հետ շփոթուած ըլլալով, շատերու աչքին, շատ բան կը կորսնցնէ իր զօրութենէն եւ շահեկանութենէն: Շատ մարդիկ կը զգան կամ կը կործեն, թէ ի վիճակի են իրենք իրենց բարոյական մը կերտելու: «Ե՛վ վերջոյ, — կը նկատէ փրոֆ. Լորան Շվարց, — մենք մեր բարոյականը կը հիմնենք մեր եւ ընկերութեան միջեւ գոյութիւն ունեցող հաւատարկչաւթեան վրայ. անաստուածին բարոյականը կանխաւ չէ գրուած յաւիտեանակամին համար, այլ կը պահանջէ մնայուն խորհրդածութիւն մը, պատասխանատուութեան մնայուն գիտակցութիւն մը»:

Եթէ այդպէս է, քրիստոնէութիւնը աւելի ի՞նչ կը բերէ՝ քան մարդու իրաւանց տիեզերական Յայտարարութիւնը, թէ եւ կասկած չկայ, թէ այդ Յայտարարութիւնը լայնօրէն ներշնչուած է քրիստոնէութենէն: Բայց այդ կը նշանակէ, թէ պարզապէս ան օգտակար դեր մը խաղացած է մարդկութեան զիտակցական մտեցումին մէջ: Օգտակար, բայց՝ սակմանափակ: Այսօր, եթէ քրիստոնէութիւնը միայն բարոյական է, այլեւս

չի կրնար ծառայել: Եկեղեցիին յաճախ քարոզած բարոյական Աստուածը կը մերժուի օգտակարութեան տեսակէտէն: «Հաւատքը իսկապէս անհրաժեշտ է կեանքը յաղաղցնելու համար: Ձեռք կարծեր, — կ'ըսէ 22 տարեկան ուսանողուհի մը, — կարելի է ունենալ բարոյական մը, առանց Աստուծոյ: Ուրեմն, ի՞նչ պէտք կայ»:

Աստուած կը բախի այլ հաստատուն խոչընդոտներու: Շատ քիչ ակնբախ է աշխարհի մը համար, որ կ'ուզէ կառչիլ իրականին, այսինքն իրեն համար տեսանելիին, շոշափելիին: Մարդկային զիտակցութիւնը իրաւացիօրէն կը պահանջէ, որ հաւատքը ըլլայ բանաւոր արարք մը: Երբեմն կ'ըմբոստանայ բացակայութեանը զէ՛մ բացարձակ, մաթեմատիկական փաստերու, որոնք վերջնական պատասխան մը պիտի տային այս հիմնական խնդրին: «Իսկապէս որ Աստուած շատ չի ետզորակցիր, — կը բողոքէ 45-ամեայ փրոֆեսօր մը, — եւ ինչպէ՛ր յայտնուած է միայն առապելիական ժա-



ՔԱՑՔԱ

մանակաշքրաններուն: Արդի ժամանակները կ'արգիլեն մեզի գոհանալ առաքելներով: Արդիւմքը կ'ըլլայ այն՝ որ ոչ կրնանք սպացուցանել եւ ոչ ալ ժրխտել Աստուծոյ գոյութիւնը: Ես իմ ժամանակիս կը պատկանիմ, չեմ համարձակիր հաստատել, չեմ համարձակիր այս կամ ոչ բան: Միակ բանը որ կրնամք բնականօրէն ըսել, երեսնայն է. սաչափ համակամութիւն կայ թեր, սաչափ՝ դէմ»:

Եւ սակայն, Եկեղեցիները կը հաստատեն, թէ Աստուծոյ գոյութիւնը ապացուցանող բանաւոր փաստեր կան: Միայն Եկեղեցիները չեն որ կ'ընդգծեն բնականացական համոզիչ ճանի մը կարեւորութիւնը. այս կէտին մէջ, անոնց կը միանան նաեւ փիլիսոփաներ, որոնք Եկեղեցիներու մաս չեն կազմեր: Բայց անհերքելի փաստերու բացակայութիւնը մարդոց նիւթ կու տայ վէճի մը, որ պիտի տեսէ՝ որքան մարդիկ կան, եւ որ իրենց պատուութեան յայտարար նշանն է: Բայց այդ բացակայութիւնը երբեք արդեւ պիտի չըլլայ, որ մարդիկ հարց տան, ինչպէս Հայտնիէր կ'ամփոփէ ու-

ղաղբու տարադի մը մէջ. «Ինչո՞ւ կայ էմ՝ փոխան ոչինչի»:

«Ինչ որ գոյութիւն ունի դիպուածի եւ անհրաժեշտութեան պտուղն է», պատասխանած էր արդէն Գիտնական Փրոֆեսօր Ժազ Մոնօ, Նոպէլեան մրցանակաւոր, նոյն թիւան կրկնեց 3 Նոյեմբեր 1967-ին, Գոլիթ ար Ֆրանսի մէջ կատարելով բացումը Հիւլէական կենսաբանութեան իր դասերուն: Անաստան համոզումներ յայտնաբերելով, իբրեւ գիտութեան հիմնական մէկ արդիւնքը ներկայացուց այն գաղափարը, թէ մարդը գիտութեամբ դուրս եկած է նիւթական տիեզերքէն, թէ ան արարած մը չէ, այլ պատահական զէպքերու անհաշուելի դուրսի մը արտադրութիւնը: Ուրիշներ անմիջապէս պատասխանեցին, թէ նման հաստատում մը, նոյնիսկ եթէ ստուգուած ըլլայ, վերջ չի տար վէճին. որովհետեւ՝ ինչո՞ւ գիտած, ինչո՞ւ պատահական զէպքեր, ինչո՞ւ նիւթական տիեզերք:

Կան հաստատուող գիտնականներ ու անհաստատ գիտնականներ: Գիտութիւնը թոյլ չի տար, որ յստակ վճիռներ տրուին: Շատեր, գիտական միտք չբոլորով հանդերձ, կը խորհին, թէ գիտութիւնը հաւատքին ամէնէն սխալիմ թշնամիքն է: Անոնց տեսակէտով, գիտական ամէն յաջողութիւն կը նշանակէ նահանջ Աստուծոյ: «Մեր Երեխայ էի, — կ'ըսէ



ՊԵՔԵՐ

52-ամեայ բանուոր մը, — քանի մը ստիպեցին, թէ փոքորիկները Աստուծոյ գայրոյթէն կը ծնին: Բայց գիտնականները ցոյց տուին, թէ ստիկա բռնական է, Աստուծոյ պէտք չկայ: Կամաց-կամաց գիտութիւնը կը բացատրէ ամէն բան:

Եւ սակայն, Հատարէին դէմ գլխաւոր խոչընդոտը այլ անը է: Բոլոր քրիստոնէիները զայն կը մասնանշեն միաձայնութեամբ: Այդ խոչընդոտը չարին դոյութիւնն է: «Ենթադրեմք որ աստուած մը շինած է այս աշխարհը, — կ'ըսէր Եօրենհաուզը, — պիտի չուզէի ե՛ս ըլլալ այդ աստուածը, որովհետեւ աշխարհի բռնապետութիւնը սիրտս պիտի պատէր»: Մարդիկ կը շարունակեն բաժնել այս կարծիքը: 34-ամեայ պաշտօնեայ մը կ'ըսէ. «Աստուծոյ հանդէպ հաւատքի մէջ զիս ամէնէն ակնի զրգւնցնողը եղաւ հրեաներու նախնայորդ պատերազմի ընթացքին: Եթէ Աստուած գոյութիւն ունի, մոլեաանդ ստիպ մըն է»:

Եստեղ կը բախին դեռ Հետեւեալ պատին. կա՛մ այն է, որ Աստուած գոյութիւն ունի, ու չար մըն է, զոր պէտք է աստուածացնել տակաւին, եթէ զիչ մը քաջութիւն ունինք, եւ կամ՝ նման աս-



ՔԱՄԻԻ

տուծոյ մը գոյութիւնը անկարելի է: Ու քրիստոնէաները շատ կը դժուարանան պատասխանելու այս առարկութեան, որովհետեւ ակնի աստուածապաշտ են՝ քան քրիստոնէայ, իրենց Աստուծոյ վերաբերելով ամենակարողութիւն մը ու մոռնալով որ այն Բրիտանացի, զոր կը դաւանին, պայքարեցաւ չարին դէմ ու ինքն ալ տառապեցաւ:

Զուգահեռաբար յծնունդ կ'անէ վերջին առարկութիւն մը, մանաւանդ մտաւորական շրջանակներու մէջ. ոեւէ աստուած Հակառակորդ մըն է մարդուն, ոեւէ աստուած՝ կաշկանդող մը, ու մերժել անոր գոյութիւնը, կը նշանակէ միանգամայն լուրջի աննկ մարդը, ազատութիւնը, պատմութիւնը:

Աստուծոյ Հանդէպ Հատարքը դուցէ անհրաժեշտ էր իր մանկութիւնը ապրող մարդկութեան մը համար: Գիշերուան



ԻՈՆԵՍԻՐ



ԱՆՏՐԷ ՄԱՐԿԻՆՈ

անդուանքը մեղմելու եւ տառապանքը
ամբողջում համար, կրօնքը օրօրի մը պէս
էր: Այսօր, այդ հաւատքը վտանգաւոր
է, որովհետեւ մարդը կը մզէ զստալը-
ջութեան, թոյլ չի տար որ մարդկու-
թեան զարգացման իր մասնակցութիւնը
բերէ: «Աստուած, — կ'ըսէ 37-ամեայ
նկարիչ մը, — մարդոց վաստիքինն
է»:

Գրիտոնեաները այս տեսակէտին կը
պատասխանեն, ըսելով, որ եթէ կրօնքը
մասամբ կրնայ արգելիչ ըլլալ, հաւատ-
քը սակայն այդպէս չէ, ու իրենց Աստ-
ուածը այնքան կը սիրէ մարդը, որ ա-
նոր յանձնած է աշխարհը, դաշինք կրն-
քած է անոր հետ ու մեծագոյն արատու-
թիւնը թողած է անոր. զինք մերժելու
ազատութիւնը: Եթէ այս կէտին մէջ
Քրիստոնեայութիւն կայ, այդ Քրիստոնեայու-
թիւնը այնքան փերուն է, որ բոլոր կող-
մերու իմանիստները, հաւատացող կամ
անհատուած, ընկերվարական թէ ազա-
տական, այսօր, կամայ-ակամայ իրարու
միացած են՝ դիմակայելու համար վը-
տանդը ընկերութեան մը, որ կը սպառ-
նայ ուրանալ մարդը՝ դաշն վերածելով

արտադրութեան եւ սպառումի միջոցի
մը:

Մարդը չի համակերպի կամ զէջ
կը համակերպի այս փոփոխութեան:
Բայց ինչո՞րք վտանգի մէջ կը դրայ:
Մահուան վտանգին: Ե՛ւ արարկայա-
կան, ե՛ւ վերացական իմաստով: 1969-ի
ամառը, Սթոքհոլմի մէջ տեղի ունեցաւ
հաւաքոյթ մը: Ներկայ եղան երեսունի
մօտ դիտնականներ եւ մտածողներ: Ա-
նոնց մէջ՝ վեց նոպէշեան մրցանակա-
ւոր, ինչպէս բնագէտ Լինուս Փաւլինկ,
կենսաբան Ժագ Մոնօ, դրաղէտ Արթուր
Քէօսթիեր, ազգարան Մարկըրէթ Մէտ
եւ կենդանաբան Գոնըրատ Լորենց: Ասի-
կա իզաւ վախի խորհրդատուով մը:
Մասնակցողները հարց տուին, թէ մար-
դը ինչպէ՞ս կրնայ սպրիչ դիտական դա-
րուն: Ինչպէ՞ս պիտի զիմակայէ դիտա-
կան յատկութեան կարգ մը անխու-
սափելի հետեւանքները:

Նման հարց մը տալ, կը նշանակէ
ընդունիլ, թէ մարդը իսկապէս խաղին
տէրը չէ ու դերը թողած է Քեքնիքին:
Բայց երեւոյթները ցոյց կու տան, թէ
Քեքնիքը այսուհետեւ իր մղումը չի
ստանար մարզէն: Եթէ Քեքնիքը կը յա-
ւաքիմէ՝ այդ կը կատարուի իր սեփա-
կան պահանջներուն ժողովով:

Ապագային նկատմամբ, 2000 թուա-
կանի ամերիկեան Ակադեմիայի անդամ
ապագայարան Զպիկնիեւ Պրզկեկեակի
ապահովութիւն չի ներշնչի երբեք: Կը
բացատրէ, թէ պիտի մտնենք մարդկա-
յին պատմութեան մէջ նոր փուլին մէջ:
Երեւոյթները դարձ, որուն մէջ մեր
ընկերութիւնները պիտի մեւակերտուին
«մշակութապէս», հոգեբանականորէն,
ընկերայնորէն եւ տնտեսականորէն թեք-
նիքի եւ կելարմիքի ազդեցութեան
տակ: յատկապէս օրտինաբարձրութեւ եւ
հազարդակցութեան գրութեան միջո-
ցով: Այս ընկերութեան մէջ, «մարդ-
կային վարմամբ պիտի դառնայ նուազ
ինքնարուի եւ նուազ խորհրդաւոր, ա-
ւելի ճշդորոշ եւ ենթակայ կանխամը-
տածուած յայտարարի մը»:

Տնտեսագէտներէն, ընկերաբանե-

բէն եւ ապագայաբաններէն շատ առաջ, Առաջին Համաշխարհային Պատերազմի օրերուն, փրակացի փոքր հրեայ մը, որսաննակի միջակ պաշտօնեայ, Յրանց Գաֆթա անխնայ եւ արտայայտիչ ճշմարտութեամբ մը նկարագրած է մարդուն կեանքը եւ անդունդը՝ առատութեան, արտադրութեան եւ սպառումի բնկերութեան մէջ, որ մերն է:

Նոյն եղբրական եւ յուսահատական հաստատումին յանդած են նաեւ Գամբի, Պեթթի եւ Իոնեսքոյի նման գրագէտներ եւ թատրոնի մարդիկ: Գուցէ ոչ մէկ ատեն, մարդուն ձայնը, գրականութեան, մտածումի եւ արուեստի ձայնը այսքան յռետես եղած է: Փիլիսոփայութիւն, գրականութիւն եւ թատրոն սովորաբար յանդած են ամէն բանի անխուսափելիօրէն փուն ըլլալու եղբրակացութեան, կեանքի անսահման տիրութեան, քայքայման եւ անէութեան բընագանցութեան: Որովհետեւ, տարակուսելի չէ միայն մարդուն գոյութեան անբաժանելիութիւնը եւ անոր խոր ճանճորտութիւնը:

Ուսանողական ապստամբութիւնները, որքան ալ մտացածին, որքան ալ սահմանափակ ըլլան երբեմն, միտածանակ կը հանդիսանան անանձնական աշխարհ մը, «Բեքմիթրոնիք» դարաշրջանի ենթակայութիւնները մերժելու առողջ կեցուածք մը: 1964-ին, Պերթիի ամերիկացի ուսանողներուն ապստամբութիւնը սկսաւ փիլիսոփայութեան ուսանող Մարիօ Մալոյի հետեւեալ խօսքերով. «Կազայ պահ մը, երբ մեքենային աշխատանքը կը դառնայ այնքան անելի, որ պարզապէս կարելի չէ դիմանալ այնուառնուագն կարելի չէ լուս շարունակել: Մեքենային պատասխանատուութիւնը ունեցող մարդոց եւ անոր տիրոջն պէտք է հասկնալ, թէ այդ մեքենան պիտի շարժուի այնու, եթէ դուք ազատ ըլլաք»:

Այս կէտէն մեկնելով, կը ծագին հարցականներ. երբանկութիւնը ըմբռնելի պիտի ըլլա՞յ «Բեքմիթրոնիք» դարաշրջանին: Ու եթէ երբանկութիւն գոյու-



ԿԱՊՐԻԷԼ ՄԱՐՍԵԼ

թիւն չունի, ինչո՞ւ ապրիլ: Ի՞նչ բանի կը ծառային գործը եւ ապստամբութիւնը: Ու ես՝ մարդս, ի՞նչ կ'ընեմ հոս: Աշխարհ ի՞նչ իմաստ ունի: Կը պատահի, որ մարդիկ կը նկատեն պատասխանը իրենք իրենց մէջ եւ իրենցմով գտնելու անկարելիութիւնը: Ու կը պատահի որ կը գտնեն զԱստուած, պէտք կ'ունենան Աստուծոյ, ծարու՝ Աստուծոյ:

Անշուշտ, ինչպէս կ'ընդդէ ջրիստոնեայ փիլիսոփայ Կայրիէլ Մարսել, «քսա երեսօյքիմ, իրաւունք չունինք բանալու, թէ ամէն դժգոհութիւն կ'ենքազրէ վեհագոյնի ձգտում մը»: Նմանապէս, ջրիստոնեաները շարունակ կը յիշեցնեն, թէ իրենց Աստուածը չ'ուզեր իր յագթանակը հաստատել մարդուն պարտութեան վրայ: Բայց Աստուծոյ հարցին նշանները գոյութիւն ունին: Ծարժանկարի, արուեստի, գրականութեան մէջ: Զանճարալի պիտի ըլլար զանոնք թուել:

Եկեղեցւոյ մարդիկ կը վախնան, որ Աստուած իսկապէս մեռած ըլլայ, քանի որ զանոնք գոյութեան մասին վէճ չկայ այլևայլ: Ինչ որ ճիշդ չէ: 21-ամեայ քարտուղարուհի մը կ'ըսէ. «Ունիմ բարեկամներու խումբ մը, տղաք ու ագ-



ՍՈՒՃԵՆՆԻՑԻՆ

ջիկներ: Ձե՛ք հաւատար, բայց երբեմն
կը պատահի որ վիճինք Աստուծոյ գո-
յուրեան մասին: Ես, չեմ գիտեր: Կ'ու-
զէի որ գոյութիւն ունենար»: *Չեռնարկի
տնօրէն մը, 46 տարեկան, կ'աւելցնէ.*
«Երբ մէկու մը հետ խոր վիճարանու-
թիւն մը ունիք, զժուար է ի վերջոյ
չհասնիլ գերագոյն մտահոգութեան»:

*Անորէ Մայրօ, 1967-ին Հարցա-
պընդունելով Փրանսական պատկերաս-
փիւսին կողմէ, կը յայտարարէր.* «Ար-
դի քաղաքակրթութիւնը կը փորձէ խեղ-
դել ենթակայութեան զգացումը — քէն
երբեք չի կրնար խեղդել, նոյնիսկ ուխ-
փի մէջ — որ իրմէ շատ զօրաւոր է, ու
կը կարծէ, քէ այսպէս կրնայ շարու-
նակուիլ: Արդ, ես համագումար եմ, որ
այսպէս չի կրնար շարունակուիլ: Կա՛մ
այն է որ մարդկութիւնը կը գտնէ նոր
վեհաութիւն մը, այսինքն նոր համաձայ-
նութիւն մը ենթակայութեան զգացու-
մին եւ, ըսնմք, բոզմոսին միջեւ — կո-
չեցե՛ք ինչպէս որ կ'ուզէ՛ք — ես կամ կը

ծնի նոր կրօնք մը, ինչ որ նոյնին կը վե-
րադառնայ»:

*Աստուծոյ վերաբերեալ խնդիրը Ա-
րեւմուտքէն Արեւելք կը ցատկէ: Ամե-
րիկեան համալսարաններու մէջ, Հար-
ցախոյզ մը ցոյց տուաւ, թէ ուսանողնե-
րու 80 առ հարիւրը կրօնական հաւատ-
քի մը պահանջը կ'արտայայտէ: Ամե-
րիկեան «Թայմ» շաբաթաթերթը, որ 8
Ապրիլ 1966-ի էր կողքը յատկացուցած
էր «Աստուած մեռած է» հարցումին, 29
Գեղարկածներ 1969-ի կողքը տրամադրած
է «Աստուած յարութիւն կ'առնէ» հա-
կառակ հարցումին եւ կը թուէ նշաննե-
րը կրօնական վերանորոգումի մը:*

*Գերմանիոյ մէջ, «Տէր Շրիլը» շա-
բաթաթերթին համար 1967-ի վերջերը
կատարուած Հարցախոյզ մը հաստատած
է, որ շախահասներու 86 առ հարիւրը
կ'ազօթէ: Եոյն երկրին մէջ, փիլիսոփայ
Մաքս Հորքհայմըր, որ մարքսիստ ուղ-
ղութիւն ունի եւ կը նկատուի ապստամ-
բական շարժումին ներշնչողը համալսա-
րաններու մէջ, 1970-ի սկիզբը «Շրիլը-
ր»-ին շնորհուած Հարցազրոյցի մը մէջ
կը յայտարարէ, թէ պէտք է դառնալ
Աստուծոյ եւ աստուածարանութեան՝
կարեւոր չէղբայնելու համար շարժու-*



ՍԻՆԵԱՎՍԿԻ

ըովին փլանաւորուած ընկերութեան» պայմանները:

Սակայն ամէնէն զարմանալի նշանները դուցէ կու գան Արեւելքէն: Եւրոպայի մէջ, 1969-ին «Պորպա» թերթին կողմէ հրատարակուած հարցախոյզի մը համաձայն, շահահասներուն 30 առ հարիւրը կը յայտարարեն, թէ հաւատացեալ են, ինչ որ արհամարհիք թիւ մը չէ, նկատի ունենալով անասուած քարոզչութեան ալիքը, որ իջաւ այդ երկրին վրայ: Խորհրդային Միութեան մէջ, մինչ «Սովետայա Ռուսիա» կը յայտնէ, թէ հաւատացեալներուն 20 առ հարիւրը հրիտարողներ են, «Կուսովայա Փրուտա» կը մտահոգուի, թէ «եկեղեցիներու փակումը հաւատացեալները անասուածի շփոթեց»: Մինիստրակի, բանաստեղծը, որ բանասարկուեցաւ, Արեւմտեան Սովետներէն, «Առաջին

շրջանակ»-ին եւ «Քաղցկեղաւորներու տաղաւար»-ին վիպասանը, նաեւ ուրիշներ կը վկայեն, թէ Աստուծոյ խնդիրը ուսական դրականութեան համար նոր դուր-գործոցներ կը ներշնչէ:

Կը մնայ իմանալ անունը Աստուծոյ, որ այսպէս ամէն կողմէ կ'ուզուի: Աստուածպաշտութեան աստուածը, լուծում եւ պարտաւթիւն լեցնող, ամէնէն աւելի հաւանականութիւն ունի: Տակաւին ոչ մէկ բան կ'արտօնէ ըսելու, թէ Եկեղեցիները, կառչած իրենց վերանորոգման եւ զբաղած իրենց կազմակերպական խնդիրներով, պիտի կրնան այս ձեւերը վերցնել: Ի վերջոյ պիտի յաղթանակէ աստուածպաշտութեան աստուածը, թէ այն Աստուածը, որ Եկեղեցիները կ'ուզեն ծանուցանել:

Եթէ անուշտ նոր անասուածութիւն մը չեն:



ԲԻԻԶԱՆԴ ԵՂԻԱՅԵԱՆ

ԱՇՈՒՂ - ԱՐՔԱՅ
ՍԱՅԱԹ - ՆՈՎԱ



Գ.— ԳԻՐՆ ՈՒՐԻ՛Շ ԳԻՐ, ԶՈՒՐՆ ՈՒՐԻ՛Շ ԶՈՒՐ՝ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ

Սխալ հասկացում բան մը եւս կայ Սայաթ-Նովայի մէջ, զոր հարկ է ջանանք ուզողի:

Վէճ չի մնար, թէ Սայաթ-Նովան բացառիկ լուսափայլումով մեծ առող մըն է ամբողջ հայ բանաստեղծութեան երկնակամարին վրայ, եւ արքայ մը՝ աշուղներու աշխարհին մէջ, ինքն իսկ է «աշուղ» կոչումին իրական սէրը, ժողովրդային խաներու մէջ «խալիսի նախար», բայց միանգամայն արքունի եւ իշխանական մէջլիսներու թաղը:

Սև անհասկնալի չէ, որ ինքն ալ զիտակից է իր այդ բացառիկ դերքին, հարուստ շնորհներուն եւ սանդձագործ ուժին: Ժողովուրդին մէջ կանգնած, բայց բոլորին ուսէն վեր հասակով տիպար մըն է ան աշուղներու մրցահանդէսին մէջ: Ու կարծէք թէ մըն ալ աշխարհին այդպէս «վերէն կը նայի»: Կ'ըսէ ու կը կրկնէ զանազան ոճերով.

«Հենու տեղացեմ գալիս իմ, խելի գարայր շահ իմ բերի,
Հիւնրէս լիքն է անգիմ լալով, նստահիրնուն գահ իմ բերի,
Հինդու մէջէմն գուս եկած՝ զրմէքով մաքահ իմ բերի»:

«Բեռներն վրայ չի գալիս, հակերս է սիլա-սիլա,
Անտակ ծովի մէջէն հաճած ակներ ունիմ լալ ու թիլաս»:

Կամ այն ճակտէ-ճակատ պարծանք խօսքերը, որոնք յաճախ կը կրկնուին՝

«Ամէն մարք չի կամայ խըմի, իմ գուրն ուրի՛շ ջրէն է.
Ամէն մարք չի կամայ կարդա, իմ գիրն ուրի՛շ գիրէն է»:

«Բունիաթս աւագ չիմանաս, քարամէն, քարուկրէն է,
Սալաւի պէս՝ առանց ցամփիլ. դուն շուտով խրաք(») մի՛ ամի»:

Դեռ՝ աւելի բարձրաթուիչ հայեացքով՝ Սայաթ-Նովա կ'ըսէ, թէ ինք այս աշխարհ իջած անցաւոր բայց անդին ուխտաւոր հի'ւր մըն է, որուն կարճ այցը պէտք է գուրգուրանքով ընդունուի.

«Կուսնց որ կարօտ մի ուխտաւոր՝ դո՛ւռոյ է եկել Սայաթ-Նովէն,
Ա՛նց է կացի ամէն դարպաս, ամէն արգիլ՝ Սայաթ-Նովէն»:

«Թէ վուր կարցրիս՝ էլ չի գտնի նորից մէկ էլ Սայաթ-Նովան,
Նա մի հատ էր աշխարհ եկաւ քանց մէ դարիս հիւրի նման»:

*Ու բացարձակ վստահութիւն ունի, թէ իր արժէքը ժայռի նման ան-
ւական է.*

«Որքան գուզէ քամին փրչէ մեծ ուժով,
Փեռ քարամէն յիծ կանա մի բան տամի»:

*Բայց ուղի՛ղը իմանանք. բանաստեղծի այս արգար ինքնադիտակցու-
թիւնը պարծանք ու հպարտութիւն մը չէ երբեք, այլ ներքին արժանիքի ճա-
նաչում մը, որ իրեն ինքնագոտահութիւնը կու տայ կոչում զգացող առաք-
եալի մը: Աշուղի այդ ինքնաճանաչումը նման է Յիսուսի յայտարարած ճշը-
մարտութեան, թէ «Արքայութիւն իմ չէ յայտ աշխարհէ»: — Իմ բերած
արքայութիւնս այս աշխարհին ծանօթ արքայութիւններէն տարբեր արքա-
յութիւն մըն է, հողիի ու լոյսի ու սիրոյ արքայութիւնն է:*

*Նմանապէս՝ աշուղը իր մէջ պիտոյ ըրած է թանկագին հողեկան աշ-
խարհի մը, եւ ասիկա՝ ո՛չ թէ զինք անկատելու մարդերէն, ու վեր դասելու
համար աշխարհէն, այլ աւելի՛ հա՛ մօտեցնելու համար մարդերուն, ու թխալ-
խալ բազմութեան, որպէսդի բոլորովին բաշխուի իր այդ անմահական ջու-
րը, ուր որ հարսնիք կայ, ուր որ սուգ կայ, ուր որ զրոյց ու սէօճպէթ՝:*

*Արդ, ի՞նչ է այն ասարբերութիւնը, որով Սայաթ-Նովան կը զանազան-
ւի ուրիշ բանաստեղծներէ: Իր այդ գուրիչութիւնը, բանաստեղծը ինքը չէ
միայն, իր հանճարը չէ պարզապէս, այլեւ իր բերած նոր մէկ ըմբռնումն
է կեանքի ու բանաստեղծութեան, նոր մէկ մեկնարանութիւնն է աշուղու-
թեան:*

*Նոր ըմբռնում ու նոր մեկնարանութիւն. որովհետեւ՝ իրմէ առաջ ե-
ղած էին եւ իր օրով ալ կային ուրիշ տաղերգուներ, որոնց սակայն ըմբռ-
նումն ու մեկնարանութիւնը սւրբի՛չ էր կեանքի ու բանաստեղծութեան մա-*

(*) Ձեռագիրներէն ըստն օւնիմ «Բարբառ» բառը, որ չի յարձարի համարիմ, պետք է ըլլայ «Բարբառ»: Իմաստը այս պիտի ըլլայ, քէ իմ գրուեալս, իմ առդիւրու կատար-
ածքը ամուր է եւ շուտով «Բարբառ» պիտի չըլլայ, պիտի չհանդուսի:

սին: Սայաթ-Նովայէն առաջ ապրեի էին ու երգեի՝ միջնադարու տաղա-
սացներ, շար-շարք սերունդներով, որոնք սքանչելի բանաստեղծութիւններ
սուսեի էին աշխարհին:

Անմահ առդեր դրած էի, սրբնակ, Նահապետ Քուչակ:

«Արտիկս է լալուկ տղայ,
Լայ օրն ի բուն քեզ կ'ուզէ, ես ի՞նչ եար անեմ»:

Ուրիշ հսկայ մըն է Ճրիկ, ան ալ իր մեծութեան գիտակից:

«Յրիկ ի՞նչ եզ է, կամ մօխիր,
Որ հանց գոհար բան շարէ նա.
Այն բազային եմ նրմանի՝
Որ փոքր որսի ո՛չ հաւանի»:

Կամ գոհար խօսքերը եսչատուր կեչտեցիին:

«Աշխարհս էր ի ծով նրման,
Զիս ի վայր տարաւ յանդիման.
Սէրն էր անգընդոց նրման,
Զիս ի խոր քաշեց փռչիման»:

Եւ Յովհաննէս Թլկուրանցիին, որ ինքզինք ճիւղ ալ կը կոչէ՝ եկեղե-
ցական սքեմի տակ սիրոյ երգեր տալը արդարացնելու համար: Եւ ասոնց
նման յիսուն եւ հարիւր ուրիշ երգիչներ, Մկրտիչ Նաղաշ, Կոստանդին Եր-
զրնկացի, Յովհաննէս Պլուզ, եւ շատեր, եւ Գրիգոր Այթմամարցի՝ որ կ'երգէ:

«Փիհով եմ, գիհով, հարեւ իմ սիրով,
Յերեկս արեւով, գիշերս երազով»:

Ու մանաւանդ Սայաթ-Նովայէն անմիջապէս առաջ եկած Նաղաշ Յով-
նաթան, «Քիւրքիստանի գիւզայնեբուն» երգիչը, որ ըստ մեզի՝ կը կազմէ
բուն փոխանցման օղակը տաղերգութենէ զէպի աշուղութիւն, զմայլելի տա-
ղեր ունի:

«Բո ձեռօրն ինձ գիր ես գրիւի,
Մեխակ ու շաքար մէջը լեցըրիւի,
— Հիւանդ էի ես՝ ազրացայ, գալում,
Վշտած էի ես՝ հեշտացայ, գալում»:

Համեմատութիւնները պահելով, ուրեմն, ըսելու ենք, թէ Սայաթ-
Նովան իր մամանակներուն մէջ առանձին կանգնած միակ աշուղը չէր: Եղած
էին իրմէ առաջ ալ ու պիտի ըլլային իրմէ հաջն ալ հայ երգի հանճարներ:
Յանկարծակի եւ անպատասխան ամայութենէ մը ծագած աղբիւր չէ Սա-
յաթ-Նովան: Ժէ—ժէ. դարերը ունին նոր շունչով հայ երգիչներ:

Սայաթ-Նովան «ուրիշ» է սակայն, ու միւս տաղերգուներէն կը զատ-
ւի երկու տեսակէաներով:

— Նախ, մեզի ծանօթ միւս բոլոր տաղերգուները միայն գրո՛ւղ տա-

դերգուններ են: Իրենց ժխայն գրուած բանաստեղծութիւն է, եւ առաւելապէս չիմաստութիւնն փնտոողներուն ուզողուած՝ զանոնք ճշմարտութեան ու բարի կենցաղին առաջնորդելու համար, եւ ո՛չ թէ ժողովուրդին ուղղուած բանաստեղծութիւն՝ ժողովուրդը երջանկացնելու համար: Մինչդեռ Սայաթ-Նովան իր երգը ո՛չ միայն կը ստեղծազործէ ու կը գրէ, այլ միանգամայն ի՛նքզնիքն ու մանաւանդ կը նուազէ: Իրժով բանաստեղծութիւնը կը վերածուի կենդանի ծրարի մը, ուրախութեան ու խնճոյքի տաք միջավայրին մէջ անմիջականօրէն յօրինուած ու երգի ու երաժշտութեան վերածուած բանաստեղծութիւն, որ զայն մտիկ ընողը կը քաշէ ու հետը կը տանի երջանկութեան աշխարհին:

Իրժով է, որ կը ստեղծուի ճշմարիտ աշուղ-տիպարը հայ բանաստեղծութեան մէջ, տիպար՝ որ յօրինող է եւ յօրինածը միանգամայն իր մայնով ու նուագովը կենդանութեան բերողը: Իր վրացերէն մէկ երգին մէջ կ'ըսէ.

«Սայաթ-Նովան եմ, ուժս ձայնիս մէջն է,
Սագն անուշ է, տերն անուշ է, խաղն անուշ է»:

— Սայաթ-Նովան տաղերգուններէն զատուող միւս տարբերութիւնը աւելի հիմնական է. իր բանաստեղծութեան գլխաւոր քեմայիմ տարբերութիւնն է: Նախընթաց տաղասացներու կեդրոնական նիւթն էր կեանքի բարոյախօսական փիլիսոփայութիւն, իմաստուն խրատ ու բարի յորդոր: Եւ այս կեդրոնական գիծին լուսանցքին վրայ էր միայն, որ անոնք երբևէն կը համարժակէին անհատ մարդու անձնական յուզումները եւ սէրը արտայայտուող տաղեր գրել, ինչպէս նոյններ կարդացինք վերեւ: Մինչդեռ Սայաթ-Նովան բոլորովին անհատ մարդու անձնական յուզումները կը դարձնէ իր երգերուն բուն ու գլխաւոր թեման, ու բարոյախօսականը կը թողու լուսանցքի վրայ:

Հայ բանաստեղծութեան քեմայներու տեղաշրջում մը կը կատարուի Սայաթ-Նովայով. ինչ որ լուսանցքի վրան էր՝ կեդրոնական կը դառնայ, եւ ինչ որ կեդրոնական էր՝ լուսանցքին կը սահի:

Ու ժամանակի սղզային մթնոլորտին պահանջն է թեմաներու այս տեղաշրջումը: Ժողովուրդներ՝ Միջին դարերու սելճուզ, թաթար, պարսիկ արշաւանքներու աւերիչ հեղեղներուն տակ զարերով կծկուած, ճնշուած, ինքնամոլոփուած, իրենց մտածումին ու երգին նիւթն էին ըրած միայն զէպի հոգեկան ու բարոյական աշխարհ խորասուչուող զգայնութիւնները: Ժէ-ժը. գարուն սակայն, երբ պարսիկ-օսմանեան հակամարտ ուժերը իրենց հաւասարակշռութիւնը գտան ու երկիրը կովկասեան ժողովուրդներու ազատագրական շարժումներով քիչ մը ազատ շունչ ու բարի արև տեսաւ, անհատ մարդ արարածի ճնշուած-բանտուած յուզումները յանկարծ պոթկուած մը կ'ունենան զէպի զուարթ, ուրախ կեանք, մտեւէն ետքը ծաղկող առաջին նշանիին պէս: Ժողովուրդը չ'ուզեր այլեւս միայն գրուած մունջ բանաստեղծութիւն կարդալ, կ'ուզէ երգուած հնչիւն բանաստեղծութիւն լսել եւ ասլրել:

Եւ անհատ մարդ էակին այդպէս ինքնիր արժէքը ճանչնալուն ծաղկուն մէկ յորդումն է անհա Սայաթ-Նովան: Իր հայերէն երգերէն մէկուն մէջ, (21), Սայաթ-Նովան ինքը կ'ըսէ իր երգերու արժէքին մասին, թէ եօթը իմաստուններուն խօսքերէն աւելի հզօր են իր ամէն մէկ հնչիւն տողերը.

«Քանց եօթն իմաստսիրացըն շատ է
Էս քո Սայաթ-Նովալու բանքերը մէ-մէկ»:

Եւ ահա զիրար լրացնող այդ երգի ու զգայնութեանց մէջն է, որ Սայաթ-Նովան գիւտը կ'ընէ իր բացատիկ արուեստին: Կը ճանչնայ մարդկային այս նոր թեման ու յուզումները արտայայտելու ընդունակ սքանչելի գործիքը, որ է քաւանջան, եւ ամբողջ անձովը կը փարի իր քամանջային: Կը պանէ, թէ իր մասները քամանջային վրայ խաղալու պահուն աւելի դէրաւ: Աւ լման կրնան արտայայտել իր սիրտին զգայնութիւնները, քան թուղթի վրայ գրելու պահուն, ինչ որ միայն կ'ընէին նախկին տաղերգուներ:

Ահա ինչո՞ւ այնքան սիրագորով կը գրկէ իր քամանջան եւ անոր խնդակաթ զովքը կ'երգէ: Քամանջան այլեւս աշուղի անձին մէկ անբաժան մասն է ու հանճարին հարազատ թարգմանը: Այդ քամանջան գրուող տեսակ սպերու մէջ ամէնէն բարձր գոյումն է՝: Ան գոզաշնորով բոլորուած մէջ-լիսներու կէսն է: Ան է, որ «տխուր սիրտերը կ'աւրախացնէ», ու շատերն այ կը լացնէ: Քամանջան «ամուշահամ գիծուով լիցում ասկի քա՛ւմ է», բազմութիւնները զգացումի բարձրացնող օրհնուած նուագարանը:

Սայաթ-Նովայի այս նոր երգն ու նոր թեման ու նոր երաժշտութիւնն է, որ ժամանակակիցները լման չեն հասկնար եւ աշուղի սիրտին վիշտ կը պատճառեն: «Նաճազ մարդիկ», նախանձ-անշնորհներ չեն կրնար «տեսնել ու հասկնալ» նոր ժողովրդային արուեստի ուժը: Անոնք վարժուած են չոր թուղթի վրայ գրուած բարոյախօսական տաղեր միայն կարգալու, որոնց գէժ ահա ինք կ'աղաղակէ:

— Իմ գիրս ուրի՛շ գիր է, կեկանի երգ է, իմ ջուրս ուրի՛շ ջուր է, հասում երաժշտութիւն է...

Եւ անշուշտ ի՛նքն է, որ ունի իրաւունք, որովհետեւ իր տուածը միայն բանաստեղծութիւն չէ, ինքը անձնաւորումն իսկ է կենդանի բանաստեղծութեան, որ այնուհետեւ պիտի չդադրի մշտանօ սպրիւր մը ըլլալէ:

Դ.— ՍԻՐՈՑ ԵՐԳԻՉ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ

Ինչպէս բոլոր աշուղներուն՝ Սայաթ-Նովայի երգերուն լըջանակը եւս կը կազմէ Սէրը, բոլոր դարերու բանաստեղծութեանց ու վիպերգութեանց զլիխաւոր նիւթը: «Աշուղ» կոչումը արգէն կը բնորոշէ «սիրող», սիրակարօտ, յափշտակուած մարդ՝ դեղեցկութեան ու լոյսի տեսիլքով:

Սակայն այստեղ եւս, զժբախտաբար, սխալ հասկցուած կամ թերի գնահատուած սէր մըն է Սայաթ-Նովայի երգած սէրը:

— Նախ, բոլորովին ճակտէ-ճակատ մերժելի է այն մեկնարանութիւնը, ըստ որուն՝ Սայաթ-Նովայի երգած սէրը զգայարանական ապրումներու տարփանք ու տենչն ըլլայ:

Փառքով պէտք է յիշատակել, թէ հայ ժողովուրդի բոլոր դարերու երգիչներուն ալ գործերը չեն ազարտած բնաւ մեր ցեղը չըջապատող սեմական ու Իրան-թուրան ցեղերու մարմնապաշտ սիրոյ ըմբռնումով, ինչպէս կ'արտայայտուի այդ ժողովուրդներու շարգիներուն ու քիւրճիներուն մէջ:

Նմանապէս՝ Սայաթ-Նովայի երգերուն մէջ, հակառակ որ զանոնք յօբիմած է զգայարանապաշտ թուրանական միջավայրի մը մէջ, տեղ կամ տող չեն դաւած կիբք եւ զգայարանապաշտութիւն: Ուղղակի գեղունիին գովքը

ըրած իր սողներուն մէջ իսկ Սալաթ-Նովան հասուն է ու հանդարտ, ազնւ-
ւական կեցուածքով ու ժուժկալ լրջութեամբ.

«Երեսդ նոր լուսնի նման, քանի կեցայ՝ կու բալարուի,
Դաստամազդ նամ չի ուզի, առեցց հիւսիլ կու սօրուի»:

«Քու տէրն պաղչէն ի՞նչ անի, քու հոտըն ռիհան իս շիմի,
Քամին մէջըն անց է կենում, մագերդ ելեան իս շիմի»:

«Թամամ աշխարհ պըտուտ եկայ, չըրողի Հապաշ, նագանի,
Զըտեսայ քո տիտարի պէս, դուն դիւիունէն քա՛շ, նագանի»:

Իր վրացերէն մէկ երգին մէջ (ԹԻԿ 11).

«Ի՞նչ կուլի, ետ՛ր, օրից մէ օր միր տուն գաս,
Ուրիշների նըման չըգաս՝ քա՛տուն գաս.
Վերէն վար գաս, լուսնակի պէս ինձ հիւր գաս,
Որ պատկերըդ ամէն ետտի ցոյց չըտաս,
Ծիծեռնակի պէս մեր դուռնէն դուրս գընաս»:

Կամ քնքոյշ երգով.

«Փուզիմ ծեզի արեւ ըլիմ, վառ ըլիմ,
Զեր բազումըն մէ շըվաճով ծա՛ն ըլիմ»:

Այսպէս, չար մտածումներով երբեք չարաստորութեամբ սէր մըն է Սալաթ-
Նովայինը:

Նաեւ, ընդունելի չի թուիր՝ Սալաթ-Նովայի, այսպէս կոչուած, «տա-
ռապած սիրոյ» տեսութիւնը, որուն կ'ակնարկուի յաճախ դրազատներու
կողմէ, իբրեւ թէ ան սիրահարութեամբ ըլլար բարձրագահ զեզունի մը, որուն
սակայն չէ կրցած հասնել, եւ ուստի՝ իր լրումին չհասած սէրը իր սիրտը
այրած, խոցելէր տարտի զերակէ ծովունս մէջ ձգած է:

Ճիշդ է, որ Սալաթ-Նովայի երգերուն մէջ շատ կան տաղեր, որոնք
«մերժուած սիրոյ» մը բողբոջումները կը ցոյցնեն, բայց այդ տաղերը
իրենց բառացի իմաստով ընդունելը՝ շատ մակերեսային դատում մը պետի
ըլլար: Օրինակներ բերենք իր զանազան երգերէն.

«Տարտս ասիմ՝ կու լան սարիր.
Էս ի՞նչ քան էր քր դուն ալիբ,
Սալաթ-Նովան ջունուն արիր»:

«Անապ քիզ ի՞նչ գեթ եմ արի՝ կենում իս խռով, աչքի-լուս,
Աշխարհա աշխարհով կըտացաւ, իս՝ քեզանից ան՛վ, աչքի-լուս,
Սիրտս լորի պէս խորվեցիր էշիկի կրակով, աչքի-լուս,
Ես՝ մի փոքրը նախ նըման, քու էշիկ է ծա՛վ, աչքի-լուս»:

«Արի՛ բլբուլ, խօսէ՛ բառըն,
Օխնուի քու եկած սարըն,
Քիզ վարդն էրից, ինձ իմ ծարըն,
Դու մի՛ լաց լի, ի՛ն իմ լարուս»:

«Արի՛ մէ տարտս իմացի,
 էշխէմէդ համան իմ լացի.
 Օրս էսպէս անց է կացի՛
 Դարերով
 Դարերով.
 Բարով տեսայ իմ սիրական»:

«Էնտար աչկըս չէ ցամաքում՝ սիրտիս մէջըն արիւն մընաց,
 էշխէմէդ հիւանդ պառկեցայ, աչկըս անապարհիմ մընաց»:

«Գիշեր-ցերեկ մամ իմ գալի՛ էշխէդ եամն-եամն, գոգալ,
 Անգամ արա, մատա՛ղ իմ քիզ, մի քիչ կամա՛ց գընա, գոգալ,
 Աշխարհըս ո՛ւմ մընացիլ է, որ ինձ ու քիզ մընա, գոգալ,
 Մակար մեռա՛ւ Սայաթ-Նավան. անգամըդ խաղի՛ է կարօս»:

«Ես՛ր, էու կարօսդ քաշում իմ անմահական ջըրի մըման,
 Ռա՛հմ արա, դուռդ եմ եկի՛ ուչախի(*) ու փրի մըման,
 Սէրըդ սիրտըս կէս է արեւ շահվարտարի թըրի մըման,
 էշխի՛դ ալափը ինձ վառեց քաշկական հուրի մըման»:

«Ես էս տարտին վո՛ւնց դիմամամ, մատամ սի՛րտս ունիմ քարած»:

«Գիտիմ որ, ես՛ր, դուն լայիզ չիս անի ինձ.
 Դուն քագաւուր իս, էս մի խեղճ տարվիշ»:

Այսպիսի տողեր կարգալով՝ քննասէրներ փնտառուքի ալ ելած են, թէ արդեօք ո՛վ էր անոր գտնուող այրող» այդ դեղուհին, արդեօք արքունի քէօչկին նստած իշխանուհի՞ մըն էր, արդեօք զատակարդային ժիջնորմով մը բաժնուած սիրուհի՞ մըն էր, արդեօք սա՞, արդեօք նա՞... չխոստովանուած զազտի՞ք մը... Մեկնաբաններ նոյնիսկ Հերակլ թագաւորի քրոջ Աննայիմ անունն ալ բերած փակցուցած են անոր սիրոյն... կամ 4-5 ուրիշ անուններ... Մենք բառեր չենք փնտառեր՝ պարզօրէն ըսելու համար, թէ բոլորովին անելորդ է այդ մտահոգ փնտառուքը, մանաւանդ՝ անտեղի ու հասարակ մտեցում մը բանաստեղծութեան: Որովհետեւ ո՛չ մէկ հասուն տաղանդ ուղղակի ու ձերկ-ձերկ պատկերներով պիտի տար իր անմահական ապրումի ծալքերը: Ու Սայաթ-Նովան ո՛չ թէ իր սեփական անմին սէրը կը պատմէ, այլ՝ ի դիմաց մարդկան՝ մարդ արարածին սիրոյ ապրումները կ'անձնաւորէ իր երգերուն մէջ: Ինք բոլոր սերունդներու մարդոց փոխանորդաբար կ'երգէ անոնց սիրոյ սառազանքները:

Որովհետեւ սէրը ինք տառապանք մըն է արդէն, ու Սայաթին երգածը այդ անանձնական համամարդկային սէրն է:

Պէտք չէ աննկատ անցնինք սա իրական տուեալէն, թէ Սայաթ-Նովան իր երգերը յօրինած է հասուն տարիքին, անուուազն 40-50 տարեկանին, այսինքն՝ ամուսնացած, ընտանիքի ու չորս զաւակներու տէր սիրագործով հայր մարդու մը վիճակին մէջ: Ու կարելի չէ հաշտեցնել իր այդ կեանքի լրջութիւնը — որուն ինքն իսկ կ'ակնարկէ, թէ ինք բարձր դասէ մարդոց մէջ ալ սիրուած ու յարգուած էր, որովհետեւ դիտէր մարդկանց առջեւ ինքզինք լաւ ու լուրջ պահել — այդպիսի խենթ սիրերգութեանց հետ... Ուստի՝ ուրիշ մեկնութիւն չենք կրնար տալ, բայց թէ այդ երգերը անանձնական

(*) Սխալ է կը կարծենք դարձեալ, ձեռագիրներու գործածած «ս-թ» բառը: կը յարմարի միայն ուշաբ թուան իմաստը:

սիրահարութեամ մը ալեկոծումները չեն, այլ պարզապէս մարդկութեան տառապալից սէրը անձնատրոզ ճշմարիտ արուեստ:

Մանուանդ սա պարագան, թէ ինք կ'երգէր մարդոց մէջիսմերուն մէջ, եւ այդ մարդոց համար, ու երբեք պատշաճութիւն չկար, որ ան հոն իր անձնական սիրոյ խոստովանութիւններ ընէր, կամ թաղաւորի պալատին մէջ, թագաւորին առջեւ կանդնած՝ թագաւորի զբոլ հանդէպ իր սիրահարութիւնը երգէր...

Արդ՝ եթէ Սայաթ-Նովայի տուած գեղեցկութեան պատկերի հտին անհատ կիմ մը չկայ, ուրեմն ո՛րքան կատարեալ կը ներկայանայ անոր արուեստը՝ այնպիսի հարազատ գոյներով իտէալ կիմոյ պատկերը տալուն մէջ: Իր երգած սէրը՝ մարմնականէն վեր, նուրբ ու վսեմ ազնուական սէրն է, այստեղ նաեւ փաստը, թէ ան իտէալ կնոջ ու գեղեցկութեան պատկերն է, որ կը պաշտէ: Գերագոյն յուզումով կու տայ այդ գեղեցկութեան նկարագրութիւնը:

«Աշխարհումքս ախ չիմ քաշի՝ քանի վուր քա՛ն իս ինձ համա,
Անմահական ջրով լիէքն օսկէ փնջան իս ինձ համա,
Նստիմ վրէս շուտք անիս, գարբաք վըրա՛ն իս ինձ համա»:

«Մէջքդ սալքու զինարի պէս, ռանգըդ փռանգի ատլաս է,
Լեզուդ շաքար, պոռոջ մտմար, ախէ՛քդ մարգրիտ ալմաս է,
Օսկու մէջքն միմա արած՝ աչկերդդ ախնակապ քաս է՝
Պատվական անգին ջավաեիր՝ լալ քաթէշխան իս ինձ համա»:

«Վըրէ շուտ գամ բլբուլի պէս, սիրով սէյրա՛ն իս ինձ համա»:

Իրական հայեացքով՝ իր նկարագրած գեղեցկութեան պատկերը մեր աշխարհին մէջ մարմնապէս գոյութիւն չունեցող էակի մը պատկերն է: Մարդու միայն սիրտին ու երակին մէջ գոյութիւն ունեցող գեղեցկութիւն մըն է, աննկարագրելի լուսափայլում մը, միրա՛ծ մը,

«Ես՛ր, քիզ ինչն՝վ թարիփ անիմ, աշխարհումքս քան չըմբնա՛ց,
Կրակէ ծովէմէն դուրս եկած՝ առշտ զէշիրա՛ն իս ինձ համա»:

«Կուտաշ ասիմ՝ շուրեղէն է, կու մաշի,
Ջէշրան ասիմ՝ շատ մարդ քիզ հետ կու եաշուի՝
Բաս վո՛ւնց թարիփ անիմ, միրա՛ իս, գոգալ»:

«Թէ մանիշակ ասիմ՝ տարեմէն կ'օսին,
Թէ ջավաեիր ասիմ՝ քարեմէն կ'օսին,
Թէ որ լուսին ասիմ՝ տարեմէն կ'օսին,
Արեգակի նման փառա՛ իս, գոգալ»:

Այսպէս, բոլոր տարրերէն վեր, միայն լո՛յսն է, որ կրնայ տալ իրական նմանութիւնը իր իտէալ գեղեցկութեան: Եւ աշուղը ուրիշ բանի չի ցանկար, բայց այդ գեղեցկութեան հլու գմայլիլ, անոր շողերուն տակ երջանկանալ: Նոյնիսկ եթէ տոտապանք ըլլայ, կամ մա՛հ, բաւական է որ ինք զրկուած չմնայ այդ դմայլանքէն: Որքան ատեն որ կեանք կը վայելէ՝ ինք այդ գեղեցկութեան գուրպա՛ն է:

«Քանի վուր քան իմ, ես՛ր, քիզ գուրպա՛ն իմ,
Ծար, զատէդ տամիմ, քն՛դ քիզ սէ՛յր անիմ՝
Մո՛ւտ պագլէն նագով, քիզ գովեմ սագով»:

Իր սէրը վերջնական, ու մինչեւ մահ, ու մահէն ալ անդին տանող սէր է: Ու գեղեցկութեան պաշտամունքը իր մէջ այլեւս առօրեայ պահանջն է կեանքի, եթէ «մի շարաթ» իսկ զայն շտեմնէ, կը կոտորի իր «քամանիկ լարը»:

«Թէ մի շարաթ փոք չիմ տեսնի՝
Կու կտրիմ քամանիկ սփմըմ.
Ես էլ ուրիշ ետք չիմ սիրի,
Աշխարհումըս դռ՛նն իս իմին»:

«Ես փոքանից չիմ հեռանայ՝ քէ շխանի մանիս վատէն,
Հընչափ քի ուրախ կեանս, Սայաթ-Նովան առնէ զատէն»:

«Սայաթ-Նովան սասց.
— «Ձալում, ես էմ մտնիմ մահ չիմ ասի՝
Հինչափ քի դում վրէս լաս
Մագդ շաղ տալով, աչքի-լուս»:

Ես իմ մահուանն օրն իսկ մեռած չեմ գրար, որքան ատեն որ դուն իմ վրաս լաս՝ մազերդ արձակ շաղ տալով:

Ասիկա իր անմահութեան դիտակցութիւնն է արդէն, թէ որքան ատեն որ իր սէրը պիտի հնչէ աշխարհի մէջ ու զինք զրկէ գորովանքով՝ Սայաթ-Նովան մահ պիտի չունենայ:

Բուք եւ անփոք դատում է, ուրեմն, ըսել, թէ Սայաթ-Նովայի սէրը «չժբարխտ սէր» մըն էր: Ո՛չ, անոր երգած սէրը ամէնէն երջանիկ սէրն է, իր սիրածին համար զոհուելու իսկ պատրաստ, մահկանացու կեանքը անմահութեան տանող սէրն է: Ու մահուան աշխարհէն իսկ մարդը ետ կեանքի բերող սէրը, որ կրնայ ըսել.

«Թէկուզ անմահութիւն կ'ուզիս՝ սիրով կու փորիմ փոք համա»:

Ասիկա սիրոյ աստուածային ստեղծագործ ուժի ըմբռնումն է այլեւս, բարձրագոյն ըմբռնումը: Սայաթ-Նովան զեւտը ըրած է սիրոյ ուժով մարդ էակը «վերստին ծնունդի» բերելու: Ան կ'ուզէ մարդ էակը կրթել, ազնուաբերել, սիրտը հողեկան արթններու ու միտքը բարոյական ճշմարտութեանց բանալ, զայն վերածնել, եւ այս վերածնիչ գործը կարելի է միայն մէ'կ գերազոյն ուժով — սիրոյ ուժով:

Ուստի, Սայաթ-Նովայի կեանքի փիլիսոփայութիւնն է՝ թէ — ո՛չ թէ խրատն ու բարոյախօսութիւնը, ինչպէս ըրեք էին իր նախորդները — այլ սէ'րն է միայն դաստիարակիչ, ազնուացուցիչ ու փրկագործ կանոնը կեանքի, սէրը՝ մաքուր, վճիտ, անխիթական բխումը հողիի, սէրը, որ դիմացինէն ոչինչ կը պահանջէ, բայց ինք պատրաստ է անոր տալու իր ամէն ունեցածը:

Սէրն է միայն, որ մարդ էակը կրնայ տանիլ մահէն ալ անդին՝ անմահութեան, արքայութեան, նիւթէն անդին՝ հողիի աշխարհին:

Սիրով պիտի աստուածանայ մարդ արարածը:

Ու կեանքի այս փիլիսոփայութիւնը հիմնապէս նոյն այն փիլիսոփայութիւնն է, որ կայ հայու քրիստոնէական աւետարանին մէջ:

Սայաթ-Նովան ուրեմն առաջնալ մըն է ինքն ալ — փրկագործ սիրոյ արքայութեան առաջնալը, թէ սիրով միայն կրնայ փրկուիլ մարդ էակը:

(Շար. 2)

Բ. Ե.

Լ. ՄԿՐՏՁԵԱՆ

Ընթացիկ Բանավէներ Ազգային Հարցերի Շուրջ

Բ.

Թողալով եւ Սեբրզիի բանավէնային յօդուածը սկսում էր այսպէս. «Արդի դարաշրջանը շատ նոր բան է մտղմում ազգային յարաբերութիւնների տեսութեամ ու գործնականի մէջ: Որոշ հաստատուած հասկացողութիւններ մի կողմ եմ նետում, որպէս նեցած, ուրիշները զարգանում են, մշտում՝ ըստ կեանքի պահանջների: Կարեւորագոյն նշանակութիւն ունի ազգ հասկացողութեան քովանդակութեան պարզումը եւ ըստ հմարտութեան մշտիս մեակերպումը, առանց որի անկարելի է բարար խորութեամբ բացայայտել ազգերի ու ազգային յարաբերութիւնների զարգացման արմատական շատ հարցերի էութիւնը»:

Այնուհետեւ յօդուածագիրները հանդէս են գալիս արտասահմանեան մի քանի ազգագէտ-տեսաբանների դէմ, նըրանց դրոյթները համարելով իտէպիատական: Թորհրդային Միութեան մէջ, ինչպէս յայտնի է, երկար ժամանակ պարտադիր դոգմա էր հանդիսանում ազգի մասին տակաւին 1913 թուին Ստալինի մեակերպած եւ Լենինի հաստատութիւնն ստացած բնութագրումը: Այդ բնութագրումն, ի հարկէ, Ստալինի

անմեական գիտը չէր, այլ ժամանակի բուլշեւիկեան տրամադրութիւնների տեսական ամփոփումը: Նա այդ նոյն տեսութիւնը մասամբ վերաշարադրեց 1929 թուին, իսկ յետոյ էլ մայրեց իր երկրի յետպատերազմեան հրատարակութեան մէջ՝ 1946 թուին: Ստալինեան մեակերպումը այս էր. «Ազգը մարդկանց պատմականօրէն կազմակերպուած կայուն ընդհանրութիւնն է, ծագած չորս հիմնական յատկանիշների հիման վրայ, այսինքն՝ լեզուի, տերիտորիայի, տրմտեսական կեանքի եւ ազգային մշակոյթի իրատեսակ առանձնայտկութիւնների ընդհանրութեան մէջ դրսեւորող հոգեկան կերտուածքի ընդհանրութեան հիման վրայ»: Մեզ համար առեւալ դէպքում կարեւոր չէ, թէ այդ մեակերպումը որքանով է ճիշդ եւ որքանով սխալ, եւ առհասարակ ազգերի դոյութեան մասին վաւերական պատկերացում կազմելու համար քնաւ էական չէ, թէ հրատարակում ինչպիսի բնութագրումներ դոյութիւն ունեն: Ստալինի դրոյթը մէջբերեցինք, որովհետեւ դա խորհրդային պաշտօնական ազգագիտութեան այրուքինն է համարուել միշտ եւ, բացի այդ, «Վոպրոսի իստորիի» ամսագրի բանավէնը դրա շուրջն է պատուած: որոշելու համար, թէ դրանց ինչը պէտք է թող

նել, ի՛նչը մի կողմ նետել եւ ի՛նչը լրացրել ու ճշգրտել:

Ռոզալուին ու Սևերդլինը, անդրադասանով ստալինեան ձեւակերպմանը, զրուս են:

«Այդ սահմանումը կառուցուել է պատմական սահմանափակ ճիւղի վրայ՝ հիմնականում եւրոպական ազգերի կեանքից: Դա պահանջում է լուրջ նշքումներ (մանաւանդ այսպէս կոչուած հոգեկան կերտումով հարցում) եւ լրացումներ՝ հաշուի առնելով նորը սոցիալիստական ազգերի զարգացման մէջ եւ իմպերիալիզմի զարգացումը կարգի տնկման հետ կապուած ազգային պրոցէսների մէջ»:

Ապա, երկար ու հանդամանայից բացատրութիւններից յետոյ, տալիս են ազգի իրենց բնորոշումը:

«Ազգը մարդկայն պատմականորէն կազմաւորուած ընդհանրութիւն է, որը բնութագրուած է տնտեսական կեանքի (բանուոր դասակարգի տակայնութեամբ), տիրիտորիայի, լեզուի (մանաւանդ զըրական), էթնիկական պատկանելութեամբ իմքնագիտակցութեամբ, ինչպէս և հոգեբանութեամբ, կենցաղի աւանդոյթները, մշակոյթի ու ազատագրական պայքարի արդ տառնակայնութիւնների կայուն ընդհանրութեամբ»:

Ինչպէս երևում է, այս բնորոշումը շատ աւելի երկար ու ձգձգուած է, քան ստալինեանը: Ռոզալուին ու Սևերդլինը նաեւ որոշում են ազգերի տեսակները, առայժմ ճանաչելով հիմնականում երկուսը՝ հասարակայնորէն այլատարր ազգեր զարգացած կադիտալիզմի պայմաններում եւ սոցիալիզմի օրօք զարգացող հասարակայնորէն միատարր ազգեր, իսկ ըստ էութեան ընդունելով եւ երբորդը՝ զարգացող կարգի փլատակներէ վրայ ձեւաւորուող իւրայատուկ տնցման տեսակի ազգերը: Այդպիսով, նրանք մերժում են եւ Պորհրդային Միութիւնում ստարածուած զբուրժուական ազգի հասկացութիւնը:

Ռոզալուին եւ Սևերդլինի յօդուածի կազմակերպեամբ ծաւալուած մտքերի հրապարակային փոխանակումը ուշա-

դրաւ էր մի շարք առումներով: Ճիշդ է, մասնակիցները երբեք չմտնեցան հարցի բուն եւ գործնական էութեանը, նրանց զործածած բառերն ու պատկերացումները շատ աւելին չէին, քան կոմունիստական-լենինեան սովորական քաղաքական բառարաններն են պարունակում, ազգերի իրական կացութիւնների վերլուծումը փոխարինեցին սխալաստիկական դրոյթներով: Բայց նրանց արտայայտուելու մեւը, ըստ հնարաւորին փափկանկատ վերաբերմունքը այլ հեղինակների նկատմամբ, որոշ իրազեկութիւնը արտակոմունիստական ազգայնական դրոյթներին ու ազհասարակ մըտաւոր հետաքրքրութիւնը, թէկուզ պայմանականորէն պզատ բանավէճի պատճառած անջող հրճուանքը՝ նորութիւն են խորհրդային պայմաններում: Հենց միայն զ՛նչ է ազգը» հարցին պատասխանելու համար բանավէճին մասնակցեցին բազմաթիւ մտաւորականներ Պորհրդային Միութեան կենտրոնից ու զանազան անկիւններից: Ամազրուստ սուրբիցին 15 մեծ յօդուածներ, 5 փոքրածաւալ յօդուածներ, իսկ «Հրապարակուած նիւթերի տեսութեան» մէջ ամփոփուեցին 18 հեղինակների յօդուածներ, շահուած անարձագանք մտացածնները, որոնք, սակայն, անպայման հաշուի են առնուած: Տասնհինգ մեծածաւալ յօդուածներից չորսի հեղինակները հայեր են, որոնց մասին խօսք կը լինի առանձին գլխում:

Բանավիճող հեղինակների յօդուածներում ճիշդն ու սխալը, ըստ մեր ըմբռնումների, իրար են խառնուած եւ առհասարակ չի կարելի ասել, թէ ո՞մանք միայն ճիշդ մտքեր են յայտնում, իսկ ուրիշները՝ միայն սխալ: Ուտտի մեր խնդիրն է լինելու՝ շատ համաօտարար պարզապէս նշել, թէ ո՞ր յօդուածում ինչի՞ վրայ է դրուած հիմնական շեշտը: Բացի այդ, բանավէճին մասնակցեցին ամենազգի հեղինակներ եւ առհասարակ դժուար է միայն ազգանուններից դատելով միշտ էլ հաստատ որոշել, թէ ով յատկապէս ո՞ր ազգին է պատկանում:

Բայց ուշագիտ ընթերցումը հնարաւորութիւն է տալիս անսխալ կրահելու, որ ամենք, նոյնիսկ զարուզի մեակերպումների միջով, ուղղակի մեծապետական դիմ են անցկացնում, երբեմն միահիւսելով աշխարհազաղաքացիական միտումների հետ, իսկ ուրիշներն էլ, մասնաւոր ուղուտ փոքր ազգերի ներկայացուցիչները, շեշտը դնում են ազգային աստեղծայատուութիւնների հաշուարժան ու նանաշէլ տալու վրայ: Այս ամէնը տեսնելուց յետոյ, ակամայից յիշում եւ ուզում ենք այստեղ մէջբերել մի փոքրիկ հատուած խորհրդահայ արձակագիր Բաղիշ Յովսէփեանի «Նու հասկացա՛ք իմ» վիպակից, որը Խոյսեկ Մովսէսեան գրականութիւն» ամսագրի 1969 թուի օգոստոսեան եւ սեպտեմբերեան համարներում: Ահա՛ թէ ինչպիսի խօսակցութիւն է տեղի անենում վիպակում ներկայացուած աններից մէկը՝ երիտասարդ, քննական ու որոնող միտք ունեցող Յովսէփի եւ վիպակը առաջին դէմքով պատմողի ու նրա ծանօթ աղջկայ մէջը:

«Հարիւրաւոր, հագաբաւոր բաներ կան, որ պէտք է չլինեն, բայց լինում են: Դուք հարցնում էք, թէ ինչո՞ւ: Դժուարանում եմ պատասխանել, որովհետեւ գծուար է: Պատերազմը, օրինակ, չեզոքի համար անհրաժեշտ եզր է մարդկային մտքից օգտախելու համար: Սա համայնքային բացատրութիւն չէ, սա ազգային բացատրութիւն է, այսինքն՝ քաղաքական բացատրութիւն: Չեմ տեսնում, թէ չեզոքը միտումնաւոր է յանգում այդ եզրակացութեանը: Ո՛չ: Նա հատաստացած է: Բայց այդ հատարը կուտակուել է նրա մէջ շատ անիլ վաղ, քան թէ ծնուել է: Դա գերմանացու հօրութիւնից ծնունդ համոզմունք է: Եթէ չեզոքը լինէր մի փոքր (թուային առումով) ժողովրդի գաւակ, ապա պատերազմին կը տար ուրիշ բացատրութիւն:

- Այսինքն:
- Պարզ չէ՞: Պատերազմը այն նայն չեզոքի համար կը լինէր ոչ թէ բարիք.

այլ չարիք, այսինքն՝ այնպէս, ինչպէս է մեզ համար:

— Ուրեմն միեւնոյն երեւոյթը մէկի համար մի բան է, ուրիշի համար՝ այլ բան:

— Ինչ խօսք, — ասում է Յովսէփը՝ կանգնելով սուֆի, — մեր յազբանակը մեզ համար մեծագոյն բարիք էր, մեր շքեմականի համար՝ չարիք: Թալիսաթին մեծք ազգովին նգովում եմք, իսկ թուրքը պաշտում է այդ նայն դանիմն:

«Վոպրոսի խտորիտ» ամսագրի էջերում բանավիճողների մօտ էլ յաճախ կարելի է շատ պարզ նկատել այդպիսի վերաբերմունքի դրսեւորումներ, մի իւրաքայտակ զննթակայական առարկայականութիւն, որքան էլ այն ծածկուած լինի շողարկիչ սաղարթների տակ:

Թողալովի եւ Աւերդիների յօդուածին առաջին արձագանքից փոխադասական զիտութիւնների գոկտոր, ազգագէտ, ազգութեամբ կիրգիչ Մասնուղ Ջունուսովը, որը այժմ մշտապէս աշխատում է Մոսկուայում: Նա հանդէս եկաւ ՎԱԳՔՐ որպէս մարդկանց սոցիալ-էթնիկական ընդհանրութիւն» յօդուածով (1966 թ., № 4, 15 էջ): Ջունուսովը, ի միջի այլոց, ընդգծեց, որ ազգային հարցի դրժով Մասլինի դաղափարական ժառանգութեան մէջ կան նաեւ այնպիսի մեւակերպումներ, զորոնք հակասում են հենց հնչիմակի տեսակետներին. դա իր արտացոլումը գտաւ նրա մի բանի եւոյթներում՝ Հայրենական Մեծ պատերազմի տարիներին, երբ թա ազգերը բաժանում էր յարձակողական եւ խաղաղասէր ազգերին: Ինչպէս եւ ցոյց է տալիս յօդուածի վերնագրերը, Ջունուսովը հիմնականում կանգ է առնում ազգերի էթնիկական բաղադրիչների, նրանց մեւաւորման ու փուլերի աստեղծայատուութիւնների վրայ, տալով ազգի բնորոշման մի քանի տարատեսակներ, բուրբի մէջ էլ պատուաւոր տեղ յատկացնելով էթնիկական հանգամանքին: Այսպէս, ըստ Ջունուսովի, «ազգը մարդկանց մեծ խումբ է, որը աչքի է բնկնում լեզուի, էթնիկական տերիտորիայի, ազգային

ինքնագիտակցութեան և մշակոյթի և բնատուրքեան իւրայատուկ ազգային գծերի կայուն ընդհանրութեամբ, որոնք գարգանում են ինչպէս կապիտալիստական, այնպէս էլ սոցիալիստական սրբն-տիտական յարաբերութիւնների լինելու-թեան ընթացքում: Դրան յարգում է ազգի մի այլ տունում բնորոշում: «Ազգը հասարակական գարգացման ձև է, մերյատուկ կապիտալիստական ու սոցիալիստական հասարակութեանը, որը իրենից ներկայացնում է ամբողջական սոցիալ-էքոնիկական մարմին»:

Բերենք Ջունուսովի նաեւ մի այլ բնորոշում.

«Ազգը մարդկանց էքոնիկական ընդ-հանրութեան բարձրագոյն ձևն է, որը կազմում է ինչպէս բարձրակարգ, այն-պէս էլ սոցիալիստական հասարակական յարաբերութիւնների հիման վրայ»:

Բնորոշումների այս առատութիւնը բնահոնոյթի տրոհումը չէ, այլ ցոյց է բաշխ, թէ Ջունուսովը որքան Հիմնովին և բազմակողմանիորէն է ձօնանում ազգ հասկացողութեանը, ամէն տեղ էա-կան դեր յատկացնելով էքոնիկական կողմ-ին, զանգի նա համարում է, որ զլըմ-բախտաբար, գրականութեան մէջ չի բնոգծում ազգերի գոյացման էքոնիկա-կան հիմքի դերն ու նշանակութիւնը: Հարցի այդ կողմին այդքան ուշա-դրութիւն դարձնելով հանդերձ, Ջու-նուսովը ունի և յաւելելու բացատրու-թիւն, թէ՛

«Ազգը բնորոշելով որպէս մարդկանց էքոնիկական ընդհանրութեան բարձրա-գոյն ձև, մենք դրանով իսկ ընդգծում ենք յարաբերութիւններ էքոնիկական ընդ-հանրութեան գարգացման մէջ: Ազգը հասարակութեան էքոնիկական պատմու-թեան վերջին աստիճանն է: Ազգի մա-հացման հետ կը շնչուեն բոլոր էքոնիկա-կան ստեմանները և ամէն տեսակ էքոնի-կական ինքնագիտակցութիւն»:

Իրաւագէտ Պաւէլ Սեմենովի յոգ-ւածը կոչւում է «Ազգը և ազգային պե-տականութիւնը իՍՂՄ-ում» (1966 թ., № 6, 10 էջ): Ազգային պետականութեան

հարցին Սեմենովը ժօնանում է բացա-րայաորէն մեծապետական դիրքերից, փորձելով իւրովի մեկնարանել հենց լե-նինեան դրոյթները: Շատ հեղինակներ, պետականութիւնը չմտցնելով հանդերձ ազգի յատկանիշների շարքը, պատշաճօ-րէն դիտակցում ևս ընդգծում են պետա-կանութեան գերը իւրաքանչիւր ազգի կազմաւորման ու դոյութեան ընթաց-քում: Սեմենովը, հակառակ նրանց, ա-մէն կերպ ջանում է նսեմացնել այդպի-սի պետականութեան նշանակութիւնը խորհրդային պայմաններում, անցնելի ու ապագայի հարցեր է առաջ քաշում, եղջիւրահարում բազմաթիւ հեղինակնե-րի և կրակացնում.

«Այն նեքադրութիւնը, թէ իՍՂՄ-ում ազգային պետականութիւնը իր ծա-գումով անմիջապէս պարտական է խոր-հրդային ժողովրդի բազմազգութեան փաստին, որը կլակէտային մախպրեալ է հանդիսանում այն դրոյթի համար, թէ իբր ազգային պետականութիւնը սո-ցիալիստական ազգի յատկանիշ է, — անօրինացափ է դուրս գալիս: Ձեռնած որ իՍՂՄ-ի պայմաններում բոլոր հա-մախումը ապրող ազգերը մերկայումս գործնականում ունեն իրենց ազգային պետականութիւնը, սոցիալիստական ազ-գի գոյութիւնը սկզբունքորէն հեմարատը է ևս անանց ազգային պետականու-թեան»:

Հեղինակն այդ ոգով ուրիշ մտքեր էլ է շարադրում, բանավիճելով, ի շարս այլոց, նաեւ հայազգի Մամերեանի և Թաղէոսեանի հետ: Ահա նրա եզրակա-ցութիւնները.

«Ազգերը կը մնան, իսկ ազգային պետականութիւնը իՍՂՄ-ում կը մահա-նայ: Խօսք կարող է լինել միայն նրա մտահացման ձևերի ու թափի մասին: ...հարիւրային ազգերը հետագայում գոյութիւն կ'ունենան և կը գարգանան ազգային պետականութեան շրջանակնե-րից դուրս: ...Նշենք միայն, որ ազգա-յին պետականութեան մահացումը երկար ու տեսական ընթացք է, որը բնականօ-րէն տեղի է ունենում քառալիայական ու

ննթակայական քննչքի մի շարք գործոճննրի աղիեցութեան տակ»:

Այս կապակցութեամբ նպատակաշարժար է սանյ հետեւեալը: Ազգի յատկանիշների ցանկում պետականութիւնը եւս մացնելու հարցը իր երկար պատմութիւնն ունի: Եթէ մենք երբեւէ ըստանձնելու լինէինք տալ ազգի պետական բնորոշումը, պետութեան հարցը բոլորովին կ'առանձնացնէինք, մի շարք Ժանրակաշիւ պատճառներով: Պետութիւնն անպայման ազգի բնորոշման հետ կապելը ոչ ճիշդ է եւ ոչ էլ ձեռնառու ազգերի մեծամտանութեան համար: Զիշդ այնպէս, ինչպէս որ իւրաքանչիւր հեղուկ մարմին, անկախ իր բաղադրութիւնից, ամփոփ մնալու համար անպայման կայուն ամանի կարիք ունի՝ շի, կճուճի, տակաւի եւայլնի, բայց ոչ ոքի մտքով չի անցնում այս կամ այն հեղուկի բաղադրութիւնն ու յատկութիւնները բնորոշելիս ցոյց տալ նաեւ ամանի տեսակը, այնպէս էլ ազգի էութիւնը ճշդելու համար կարիք չկայ պետութեանը կատարելու: Բայց ազգի ձեւաւորման, ամբարշտելու և տեւականութեան համար, կատարած չկայ, շատ կարեւոր, վճռական ու ճակատագրական նշանակութիւն ունի պետականութիւնը: Ուստի, հարցի պարզութեան տեսակէտից, ուշադրութեան կենտրոնում պէտք է մնան «պետական ազգ» եւ «ոչ-պետական ազգ» հասկացութիւնները, համապատասխան կարայնազումներով: Ուրեմն, պետութեան ու ազգի ընձրոնումները միմեանցից զատելու տեսակէտի կողմնակիցներ շատ կան, բայց երբեմն ուղղակի տրամազծօրէն հակառակ, հակառակայ նկատառումներով: Խորհրդային Միութիւնում պետականութեան գերը նեւմացնողները սովորաբար նրանք են, ովքեր մեծապետական ձգտումներ ունեն եւ արհամարհում են փոքր ազգերի դոյութեան իրաւունքները, ուզում են փոքր ազգերին որքան հնարաւոր է շուտ բոլորովին մերկ ու անպաշտպան, զինաթափուած տեսնել, ենթակայ՝ հորեզնի բոլոր կողմերից

մտրակող հողմերի ու փոթորիկների հարուածներին:

Պատական գիտութիւններէ դուրսը ճատխանա Բուրժուարոզման իր յողւածում (1906 թ., № 12, 11 էջ) անգրադաւում է մի շարք հարցերի: Նա յատկապէս կանչ է տուում «հողեկան կերտումը» ըմբռնման վրայ, գանգատելով, թէ «Կէս դարի ընթացքում ոչ մեզ մտ, ոչ էլ արտասահմանում լոյս չի տեսիլ ոչ մի մարքսիստական հետազոտութիւն, որը նսիրում լինի ազգի հոգեկան կերտումը»: Նա ասում է, թէ «Մեր կարծիքով, «հողեկան կերտումը» հասկացութիւնը ընդգրկում է երեք բաղադրատարր՝ բնաւորութիւն, ընդունակութիւններ եւ խտնումը» համաձայնուելով Ղալթադեանի հետ, թէ «չի կարելի հողեկան կերտումը նոյնացնել ազգային բնաւորութեան հետ»: Համաձայն չէ ազգի Ռոզաշովի եւ Սւերդլինի բնորոշմանը, այն համարելով «մանրաշարժ եւ ոչ բոլոր մասերում հիմնաւոր»: Բուրժուարոզման դրում է նաեւ.

«Մեզ քում է, որ պետական ու ազգային ընդհանրութեան յարաբերակցութեանը վերաբերող վեճում իրաւացի է Պ. Պ. Սեմենովը, որը ժխտում է ազգային պետականութիւնը որպէս սոցիալիստական ազգի պարտադիր յատկանիշ, եւ իրաւացի չեն Պ. Մ. Ռագաշովը եւ Մ. Ա. Սւերդլինը, Ս. Տ. Ղալթադեանը, Ա. Յ. Մնացականեանը, որոնք պետականութիւնը մոցնում են սոցիալիստական ազգի յատկանիշների, իսկ վերջինս էլ՝ ազգի ընդհանուր բնորոշման մէջ: Սոցիալիստական ազգը, ինչպէս եւ բուրժուալիստական, չի զաղարում ազգ լինելուց, եթէ նոյնիսկ չունի իր պետութիւնը»:

Վերջապէս Բուրժուարոզման ձեւակերպում է ազգի իր ըմբռումը.

«Ազգը մարզկանց սոցիալ-էքնիկական ընդհանրութիւն է, որը արտայայտւում է արդիւնաբերական տնտեսութեան, տերիտորիայի, գրաւոր լեզուի, բնաւորութեան ու մշակչքի միասնութեան մէջ»:

Նա ընդունում է ազգերի մի քանի տեսակներ՝ բուրժուական կամ կապիտալիստական, սոցիալիստական, կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանի եւ, վերջապէս, կոմունիստական ազգեր: Չարտ տեսակներ, Թողաշուի եւ Աւերդիների նշած երկու-երեքի փոխարէն:

Ամսագրի նոյն համարում գետեղւած են եւ Ծ փոքրածաւալ յօդուածներ, այլեւայլ դիտողութիւններով: Այդ յօդուածներում ողջունում է, որ ամսագիրը «սկսել է հարկաւոր եւ օգտակար դործ», որ կարեւորութիւն է տրուել «էթնիկական պատկանելիութեան գիտակցութեանը», արւում են եւ ինչ-ինչ «քննադատութիւններ: Դոցենտ Կուզմինկովը էթնիկական պատկանելիութեան ինքնազտակցութիւնը համարում է «երկարատեւ պատմական դարգացման արգասիք, որն ունի իր զարգացման համեմատաբար ինքնուրոյն տրամաբանութիւնը», յայտարարում է, թէ «Ասիայի եւ Աֆրիկայի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումը համոզիչ ապացոյց է, թէ ինչպիսի հսկայական դիմադիւսում ունի ազգային ինքնագիտակցութիւնը, էթնիկական պատկանելիութեան գիտակցութիւնը, ու նաեւ»:

«Էթնիկական պատկանելիութեան ինքնագիտակցութիւնը պահպանում եւ մարդկանց արարքների ու վարմունքի վրայ ազդում է տասնեակ ու հարիւրաւոր տարիներ նայելիս այն բանից յետոյ, երբ մարդիկ կորցրել են փաստական կապը իրենց ազգի հետ, ապրում են ուրիշ հողում, խօսում այլ լեզուով: Խորհրդային Միութիւն ամէն տարի վերադառնում են հազարաւոր հայեր, ուկրաինացիներ, ռուսներ, բելառուսներ եւ մեր երկրի այլ ազգերի ներկայացուցիչներ, որոնք իր ժամանակ պատմական մակատարի այս կամ այն պատահարի քերտումով ընկել են օտար երկրներ: Բացարձակ այդ երեւոյթը, առանց հաշուի առնելու էթնիկական պատկանելիութեան ինքնագիտակցութիւնը, անկարելի է»:

Մի այլ յօդուածագիր առաջարկում է բաւարարուել ազգի ընդհանուր բնութարանով, առանց տեսակների՝ բուրժուականի եւայլնի բաժանելու:

Պատմարան Վիկտոր Կոզլովը եւս իր յօդուածում (1967 թ., № 1, 12 էջ), անդրադառնում է ազգի տեսութեան մի քանի խնդիրների: Նա սկզբից եւեթ ընդգծում է, որ «այդ տեսութեան մշակման աստիճանը այժմ տակաւին չի համապատասխանում նրա գիտական ու գործնական - քաղաքական նշանակութեանը»: Այնուհետեւ ասում է, թէ «ազգի տեսութեան եւ համապատասխան բնութգծման մշակումը ներկայումս ուղղակի կարիք ունի խոշոր մեծագրական հետազոտութիւնների, հիմնուած գիտութեան կուտակած փաստական մեծ ճիւղի (պատմական, ազգագրական, լեզուական եւայլն) ու մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրների բոլոր արտայայտութիւնների վերլուծութեան վրայ»: Կոզլովը ծանրանում է «ազգի տեսութեան կենտրոնական խնդրի»՝ ազգի ու պետութեան յարաբերակցութեան վրայ, նշելով, թէ «Պ. Գ. Սեմեռնովի բերած ապացոյցները կրում են մի քիչ մտահայեցողական բնոյթ եւ չեն շոշափում մեր կողմից բռնութեան առնուող խնդրի էութիւնը»: Մի այլ տեղ ընդգծում է, թէ՛ «Աշխարհի տարբեր երկրներում ազգերի ձեւաւորման բուն իրադրականութիւնը գիտաւորապէս որոշում է լեզու-հոգային եւ պետական-քաղաքական տարրերի յարաբերակցութեամբ: Ուստի, ազգի տրեւտեսական ընդհանրութեան խնդիրը նրապատկաշարմար է դիտել պետականութեան գործունի գերի հարցի հետ միասին»: Կոզլովը վկայակոչում եւ վերջում է պատմական օրինակներ եւրոպական, ասիական եւ ամերիկեան ազգերի կենսաբան: Խօսում է բազմազգ եւ միազգ պետութիւնների բնոյթի մասին, լեզու-լով պետական գործունի կարեւոր նշանակութիւնը:

Պատմարան Նիկոլայ Անանչենկոն իր «Աղբիւր դէպի մարդկանց միջազգային ընդհանրութիւն» վերնագրով յօդուած

ծում (1967 թ., № 3, 15 էջ) նախ երկար դատադուլթիւններ է անում երբեմնի աւստրիական սոցիալ-դեմոկրատ Օտտո Բաուերի հանրայայտ ազգային տեսութեան մասին, ըննադատում զազգի ձեւական յատկանիշների ուսնողական սխեմայի գրոյթները եւ ոգեւորում «ճարգկանց աւելի լայն, միջազգային ընդհանրութեամբ», զբահարելով բաւական ըզգայի մեծապետական միտումներ ու յարարարելով, թէ՛

«Հարկաւոր է նշել, որ բանավէճի որոշ մասնակիցներ, հրատարակելով ազգային գորգացման հարցերով, ստուերի մէջ են թողում միջազգայնական տարրերի առաջնակարգ նշանակութիւնը ազգերի կեանքում: Անանչեկոն դանում է, թէ՛

«Ամէնից առաջ անհրաժեշտ է ճիշդ որոշել ազգի տեղը նրան համասեռ՝ մարդկանց կեանքիտ-պատմական ընդհանրութիւնների համակարգի մէջ, համաշխարհային յեղափոխական ընթացքի եւ ամբողջ մարդկութեան գորգացման մէջ: ...Մարդկանց այդպիսի համասեռ կեանքիտ-պատմական ընդհանրութիւնների թուին մեմ գասում ենք տոնը, ցեղը, ազգութիւնը, ազգը եւ մարդկանց միջազգային ընդհանրութիւնը»:

Եւ այդ ուղղութեամբ էլ ծաւալում է իր հետազայ խորհրդածութիւնները: Դրանով հանդերձ, Անանչեկոն առարկում է որոշ հեղինակներին.

«Պ. Գ. Սեմեուովի յօդուածում ժխտում է, թէ պետականութիւնն ինչպէս բարձրական, այնպէս էլ սոցիալիստական ազգերի յատկանիշ է: Գրաւ հետ չի կարելի համաձայնուել: Ազգերի ինքնորոշման իրաւունքի դրոյթը, ընդհուպ մինչեւ պետական անջատումը, համակարգանիորէն եիմնաւորում Վ. Ի. Լեճինի կողմից, զինել է բուր կամուրհատական կուսակցութիւններին: Դա արտայայտում է իւրաքանչիւր ազգի եւ մարդկանց նախազգային ընդհանրութեան բնական, անբակտիի՝ սեփական բախտը սեփական հայեցողութեամբ տընորինելու իրաւունքը: Մինչեւ հիմա չը-

կայ այնպիսի պատմական օրինակ, որ ցայց տար, թէ ազգը կամովին հրաժարւել է իր ազգային-պետական կառուցւածքի հարցը որոշելուց»:

Մի այլ տեղ Անանչեկոն շեշտում է, որ՝

«Ազգային կեանք» եւ «ազգ» հասկացութիւնները չեն սպաւում էքնիկական եւ տոցիալ-բագաբական կողմերով: Ազգի էութեան եւ նրա դրսեւորման իւրայատուկ մեկերի երբորդ անբաժանելի կողմ են հանդէս գալիս միջազգայնական տարրերը ազգի կեանքում, միջազգայնական միտումները նրա գորգացման մէջ»:

Անանչեկոն շարադրում է ազգի իր սեփական՝ ընդարձակ ու համաոտ սահմանումները:

Դադասանցի բանասէր, Հասարակագէտ ու գրականագէտ Ահեդ Աղաւը հանդէս եկաւ իր «Ազգը, նրա էութիւնը եւ ինքնադիտակցութիւնը» յօդուածով (1967 թ., № 7, 18 էջ): Դա այն նոյն Աղաւըն է, որ շատ տարիներ առաջ մոսկովեան մատուում հանդէս եկաւ իր անաս եւ ազգերի գրոյթեան տեսակէտից անիմաստ գրոյթներով ու զրանց համար ենթարկուեց միանգամայն արդար ըննադատութիւնների, նոյնիսկ Հայաստանում: Բայց այս անգամ նա հրապարակ է դալիս իր լուրջ կողմերով, մանրամասնորէն կանգ առնելով ազգային ինքնադիտակցութեան հարցի վրայ: Աղաւը սկզբում ասում է, թէ զշատ տարիների ընթացքում ազգի մասին առանձին պատկերացումներ այնքան են կանոնակարգուել, որ միանգամից դրժւար է նրացից մեմ քաշել: Ազա իր համամտութիւնն է յայտնում Ջուուուովի «էթնիկական ընդհանրութեան» գրոյթին եւ այդ ուղղութեամբ էլ տարածում: Հանգամանակից վերլուծութիւններից յետոյ, նա վերստին դառնում է այդ կէտին.

«Ուզում ենք ամէնից առաջ պաշտպանել Մ. Ս. Ջուուուովին, որը կոչ է անում յատկապէս ուսումնասիրել էքնիկական ու ազգային ինքնագիտակցութեան կառուցումը: Իսկապէս, թէեւ

այնպիսի երևույթներ, ինչպիսիք են հայ-
րենասիրութիւնն՝ ու միջազգայնականու-
թիւնը, ազգային եպարտութիւնն ու պա-
տիւր, ազգայնական եւ ազգայնամոլա-
կան հայեացքները, ձեւաւորում են ազ-
գային իմֆնագիտակցութեան պատեա-
նում, համրային գիտակցութեան այդ
տեսակը երկար ժամանակ դուրս է մը-
նացել խորհրդային գիտնականների տե-
սադատից: Ազգի նկատմամբ՝ որպէս
«ազգային իմֆնագիտակցութեան», ազ-
գային սգուս պտուղի, իտալիստական
հայեացքների դէմ պայքարելիս մեմֆ
աննկատելիօրէն մեր ժխտումը տարածել
ենք հենց այդ գիտակցութեան վրայ:
Փոխանակ խորապէս վերլուծելու ազգի
եւ նրա գիտակցութեան փոխազարձ
կայքը, մեմֆ ընթացել ենք հեշտ Յանա-
պարհով. ազգը գրկել ենք նրա ամէնից
բարդ, առանձնայատուկ, նրան մերյա-
տուկ յատկանիշներից մէկից՝ իր կեցու-
քեան գիտակցութիւնից:

*Արձանագրելով Աղաւելի ուշադրու-
թիւնը ազգային ինքնագիտակցութեան
իրողութեան վրայ, պէտք է ընդգծել
այդ հարցի երկուսրի լինելը: Ընդհա-
նոր ստեմաթ, անշուշտ, ազգային դե-
տակցութիւնը շատ հակառէ ազգի ու
անհատի կեանքում: Փաստօրէն անհա-
տը, ինչպէս եւ համապատասխան ուզ-
դային հաւաքականութիւնը, ամէն ինչ
կորցնելուց եւ մերկանալուց յետոյ, մին-
չեւ վերջին շունչը փչելը իր հետ է ունե-
նում բացառապէս «ազգային գիտակ-
ցութիւնը», նրանով պայքարում մահա-
բեր ալիքների դէմ, եւ միայն նրանից
զրկուելուց յետոյ է որ ընկզմում է ու
անհետանում՝ որպէս ազգային անհա-
տականութեան միւտոր: Բայց խորհրդ-
պայմաններում վտանգը կայանում է նը-
քանում, որ շեշտը դիտակցութեան վրայ
դրուելով՝ թաքուն յոյսեր են արթնաց-
ւում այն կապակցութեամբ, թէ կարելի
է զանազան միջոցներով ազգի ու փո-
խել այդ դիտակցութիւնը, դրանով իսկ
արագացնել ազգաճուրղն ու ազգերի
մահը: Չենք ստուծ, ի հարկէ, թէ դրա-
նով ազգաճուրղան քաղաքականութիւնը*

*անպայման յաղոգութեամբ կը պոսակ-
ւի, բայց զգիտակցութեան հետ այդ-
պիսի յոյսեր կապելը միանգամայն հնա-
բաւոր է:*

*Փրիտօփայական գիտութիւնների
թեկնածու Ալեքսանդրա Գորեսլեան
զբաղւած է իր իսկ հարցադրումով՝
«Արգեօք հոգեկան կերտումըը հանդի-
սանո՞ւմ է ազգի յատկանիշ» (1967 թ.,
Ձ 8, 14 էջ): Նա գտնում է, որ «Աղգե-
քը ստեղծւում են մարդկանց աւելի վաղ
զոյութիւն ունեցած ընդհանրութիւննե-
րից եւ շատ բան նրանից, ինչ-որ առաջ-
ներում պատկանել է այդ աւելի վաղ
զոյութիւն ունեցած ընդհանրութիւննե-
րին, փոխանցւում է ազգին: Այդ նոյն
բանը տեղի է ունենում եւ հոգեկան
կերտումըը հետ»: Նա եւս ընդգծում
է, որ «ազգի բոլոր յատկանիշներից հո-
գեկան կերտումըը, ինչպէս եւ լեզուն,
ամէնից կայունն է»: Այստեղ արժէ մէջ-
բերել Գորեսլեանից մի քանի մտքեր.*

*«Ազգը տնտեսական կեանքի, տերի-
տորիայի լեզուի, հագեկան կերտումըը
բնդեանքութեամբ կապուած մարդկանց
խումբ է: Անձը հանդիսանում է որոշա-
կի էթնիկական խմբի տարր եւ ազգային
առանձնայատկութիւնների կրող: ...Ազ-
գային հագեքանութիւնը, ազգային հո-
գեկան կերտումըը յատուկ դեր են խա-
ղում մարդկանց բնդեանքութիւնը հա-
մախմբելու, ազգի ու ամձի փոխյարա-
քերութեան մէջ: Մարդու անձը որոշակի
ազգային առանձնայատկութիւնների, բը-
նաւորութեան գծերի կրողն է: Սխալ է
այն կարծիքը, թէ ազգային բնաւորու-
թիւնը միայն տուեալ էթնիկական խմբի
յատկութիւնն է, որպէս համակարգի,
այլ ոչ թէ նրա անանձն բաղկացուցիչ
տարրերի: ...Հագեկան կերտումըը նը-
շանակութեան ժխտումը, որպէս ազգի
յատկանիշի, գործնականում կարճ է
յանգեցնել տարագրի հաւաքականու-
թիւնների մէջ ծագող բարդութեան ու
որոշ դժուարութիւնների թերագնահատ-
ման»:*

*Գորեսլեան այդպէս է պատանխա-
նում իր դրան հարցին:*

Մահուայում աշխատող լեզուաբան՝ սամանցի Մահոմեդ Իսահել քննութեան է առնում «Աղբը և լեզուն» հիւթը (1968 թ., №2, 14 էջ)։ Իսահել ընդգծում է լեզուի առաջնահերթ նշանակութիւնը և քննադատում այն հեղինակներին, որոնք լեզուին տալիս են երկրորդական, երրորդական կամ նույնիսկ չորրորդական դեր։ «Մեր տեսակետից, — ասում է նա, — լեզուն ազգի ամէնից ակնյայտ ու էական յատկանիշն է։ ...Մեզ համար՝ չկայ ազգ առանց լեզուական ընդհանրութեան, ինչպէս որ մարդկութիւնն ինքը չկայ, առանց լեզուի»։ Իսահելը անդրադառնում է ևս երկրորդական քարոզ խնդրին, տեսլով, թէ՛ «չմայած երկրագույնի զանազան տեսակների մեծ տարածմանն ու նրա նակալական նշանակութեանը խորհրդային ազգերի ու ազգութիւնների զարգացման մէջ, այդ կարեւորագոյն ազգիական երեւոյթը չի հետազոտուած բնարար խորութեամբ»։ Նա որոշ խորհրդածութիւններ է անում «պետական լեզու» արտայայտութեան շուրջ։ Վերջում կրկին ընդգծում է, որ՝ լեզուի ընդհանրութիւնը եղել է և մնում է ազգի կարեւորագոյն յատկանիշը։

Իգոր Իրոզգովը կանգ է առնում մի այլ հարցի վրայ՝ «Արդեօք աւանդութիւնները հանդիսանում են ազգի յատկանիշ» (1968 թ., № 3, 9 էջ)։ Հենց սկզբից նա պնդում է, թէ՛ «Ազգի խնդիրը ո՛չ միայն կենդանի գիտական խնդիր է պատմաբանների, հասարակագետների, ազգագրագետների, փիլիսոփաների համար, այլև կարեւոր քաղաքական հարց, որը հետաքրքրում է աշխարհի երկրների քաղաքական ու հանրային գործիչներին»։ Երկար մէջբերումներ է անում «աւանդութիւն» հասկացութիւնը բնութագրելու համար, մի տեղ հաստատելով, թէ՛ «Յատկապէս աւանդութիւնների մէջ է ամէնից պայծառ դրսևորում ազգի հոգեկան կերտումները», ապա ամփոփելով իր միտքը, որ՝ «Ելմանով աւանդութիւն դրսևորման ու յարստներից, դրանք կարելի է բաժանել ազգային, աշխատանքային, յեղափոխա-

կան, բարոյական, կրօնական, գրադամամային, գիտական ու կենցաղային աւանդութիւն»։ Բայց միտածանակ Իրոզգովը գտնում է, որ՝

«Որպէս պատմական հասկացութիւն՝ աւանդութիւնն ու սովորութիւնը պետք է դիտել լինելութեան, զարգացման եւ մարման ընթացքի մէջ։ Մարդկային հասարակութեան մէջ աւանդութիւններ երեւան են գալիս սովորութիւններից զգալիորէն աւելի ուշ, մի տեսակ մերկայացնելով ազգիական փարձի ընդհանրացման բարձրագոյն փուլը»։

Իրոզգովը կարեւոր տեղ տալով աւանդութիւն, այնուամենայնիւ գտնում է, որ «աւանդութիւնները հոգեկան կերտումներ միակ բաղադրիչը չեն» և ուստի ճիշդ չէ ազգի առանձին յատկանիշ համարելը։ Նա դատաւորութիւններ է անում բաժանող ու միացնող, աղբային ու միջոցային աւանդութիւնների վերաբերեալ։ Տալիկիտանից Վադիմ Չայչենկոն ևս կարգի մարտիկը նույնպէս պնդում են, թէ՛ «Հոգեկան կերտումներ ընդհանրութիւնը ազգի էական յատկանիշներից մէկն է» (1968 թ., № 5, 7 էջ)։ Յօդուածագիրները մի առիթով յայտարարում են.

«Պակաս տարօրինակ չէ այն պատճառարանութիւնը, թէ հոգեկան կերտումները ընդհանրութիւնը ազգի էական յատկանիշների թուիմ դասելը իբր մեզ մտնցնում է արտասահմանեան բուրժուական գիտնականներին, որոնք ընդհանուր փիլիսոփայական իդէալիստական ըմբռնման ազդեցութեամբ չիմնաւորում կերպով ունեցնում են ազգի հոգեւոր ընդհանրութիւնը»։ Եւ առհասարակ հեղինակները զբաղում են իրենց դրոյթի հաստատումով։

Փիլիսոփայական գիտութիւնների թեկնածու Մարգարիտա Խոսենկոն կանգ է առնում «Արդի դարաշրջանը և ազգի տեսութեան մի քանի հարցեր» հիւթի վրայ (1968 թ., № 7, 16 էջ)։ Խոսենկոն իր հերթին գտնում է, որ՝

«Բաժանվելի ընթացքում գնալով աւելի ակնյայտ է դառնում այն իրողու-

թիւնը, որ ազգի մարտնչութեան տեսութեան հրատապ խնդիրներին քննարկումը լիովին հասունացած հարց է: ...կասկածի ենթակայ չէ այն եզրակացութիւնը, որ հասարակական զարգացման այդի փուլը պահանջեց ճշդիլ ու կոնկրետացնել մի շարք տեսական դրոշմներ, որոնք մինչեւ հիմա բուռն էին ակնյայտ ու անվիճելի: Այդ քննական դիրքերից էլ մտնում է Ռոզաշովի եւ Սերգէյի, ինչպէս եւ բանավէճի մասնակիցների յօդուածներին (ազգերի տեսակետներում, ազգ հասկացութեան բնորոշում եւ այլն):

Ինչպէս արդէն յիշուեց այս ուսումնասիրութեան մէջ, «Վոպրոսի իստորիի» ամսագրի էջերում, Ռոզաշովի եւ Սերգէյի 15 մեծածաւալ եւ 5 փոքրածաւալ յօդուածներ, իսկ 18 յօդուածագիրների գիտողութիւններն էլ ամփոփուեցին տառանքին: Ն. Կ. Սարիկովան 22 էջերի վրայ (1968 թ., № 6) մանրամասնորէն կանգ է առնում այդ հեղինակների արտայայտած մտքերի վրայ, սկզբից եւեթ յայտարարելով, թէ՛ «Վոպրոսի իստորիի» ամսագրի էջերում ծառայութեամբ բանավէճը ազգի տեսութեան մասին՝ յարուցեց գիտնականների եւ հասարակայնութեան լայն շրջանների կենդանի

տախտակները: Այդ հեղինակներից մէկն ասում է, թէ՛ «բանավէճի ընթացքում բարձրացուած հարցերը անպայման յուզում եւ արթնացնում են ստեղծագործական միտքը, զարգացնում եւ լրացնում են մեր պատկերացումները ազգի այսօրուայ եւ ապագայի մասին»: Մի ուրիշը գտնում է, թէ՛ տառնց ազգային հարցի լուծման փորձը ընդհանրացնելու եւ հեռանկարների տեսական դեհաշտման գնկարելի է ծառայել հետագայ հետազոտութիւնները, առաւել եւս, որ խորհրդային տպամագիտութեան զարգացման նախորդ ժամանակաշրջանը մեզ ժառանգութիւն է բազմի խոշոր բացեր՝ ազգային հարցի մի ամբողջ շարք տեսական բնագաւառներում: Բանավէճը ղշափազանց կարեւոր ու օգտակար է համարում երբորդը: Եւ այսպէս շարունակ: Մենք հարկ չենք համարում մանրամասնութիւնների մէջ մտնել, որովհետեւ գրանք այլեւս այնքան էլ հսկան չեն մեր ընթերցողների համար: Այդ նիւթերի մէջ եւս տարբեր ձեւերով կրկնում են այսինչ կամ այնինչ կէտի հեռահեռ մտածանք կամ ճանաչման լինելու մասին պնդումները: Իւրաքանչիւր նիւթ հետաքրքիր է ինքնին, բայց ոչինչ չի կարող աւելացնել մինչեւ հիմա ասուածներին:

(Շար. 2)

Է. Մ.



ՔԱՏԵՐԱԿԱՆ

Դ Է Մ Ք Ե Ր



ՆՇԱՆ ՊԷՇԻԿՅԱՇԼԵԱՆ

«Գ. Մելիքիանցի գրական ժրջանակ»-ի կնիքը վրան եւ նոյն ժրջանակին ծախշով՝ Գրիգորի Կաթողիկոսարանի ապարանէն լոյս տեսաւ Նշան Պէշիկյանի «Փաստերական զէմֆեր» անուն հատորը, որուն վառ հետաքրքրութեամբ կը սպասէք ընթերցողը, սպառնալից լուրը առան որչին ի վեր:

Արդէն ամիս մը կ'ընէ հրատարակի վրայ է «Փաստերական զէմֆեր»-ը եւ անգուտայ է զայն աչքէ անցուցած ընթերցողին հիացումը:

Սփիւռքի յիմնական մշակութային մեր պատմութեան մէջ իրապէս երեւոյթ մըն է այս հատորը, եւ անմարտնչաց՝ քստին ամբողջական տառամով: Մարդ ապշուար կ'ըլլայ անոր մէջ սպասագործուած նիւթերուն թուարանական հաշիւը կազմած ատենն անգամ: Թատերական խոստումներն հակում, հետաքրքրութիւն, հետապնդում, հմտութիւն, արուեստը՝ գրողէն շիւղ, գրողէտի կէրք ու շունչ կիսով են քով քովի եւ միասոյժ այդ ամբողջութեանն թիւն ուժով կերտուած է գէմքերէն իւրաքանչիւրը, իւրաքանչիւրին հողին, կարողութիւնն ու անկարողութիւնը, փառքն ու անկումը, յարթանակի անոյթն ու կործանման լեռնի, վէպը:

Նշան Պէշիկյանի երկնադրած թատերական գէմքերուն գլխաւորութեան շունչն է, յարուցիչ սպիտակ գրչին սակ կարծես կը լննեն անոնք, քեմի վրայ են ու կը խաղան Համբարձում, Ռաբրիէլ, Մարկարիթ Գոթիէ, Մեղէտ, կը խաղան ու նոյն ուժգնութեամբ կարծես զեռ կը սիրեն, կ'ստան, կը պայքարին, կը կտակարեն, կը մեռնին, հիացնելով կրկին, հանդիսատեսին փոխորէն այս անգամ զմայլանքով, պաշտամունքով ու հպարտութեամբ լննողով, յարգեցնելով ընթերցողին սիրտը:

Մենք պարզապէս գլխարկ կը հանենք այս կոթողական գործին ի տես ու կը խոնարհինք այն միւս անձին, Գ. Մելիքիանցիի առջեւ, որ իր հաստատած գրական այս մըր-ցանակով կարեւից կարճուց նման հակայ հատորի մը հրատարակութիւնը, ստեղծեց նման գործեր հրատարակելու մեայուն յոյսը:

Անուստիկ հետաքրքրական ու յատկանշական քանի մը նմոյշներ Նշան Պէշիկյանի «Փաստերական զէմֆեր»-էն:



ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆ

« ~ Այնտեղ ուր Աղամեանն է խաղացած Համլէթը, ինձ աւելորդ է խաղալ »:

Աղամեան Հանճար ունէր իր հողւտին, Հանճար՝ իր գլխուն մէջ եւ Հանճար՝ մարմնոյն վրայ, առաւելապէս դէմքին: Այդ եռալոյս խաչին վրայ կիզւեցաւ իրրեւ մարտիրոս, իրրեւ բեմի հերոս շողշողալէ յետոյ: Հանճարը ըլլալէ զառ հրաշագործութիւն, հարստութիւնն է տառապանքին՝ մեր մէջ: Հայութիւնը Հանճարին համար բանտ մըն է: Ան այդ բանտէն ազատագրուած մըն էր սակայն, ճակատագրական տնօրինութեամբ մը, իր վերջին տարիներուն ժառուրիզանդահայ բանտէն ներս ու բունուեցաւ: Եւ իր Հանճարին հոսակ ճառագայթները արձակելէ յետոյ, տիրորէն խաւարեցաւ իր թախտին աստղը:

Հանճարեղ արուեստագէտ մըն էր Ղերսասն Պետրոս Աղամեան:

Անուն մըն է ան յաւերժօրէն անւանի: Վերնագոյն խորհրդանշանը Հայ թատրոնին: Հրայարար լոյսերու մէջ ողորդուած տիպար խորհրդանշան, որուն փայլը յաւիտենական է, անխաւարելի, անչէջ, անթուամ, անկորնչելի, ամէն սիրոյ, յարգութեան եւ հիացման արժանի:

Իր անունը կը շողայ մեր Հանճարներու դասին մէջ:

Եւ հարկ է դիտնալ, որ վերջին դարերու ընթացքին, ո՛չ մէկ հայորդի, ինչ ասպարէզի ալ պատկանի, իր մարդին ու մտանադիտութեան, ինչպէս նաեւ միջազգային մթնոլորտի մէջ, չէ կրցած թեւածել այնքան բարձր, որքան Աղամեանը:

Աղամեանին Համլէթ խաղալէն երկու ամիս ետքը, «Տէյլի Նիուզ» անգլիական շաբաթաթերթին մէջ կ'երեւի ջրտնիկ մը, որ կը վերջանար այսպէս.

«Հայ ազգը, որ ըմբռնեց, հասկըցաւ, թարգմանեց եւ այսպէս յաջողապէս ներկայացուց իր բեմին վրայ Շէքսպիրի դադափարները, երբեք չի մեռնիր»:

Այդ ջրտնիկը թարգմանուեցաւ եւ տպուեցաւ «Տարագ»-ի մէջ (1881):

Յաղթանակը այնքան մեծցաւ, որ քանի մը տարիէն «Համլէթ»-ը հոմանիշ եղաւ Աղամեանի: Այդ դերը ո՛չ միայն եղաւ իր գլուխգործոցը, այլեւ գլուխգործոցը իր ժամանակի միջազգային թատրոնին: Այն աստիճան որ, երբ ԾՕ-ական թուականներու առաջին տարիներուն Քիֆլիս այցելից աշխարհաճոյակ խաւարցի ողբերգակի Էրնէստո Ռոսսին, անկէ խնդրեցին խաղալ Համլէթը, ան, սակայն, չընդունեց այդ առաջարկը, հրատարեցաւ այդ հրաւերէն, մեծանունութեամբ ըսելով.

ԱԶՆԻԻ ՀՐԱԶԵԱՅ



Իր պատկերները կը պատմեն իր անպատում գեղեցկութիւնը: Վերածնունդի նկար մըն էր իր դուբը, խաչապատ, կատարելագործուած աստուածային ձեւերով: Համակ ներդաշնակութիւն թեւ անուշութիւն:

Եփենոսի պէս սեւ ու առատ եւ կիսախոզող մազեր, ճշմարիտ ճակատ մը՝ լայն ու բարձր ու գեղապատաճ, ազնկաւոր եւ նրբաւորտ յօնք, քաղցր հուրերով առիտ աչիւր, որոնք հրաշագործութիւններ էին կեանքի ու բեմի համար, իրենց մոգական կարողութիւններով: Իրենին հաւասար աչիւր, աչիւր որ տալալայիչ, աչիւր գեղանի, բեմի տիրուտուք դործիք ու քանքար աչիւր, իրմէ զատ՝ ունեցած է միայն Վ. Փափազեան, մեր մէջ:

Տակաւին յունական քիթ մը, սիրուն գծադրութեամբ, լեցունկեկ (չափաւոր) այտեր, ալանջներ, ու ասամներ մարդաբաշար: Երթնիւր հեքիաթական համաշարիութեամբ, չրթնիւր հրեշտակի ու համբոյրի, չրթնիւր ազնկապէղ: Եւ գէմքին դիցուհիի դրախտը դրուազող կիսակլոր ծնօտ մը ու Վենիսի վիզ: Ամբողջութիւնը տեսիլ գեղի ու քաղցրութեան, նկարի ու ներդաշնակութեան: Ամբողջութիւնը այլափոխուող դիւրութեամբ հրաշարար: Կը խօսին իր դիմանկարները, լրացնելով ու վաւերացնելով մեր նկարագրականը: Այս պարէն մերթ սպանիական էր, մերթ Փրանսական, մերթ իտալական ու մերթ միջազգային, բայց էր մշտնջենապէս հայկական:

Ամէն ասպարէզի համար կան նպատուոր ժամանակամիջոցներ (փերիաւտ), երբ կը ծնին բազմաթիւ տաղանդներ, ի-

բարու ժամանակակից եւ կամ իրերայաջորդ: ԺԹ. դարը հրաշալի շրջան մըն էր բեմական տաղանդներու ծնունդներով եւ ածուցներով: Բազմաթիւ ազգերու մէջ, բացառիկ ու մեծ դերասաններ ծընան այդ շրջանին: Իսկ մեր մէջ Արուսեակ, Երանուէր Գարագաշեան, Հրաչեայ, Սիրանոյշ, Ֆէլիկեան քոյրեր, Մարի-Նուարդ ու Աղամեան, Յասուլեան-ճեան, Պէնկեան, Ռչտունի, Թրեանց, Վահրամ Փափազեան, արեւելահայոց մէջ Պետրոսեան, Արէլեան, Չարիֆեան, Այիխանեան, տիկ. Աղամեան, եւ այլն:

Հրաչեայ այդ փերիաւտին կը պատկանի, այդ տաղանդներուն տարմին մէջ է արժանաւորապէս:

Հրաչեայ ա'յն արուեստադէտներէն էր, որոնք դիտակցարար եւ անգիտակցարար կ'իւրացնեն դերը, կը նոյնանան անոր հետ ու կը օտեղծագործեն, հոգեբուխ ճշմարտութիւնով: Հրաչեայ ա'յն արուեստադէտներէն էր, որոնք, կարծես, հեղինակի մը խօսքերը չէ որ կը կրկնեն, այլ այդ խօսքերը այնպիսի ազբուժով, այնպիսի անձնականութիւնով մը կը գեղեցնեն, որ կը սեփականացնեն:



ՍԵՐՈՎԲԷ ՊԷՆԿԼԵԱՆ

ժի Հրդեհներ՝ իր խաղին ու խօսքին ջերմութիւններով:

Այս հսկան, իր լեռնակուտակ սղիտութեամբ, կարգալ գրեւ սորվելէ ետք, կ'ընէ քիչ թէ շատ ընթերցումներ ու կը դառնայ անժխտելի արժէք մը եւ կը թառի որոշ բարձունքի մը վրայ, տեղ գրաւելով Ֆասուլեանների, Մնակեանի, Ռչաունիի, Նախեանի, Թոսպաթեանի ու Սիսակի կողքին:

Չգոհացաւ կարգալ գրելով կամ տալանդաւոր դերասանի իր դիրքով: Եղաւ ճաշակի տէր ու բծախնդիր եւ վարպետ բեմայարդար: Այդ գործին մէջ միայն Ֆասուլեանների էր, որ կրնար հաւատարիլ իրեն: Պէնկլեան պահանջկոտ էր իրեն. բեմայարդար ու Վարդուկեան կը գոհացնէր զինքը, յանձն առնելով ամէն նիւթական զոհողութիւն, քանզի գիտէր որ Պէնկլեանի բեմայարդարութեան համար ըրած բացատրիկ ծախսերը պիտի չըլլային ապարդիւն: Ինք կամ Ֆասուլեանների էին ստեղծիչները ամէնէն դժուարին, խրթին տեսարաններուն, ինչպէս դրախտ, դժոխք, զոհակ, դաւլիճ, դատարան: Տարբերէի կարգերու պէտք կ'ըլլար՝ փոխադրելու համար, ամէն ամառ թատերախումբին կաւ-կարասիները, վարագոյրները, ըսպանները, զարդերը, հանդերձները, այնքան ճոխացած էին բեմական կազմածները, շնորհիւ Պէնկլեանի անվերջ պահանջողութեան:

Եղաւ տակաւին տնօրէն բեմի: Ու երբ Վարդուկեան թատերախումբը սկսաւ բեմադրել երգախաղեր՝ Պէնկլեան այդ նոր ճիւղին վրայ նետուեցաւ ու նախուկեցաւ երգի, երաժշտութեան: Նոթ մը չգիտցող այս Փիճուճիճը՝ ուսումնասիրեց եւ ժողովրդականացուց օփերէթը ու ինք սկսաւ մարզել — անհաւատալի իրականութիւն — ձայները դերասաններուն եւ դերասանուհիներուն:

Սերովբէ Պէնկլեան՝ Արեւելեան թատրոնի դերասան եղած շրջանին՝ կարգալ-գրել չգիտնալուն՝ իր դերը կը սորվէր ընկերներուն կարգալ տալով եւ ինք ունկնդրելով: Օժտուած արտասովոր յիշողութեամբ, այդ ձևով զոց կ'ընէր իր դերերը: Այդ հրաշալի յիշողութիւնը՝ գրեթէ առանց տկարանալու մնաց իր ամբողջ կեանքի ընթացքին: Արեւելեան թատրոնի շրջանին, սկսաւ փութով ու փարուսով հայերէն սորվել, խումբին յուշարար եւ թատերադիր Ռոմանոս Սեանֆեանէն:

Այդ միջոցին իրն էին հակառակորդի դերերը, որոնց մէջ համբաւուեցաւ: Ստանձնեց նաեւ բացարձակ հերոսի դերեր, իրբեւ զիւցազներգակ ու ողբերգակ:

Պէնկլեան բարձրահասակ էր ու ճշկուն, տիրական կերպարանք ունէր եւ սպաւորիչ աչիւր: Իր ձայնը ազդեցիկ էր, ըլլալով բամբ:

Ինութիւնը բեմական յատկութիւններով առատաձեռնօրէն օժտած էր զինքը: Ինքնին վրայ իր ներկայութիւնը փորապետող էր եւ իր լայն կուրծքէն արձակուած ձայնին դու կամ քնքոյլ, սարսրաուն կամ թրթռուն խաղերով կը խրովէր հոգիները: Կը բռնկցնէր յուզու-

ՄԱՐԻ ՆՈՒԱՐԴ

Տառապանքը անոր հոգին յորդեցուցած էր զգացումով: Մարի-Նուարդ իր դերերը չէր խաղար, չէր կեղծեր, այլ խորապէս կ'ապրէր ու կը տառապէր: Անիկա կ'ապրէր իր դերերը, իր ընկերներուն եւ ընկերուհիներուն իսկ սարսուռ պարզեւոյ սաստիկութեամբ: Անիկա կու լար՝ իրական արցունքով, կը չենէր՝ իրական հեծկլտանքով, կը տըւայտէր՝ իրական տառապանքով, կ'ուշաթափուէր՝ իրական նուաղումներով: Իր խաղարկութիւնը բացառիկ դերակատարութիւն մըն էր:

Երբ կը բացուէր վարագոյրը, Մարի-Նուարդի համար մէկ իրականութիւն կար՝ խաղը. ու կը վերանար, մտած իր դերին հոգիին մէջ, ամբողջովին այլափոխուած, բնմի վրայ զիչ անշամ տեսնուած մարդեղութեամբ: Այս հրաշքը կը դործուէր իր բարձր արուեստին ու բարերարի սրտին հարստութիւններուն միացումով: Ոչ մէկ չափազանցութիւն, սակայն, դերի պահանջէն զատ: Գերասանուհի բառը կրնայ պզտիկցնել զինքը: Ան դերին յարուցեալ տիպարն էր: Այս կարգի հրաշագործութիւն (բոլոր հին դերասանները միւսմայն վկայած են), մէյ մը Պետրոս Ազամեան է ցուցադրած, մէյ մըն ալ Մարի-Նուարդ: Որպէսզի դերասաններ ու դերասանուհիներ խորապէս ազդուին, մերթ խաղը չկարենալ շարունակելու աստիճան, իրենց ընկերոջ խաղարկութենէն, ուրեմն հանդիտատեսն երեւոյթի, տեսիլի:

Երբ հարկ էր Մարի-Նուարդի Կոթիէ անձնատերի՝ Մարի-Նուարդ այդ տիպարին մէջ կը շուէր ու կը չքանար անձնապէս: Խաղը կը հոսէր հրաշալի բնականութեամբ, պատճառ ըլլալով, որ իր շուրջիներն ալ ըլլան բնական: Մարի, իր դերին մէջ պայծառակերպուած, կը զեղզեղէր, կը սիրէր, կը տուայտէր, կը հազար, կը շարժարուէր ու կը մեռնէր:




Բոլոր անոնք, որոնք հանդիսատես կ'ըլլային իր արտասովոր մոգութիւններուն, կը սարսուային, կը հազարդուէին տառապանքով, կը հիւծէին ու կը խեղդուէին արտասուքներու մէջ: Մարի-Նուարդ կը պաշտուէր մարդոցմէ, մանաւանդ մտաւորականներէն, իբրեւ հըրաշագործ բարերարուհի մը, որ կ'ընծայէ դեղարուեստական գերագոյն վայելքներ, տպաւորութիւններ անմոռանալի:

Շատ տառապած էր Մարի ու իր մասերը միջոցներ էին պարպելու հոգին: Արարը աւարտելէ ետքը, Մարի, մարած կամ մեռած դերին մէջ, իրականին մէջ գունաթափ էր եւ ուժաքամ: Իր ընկերներն ու ընկերուհիները կը վազէին, կը զրկէին զինքը, սիրալիբ կը կշտամբէին ու կ'ըսէին.

— Մարի՛, Մարի՛, ի՞նչ կ'ընես... Ինչո՞ւ այսքան կը զգամուխ... Ինչո՞ւ կը տառապեցնես ինքզինքդ խաղի համար...

Մարի-Նուարդ հազիւ կրնար պատասխանել:

— Խա՞ղ... Այո՛, սակայն, կեանքի խաղ, որ շարժարանք է միայն...



Թ. ՖԱՍՈՒԼԵԱՃԵԱՆ

խորամատ մոլոթեամբ էր կեանքը իր կոչումէն արտադրուած շարժարանք մըն է: Եթէ գծուին իր անցած ուղիները՝ երևան կ'իլլէ զնչուի մը քարահօր: Այդ ուսերուն վրայ ճանապարհորդած է մերթ մուշտակազարդ ու մերթ մուշտականի ցնցոտիներով: Առաջին հայ դերասանը, որ զտաւ Կովկասի ճամբան: Գընաց մինակ, զնաց խումբով: Տարաւ դերասաններ ու դերասանուհիներ: Բոլոր այն արուեստագէտները, որոնք վերելակեցին ու վաւերական եղան արեւելահայոց մէջ, բան մը կը պարտին ծառուկանեանին: Հայ ազգին երկու հատուածներուն մէջ անուրանալի դեր մը կատարեց ինք: Կազմեց խումբեր արագօրէն ու ցրուեց աւելի քան փութանակի: Կանգնեց բեմեր, թատրոններ, ստեղծեց սիրողներ, դերասաններ: Միշտ շինեց, արտադրեց, ստեղծեց, աշխատեցաւ, աքնեցաւ, ամէն մէկ ձեռնարկի մէջ դընելով արեւը եւ այնքան քրտինք: Զգիտցաւ յոյնիլ ու յուսահատիլ: մերթ միայն հառաչեց:

Ահաւասիկ արկածախնդիր արուեստագէտ մը: Տիրաւոր եւ տինամիջ տաղանգ, որուն կեանքը վէպ մըն է, վերիվայրումներով լի: Մեղաւոր ու մարտիրոս, իր կոչումին մէջ մերթ թաղաւոր ու մերթ թշուառական: Գազաթնեբու վրայ եւ դահլիճումներու մէջ, թեւծող լոյսերու դողը, ինչպէս նաեւ թափառող բուրբիւններու ներքեւ: Բացարձակապէս դերասան ծնած ու սմբողջովին ապրած դերասանութիւնը թրուպատուրի մը, երբեմն ալ փառաւոր պետի մը նման: Եղած է դերասան, դերասանապետ, դերուստոյց, ղեկավար, տնօրէն, բեմադրող: Կանուխ հատուցած ու հասցուցած է աշակերտներ եւ աշակերտուհիներ: Եղած է հանճարեղ, յանդուգն, դիւսազիբ ՅԻՄԱՐ: Եղած է անհատապաշտ, անկոխ, արկածասէր: Բեմի բանաստեղծ ու բռնակալ: Սաւառնող, սաղրող, սրբացող: Մերթ հրէշտի՛ն՝ միշտ հրեշտակային արտայայտութեամբ: Ճաշակած կեանքին բոլոր շերտերը, թէ՛ պաղ, թէ՛ տաք: Այս միշտահասակ մեծութիւնը ունէր մէկ սէր, մէկ սրբութիւն՝ թատրոնը: Բիշ անգամ մարդու մը մէջ տեսնուած է սէր մը այդքան

Բացառիկ այս բեմական գործիչին լիակատար կենսագրութիւնը, դժբախտաբար, չէ գրուած: Աշխատեցանք որքան կարելի է մանրամասնութեամբ պատկերադարձիլ իր կեանքը: Ծարասան հագիւ եօթը էջ է գրած իր մասին ու Յ. Պարոնեան քանի մը էջերով տուած է իր կենսագրական ծաղրանկարը: Իրապէս մեծ այս արուեստագէտը եթէ Կովկաս մնար՝ մեծութիւն մը պիտի ըլլար փառաւորեալ: Անձնական ու քաղաքական դէպքեր զինքը քշած են, մանաւանդ վերջին տարիներուն, աննպաստ հողերու վերայ, անտանելի պայմաններու մէջ:

ՍԻՐԱՆՈՅՇ

Ութ տարեկան եղած ոտեն, Ֆասուխանեանի մէկ ներկայացման բարձրացած է բեմ: Ֆասուխանեան մարգարէարար բռած է:

— Ահա հայութեան ապագայ մեծ գերասանուհին:

Տասներկու տարեկանին՝ Մաղաքեան իր խումբին մէջ կ'առնէ գինջ, վրձարելով ամսական երկու օսկի: Նախ կ'անուանեն գինջը «Փոքր Աստղիկ»: Մաղաքեանի խումբին մէջ առաջին գերբ կ'ըլլայ աղախինի մասը «Հորթանսի գեղձանիկը» վաւելախին մէջ: Առաջին տարին սկիզբը՝ Սիրանոյշ ունէր երկար մենախօսութիւն մը: Կը յաջողի մենախօսել, առանց յուշարարի օգնութեան, ազատ ու համարձակ եւ շնորհալի շարժումներով, ստեղծելով իր փոքրիկ անձին շուրջը պարմանք ու զմայլանք, համակրութիւն եւ հիացում:

Սիրանոյշ շատ բան կը սքարտի Մաղաքեանին:

Իր բեմ բարձրանալուն հակառակ էին իր ծնողները, սակայն, տեղի տուին կամայ ակամայ:

Սիրանոյշ ունէր ոսկեխօսուող վարներ եւ զոց կապոյտ ու գրաւիչ աչքեր, ինչպէս նաեւ մելանուշ ձայն: Կազմը համաչափ էր ու հասակը՝ միջակ: Իր կապտաւուն աչքերով, իր շէկ ծամերով ու արտայայտութեամբ՝ նման էր աւելի եւրոպացիի, քան արմենուհիի:

Մեր մեծ գերասանուհիներէն ո՛չ Արուսեակ, ո՛չ Երանուհի Գարագաշեան, ո՛չ Մարի-Նուարդ, ո՛չ իսկ Հրաչեայ, ո՛չ Վարդիթեր Ֆելչեկեան շարժան սրբազան, տարածեալ, իտրերդանշական անուն մը՝ ինչպէս եղաւ Սիրանոյշը:



Արուսեակ խելագարեցաւ, Հրաչեան կարանցուց ձայնը, Մարի-Նուարդ կանուխ մահացաւ, Երանուհի Գարագաշեան չմնաց Կովկաս իբրեւ գերասանուհի, իսկ Ֆելչեկեան Վարդիթեր շուտ մեկնեցաւ Կովկասէն:

Ուրեմն բաւական չէ տաղանդը, որոշ բախտ մըն ալ անհրաժեշտ է կուռքը ըլլալու համար: Սիրանոյշ ունեցաւ այդ բախտը:

Սիրանոյշ ունեցած է գինջը քննադատողներ ալ:

Երբ Գոլտոյ մէջ «Համէթ» ներկայացուց, շատ լաւ կը յիշեմ, գինջը մինչեւ անգամ «Սառա Պէրնարի կապիկը» անուանող գանուեցաւ, հրապարակով: Սակայն, մենք ի՛նչ ալ մտածենք իր մասին, ուրիշներ ի՛նչ ալ խորհին ու խօսին, զրեն կամ քննադատեն՝ մէ՛կ բան բացարձակ է.— Սիրանոյշ կուռք մըն է: Մեր բոլոր գերասանուհիներուն մէջ Սիրանոյշն է, որ խորհրդանշան մը եղաւ: Այսօր, մեր ժողովուրդի բերին ու բանականութեան մէջ, Սիրանոյշ զիխարի, զարգալիլ ու բարձրագիւր անուն մըն է: Ձինքը տեսնողներուն եւ չտեսնողներուն համար հաստարապէս հմայք մը: Համբաւ մը, հուշակէս մըն է:



Տիկին Ֆելիկեան Հետաքրքրութեամբ հարցուց.

— Վերջապէս, Ի՞նչպիսի մի դերասան է ճիշդ տեսլով, այդ ձեռք Փափազեանը...

— Աստուած, երկինքի մէջ, իր սեպակահան թռչողներին համար, ստեղծեր է Հերոսի դեր խաղացող դերասան մը: Երբ Աստուած իրեն համար կը ըստեղծէ դերասան մը, շատ բնական է որ անոր կուտայ հասակ, մազ, ճակատ, աչք, քիթ, բերան, կազմ, ամէնէն զեղեցիկ տեսակէն: Կուտայ նաև այլ ձրքեր, ներդաշնակ ու շնորհալի շարժումներ, ձայն, խօսելու դիւրութիւն եւ երաժշտութիւն: Ուրիշ շնորհներ ալ՝ միտք, արիւն, վերջապէս հանճար: Ու արկածի մը Հետեւանքով՝ մասնաւոր հոգածութեամբ եւ անատածեանութեամբ շինուած այդ արտակարգ արեւտադէտը երկինքէն ինկեր է վար, մէք աշխարհին վրայ, մէք ազգին մէջ, սա զէշ շրջանին: Այդ դերասանն է ահա Փափազեան Վահրամը:

ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱԶԵԱՆ

Տիկին Ֆելիկեանի զէմքին վրայ ծագեցաւ թերահաւատութեան ժպիտ մը:

Եւ վերջապէս, Վահրամ վերադարձաւ Պոլիս ու Բերայի մէջ բեմադրուեցաւ «Համէթ»-ը: Տիկին Ֆելիկեանն ու Կոստանի մը մէջ էինք: Բացուեցաւ վարադոյրը: Եւ երեցաւ երեւոյթ մը. երաժշտութիւն մարմնացեալ: Համէթ-Փափազեանը խորունկ սուգի սեւերուն մէջ, տակաւին լուսութեան սահուն կղզեակի մը մէջ, համակ շնորհ, խոհուն ու խորհրդաւոր. եւ հասակ, եւ համբոյր, օծուն իմաստութեամբ.

«Փոքր ինչ աւելի քան ազգական, նուազ քան որդի...»:

Իր միակ խօսքով արդէն լեցուեցաւ բեմը, յորդեցաւ թատրոնը, Հոգիներն ալ հիացումով: Աչերը լի էին ազնուական վիշտով, լի ասպետական սրտմտութեամբ, լի սիրով, հուրով մերթ, մերթ Հետաքրքրութեամբ: Ենորհաբաշխ շարժումները, բնականին բովանդակ բանաստեղծութեամբ յղուած ու կատարելագործուած: Եւ ձայն մը թաւ, ջերմօրէն թաւալուն ու թեւածող, ձայն մը՝ որ մաքերն ու մարմինները կ'առնէ իր սաք տաղանդին աղեղին մէջ: Ասպետի ու իմաստունի ձայն, կատափարուած ներքնարեակ աստուծոյ մը կողմէ:

Վարադոյրը իջաւ:

Երբ սրահին մէջ դադրեցաւ երկար ու խանդավառ ժխորը ծափերու, հարցուցի.

— Տիկին, Ի՞նչպէս դուք...

— Ինչ որ ասում էիք դու Փափազեանի մասին՝ քիչ էր: Սրա միայն աչերը՝ զոռասուն դերասան արժեն:

Այո, Հեթանոս աստուած մըն էր Փափազեանը, Ապողոն մը, որ Ողիմպոսէն իջած վար, կ'ընէր դերասանութիւն:

Վ. ՖԷԼԷԿՍԱՆ

Վարդիթեր Ֆելէկեանի խաղարկութիւնը ինքնացուցարկութիւն մը չէր, այլ վերստեղծումը, կենդանութիւնը դերին, իր անձնական, իր յուսթի ու հանճարեղ հողերուն վրայ: Եւ ի՞նչ այլազանութիւն մէկ դերէն միւրը: Կարելի՞ էր դռնել դոյն նմանութիւն մը Մարկիթ Կոթիէին ու Մեղէային մէջ: Ուրիշ կին էր Հրէուհիին եւ բոլորովին տարբեր կին՝ Գլարային («Դարձողացեալ») մէջ: Անյայտ կնոջ, Ռոզի (Արլէզիէն), Կրուչինայի («Անմեղ մեղաւորներ») եւ Քոյր Թէրէզայի մէջ կը յայտնուէր մեծապէս զգալի տարբերութիւններով: Սակայն, բոլորին մէջ ալ հաւասարապէս կը գաւթանար ու գեղարուեստական անխառն վայելքներ կ'ընծայէր իրբեւ ճշմարիտ, բարձրագոյն արուեստագիտուհի:

Իր խաղարկութեան ընթացքին, սրահը կը ջերմանար իր հոգեկան ելիկորականութիւնով: Իր խաղը այնքան ուժգին էր, այնքան շնորհալից եւ տպաւորիչ, որ բեմին վերայ գտնուող խաղընկերը մերթ կը կարծէր, թէ կատարուածը խաղ ու խարկանք մը չէ, այլ իրականութիւն մը, թէ բեմին վրայ դրուած դուռէն յայնկոյս կը շարունակուի տեսարանը եւ տրամբ: Իրականութեան սիւները կը կանգնէին ու խաղը կ'ըլլար կեանք, քանզի իր ապրումը խոր էր եւ խոռովիչ ու հաղորդական, քանզի իր ձայնը կու գար տառապանքին քաղցրացեալ բովէն, քանզի կը խօսէր նաեւ շրթներով եւ աչերով, ինչպէս նաեւ փոքր շարժումներով ու լուսթիւններով:

Մենք, բարդ, բարձր դերերուն մէջ կը մտնէր, կը մխրճուէր, բոլորանուէր հոգիով, պատասխանատուութեան գիտակցութեամբ, վեր բռնած իր արժանապատուութիւնը, հեղհեղ խորացը-



նելով իր ապրումը եւ տուտանքը: Սակայն, այդ դերերուն մէջ կը մտնէր, աւելի ճիշդը կը սահէր, տուտնց ճիգի, նոյնիսկ առանց մեծ տքնութեան, ասակաւին առանց մանրակրկիտ ուսումնասիրութեան, նաեւ առանց սատանայական սխալագործութեան: Կ'ընթանար բընական ճամբով մը, որ իրն էր, կ'ընթանար դիրքութեամբ մը, եւ խորխորատին խորշերը զաղտնիք չունէին իրեն համար: Եւ կը յայտնուէին իր շնորհալի ինքնատպութիւնները: Պայծառատեսութեան ակնարկ մը բաւական էր կարգաւոր վիճերուն մէջ գտնուող մատենը գերին հոգեբանութեան: Անոր համար թափանցիկ էին թատերախաղերուն անձերուն եւ արարներուն խաւարներն ու մշուշները: Կը թեւէր հոգիներու քառսին մէջ, քանզի լոյսը իր հետ ունէր. ու կը յայտնուէր բեմին վրայ, իր շնորհներէն բարձրացած լուսապսակը գլխուն վրայ:

Երխասարդուհի դերերէն կրցաւ անցնիլ մայրական դերերուն: Այդ յաղթական անցըր մեծ ապացոյց մըն էր իր տաղանդին խորութեան, բարձրութեան, հարստութեան եւ ճշմարտութեան:

Եթէ Ձեր պերն մեհեանին վրայ կայծակը չիչնէր
իմ տենչավառ հոգիիս արտօրայֆիմ մէջ վայրի,
Դուք կրնայիք Ձեր լոյսին տեղալ տարափը բարի,
Դուք կրնայիք դեռ տեսիլ, լուսացնցա՛ւք երազներ :

Առաւօտ մը չարաչար կործանեցաք դուք ընդվայր...
Յարձակեցան Ձեր վրայ դրժնէ կըրքեր ամեհի,
Խողխողեցին Ձեզ... Եղաւ աստեղատունն ամայի
եւ իմ հոգւոյս վրայ եղաւ ցանկութեան մէզը խաւար :

Այս երկու բանաստեղծութիւններէն առաջինը մենք ժամանակին կարգացած էինք Պուրբէշի «Նաւասարդ»-ին մէջ եւ Հասարակութեան Վեհեանքին (1914) առջնորդը մեզ հետեւեալն էր արձագանգութիւններուն շարժիչ հեռու ձգած էր մեր յիշողութեան մէջ :
Երկրորդը, որ լոյս տեսաւ «Անդաւանան» պարբերականի մէջ, յայտնաւորէր առաջինն տարբերակն է, բայց առաջինին պայծառութիւնը շուտ, ընդհանրապէս, տարածուէր ըստ սովորուածի : Մենեանս ամառը բնական ձեռք պատմութեան մէջ յեղափոխական անկիւնազարմ մը կազմեց եւ շատ արձագանգեցան է, որ յեղափոխական տարբերակէր Շուշանեանը ուղղակի անար նախքան ըլլալ էր հեշտակը :
«Անդաւանան» ուրիշ՝ մեզ ձգած է որչեօք երկրորդը : Առաջինն առաջին տարբերակն է արդեօք երկրորդը : Հետաքրքրական է իմանալ :

Հազար գեղօն Ձեր կորած արքայութեան ի պատիւ,
Դահլիճներուն պերճափայլ, գանոյքներուն ոսկեշող...
Ձեր փափկութեան, Ձեր լոյսին, Ձեր պերճամբին անբոօզ :

Աւ՛ղ, աւ՛ղ կը տիրեն արդ աստուածներ անպատիւ...
Ու Ձեր փոխան մեհեանին մէջ կը դառնան լըկտի պար
Ցանկութիւններ ամբարիշտ — ստատաններ դիւահար — :

ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

(«Նաւասարդ», 1924, №. պրակ, էջ՝ 270)

Եթէ մեր պերն շէմֆիմ վրայ դաժան աղէտը չիչնէր,
Եթէ պարտեզը մնար կուսափքիք, ծլարձակ, —
Դուք կրնայիք դեռ բացուիլ ծաղիկներով ակէ ակ,
Դուք կրնայիք դեռ շողալ, լուսացնցուք երազներ :

Առաւօտ մը չարաբաստ՝ կործանեցաք դուք ընդվայր,
Յարձակեցան մեր վրայ խարդախ կրքեր քաղքենի,
Տապալեցին, հրաներ, մեր սէգ պալատն արքենի,
Ահարեցին մեզ այլուր՝ ծիւրու պէս հողմավար :

Ջուր են վանկերն այս տկար՝ մեր հին փառքին ի պատիւ,
Ձեր լոյսերուն հողմածուփ, անհետ կորած, ոսկեշող՝
Ձեր փափկութեան, մեր հիւսքին, մեր պերճամբին անբոօզ :

Աւ՛ղ, աւ՛ղ, կը տիրեն արդ աստուածներ անպատիւ...
Ու մեր փոխան պալատին մէջ կը դառնան լըկտի պար,
Ցանկութիւններ ամբարիշտ, — այծամարդեր դիւահար :

ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

(«Անդաւանան», 1969, 18)

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

«Գ. ՄԵԼԻՏԻՆԵՑԻ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ»-ԷՆ արժանացած

ՆՇԱՆ ՊԷՇԻԿՔԱՆԵԼԵԱՆԻ

«ԹԱՏԵՐԱԿԱՆ ԴԵՄՔԵՐ» Ը

Ընտիր քույր, պատկերագրող, մաֆուր տպագրութիւն, 1150 մեծադիր էջ

Գին՝ 15 Լ. Ռսկի

ԱՐՏԱՍՍՂՄԱՆ՝ 5 Տոլար

Ստանալու համար դիմել՝ «Բագին»-ի եւ «Ազգակ»-ի խմբագրատուններում,
իմչպէս նաեւ Կիլիկիոյ Կաթողիկոսարանի գրախանութիւն:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏՈՑԱՆՔ

ԱԳՐՈՒՄՆԵՐ (Հրատարակագրութիւն), Գ. Մելիտինեցի, Պէյրութ, 1969

ՄԱՏԱՆԻՆԵՐ (Պատմութիւններ), Սարգիս Վահագն, Պէյրութ, 1970

ՄԱՐՄԻՆ ԵՒ ԱՐԻՒՆ (Բանաստեղծութիւն), Կ. Արմէնեան, Պէյրութ, 1970

Տպարան
ՀԱՄԱԳԻՍՅՈՒՆ

ՏՈՒՐՈՒՆ ԲՈՒՆՏԵՐԵՆ

ԼԵՐԱՆԵՆ	22 Լ. 00ԳԵ
ՈՐՏՈՒՈՒՄԵՆ	8 ՏՈՒՐՈՒ
ՎԵՏԻՂԱՆՈՒՆ	2 Լ. 00ԳԵ



Վարչութեան Խորհուրդը -
Գ. ՏԱՏՈՒՆԻ
Rue Selim Boustani,
Beyrouth - Liban